

Հավատարիմ մնալով ԱՀՌԾ մշակման և իրականացման գործընթացի քափանցիկության և հրապարակայնության ապահովման սկզբունքին՝ ԱՀՌԾ աշխատանքային խումբը շարունակաբար իրազեկում և հաշվետվություն է ներկայացնում ԱՀՌԾ շրջանակում իրականացվող աշխատանքների և դրանց վերաբերյալ հանրության, ինչպես նաև ՁԼՄ-ներում ձևավորված արձագանքների և հնչած կարծիքների մասին:

Սույն հրապարակմամբ ձեր ուշադրությանն են ներկայացվում ԱՀՌԾ վերանայման մասնակցային գործընթացի հանրային իրազեկման ծրագրի շրջանակում իրականացված քննարկումների վերաբերյալ մամուլում տեղ գտած հրապարակումներ, վերլուծություններ, ինչպես նաև մասնագիտական և հանրային քննարկումների ընթացքում վեր հանված խնդիրներ և առաջարկություններ:

ԱՀՌԾ վերանայման շրջանակում ներկայացված առաջարկությունները և դիտողությունները չեն սահմանափակվում սույն հրապարակմամբ:

Առկա են նաև իրականացված քննարկումների և հանդիպումների ընթացքում ներկայացված կարծիքների մանրամասն արձանագրություններ, ստացվում են բազմաթիվ գրավոր առաջարկություններ և հեռախոսազանգեր:

Էլեկտրոնային կայքի և փոստի միջոցով ձևավորվել է ակտիվ երկխոսություն հանրության և ԱՀՌԾ իրականացման համար պատասխանատու կառույցների միջև:

Առաջիկայում ևս մենք գտնվելու ենք ԱՀՌԾ վերանայման մասնակցային գործընթացի ակտիվ փուլում և ակնկալում ենք բոլոր շահագիտվող կողմերի եռանդուն մասնակցությունը: ԱՀՌԾ աշխատանքային խումբը կրկին վստահեցնում է, որ գործընթացը բաց է բոլոր կառուցողական առաջարկությունների և դիտողությունների համար:

*ԱՀՌԾ աշխատանքային խումբ.*

*Երևան, Մելիք-Աղամյան 1, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն:*

*Հեռախոս՝ 595-334, էլ. փոստ՝ [info@PRSP.am](mailto:info@PRSP.am), Վեբ կայք՝ [www.prsp.am](http://www.prsp.am)*

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**Սեկնարկել է ԱՅՈՒՑ վերանայման գործընթացը**  
 «Հայաստանի Հանրապետություն», «Ազգ», «Հայոց Աշխարհ», 11 Հոկտեմբերի 2006թ.....3

**Մասնակցային գործընթաց. ԱՅՈՒՑ-ն վերանայվում է. ինչո՞ւ**  
 «Առավոտ», 8 Նոյեմբերի 2006թ.....4

**Աղքատության և անհավասարության հարցերը հենց ԱՅՈՒՑ-ի վերանայման գործընթացի հիմնաքարերն են**  
 «Իրավունք», 28 Նոյեմբերի 2006թ.....7

**ԱՅՈՒՑ վերանայման գործընթաց. արդյունքներ, ազդակներ, սկզբունքներ**  
 «Հայաստանի Հանրապետություն», «Հայկական ժամանակ», 23 Նոյեմբերի 2006թ.....10

**ՓՄՁ-ն՝ ԱՅՈՒՑ-ի գերակա ուղղություն. Ոլորտում նկատելի են շոշափելի առաջխաղացումներ**  
 «Հայաստանի Հանրապետություն», 7 Դեկտեմբերի 2006թ.....13

**Ֆինանսական աջակցություն**  
 «Փակագիծ», 1 Դեկտեմբերի 2006թ.....17

**ԱՅՈՒՑ վերանայման գործընթաց**  
 «Հայաստանի Հանրապետություն», 9 Նոյեմբերի 2006թ.....18

**Ի՞նչ սպասեն աղքատության ծրագրից հաշմանդամները**  
 «Ազգ», 9 Նոյեմբերի 2006թ.....19

**Հերթական քննարկում՝ հաշմանդամների թեմայով**  
 «168 ժամ», 10 Նոյեմբերի 2006թ.....21

**ԱՅՈՒՑ-ն՝ ըստ ոլորտների. Ծրագիրը պետք է արդյունավետ լինի բոլորի համար**  
 «Հայաստանի Հանրապետություն», 2 Դեկտեմբերի 2006թ.....22

**Աղքատության սահմանագիծը պետք է համապատասխանի իրական աղքատության սահմանմանը**  
 «Ազգ», 7 Դեկտեմբերի 2006թ.....25

**Регионы ждут программы**  
 «Գոլոս Արմենիի», 14 Դեկտեմբերի 2006թ.....26

**ԱՅՈՒՑ-ն վերանայվում է. Առողջությունն, իրոք, թանկ արժե**  
 «Հայաստանի Հանրապետություն», 1 Դեկտեմբերի 2006թ.....28

**Ի՞նչ են հուշում «ներքեները» «վերեներին».**  
**Ֆինանսական միջոցների մատչելիությունը՝ գերխնդիր**  
 «Հայաստանի Հանրապետություն», 30 Նոյեմբերի 2006թ.....31

**Իրականացվում է զբաղվածության ամենամյա ծրագիր**  
 «Հայաստանի Հանրապետություն», 30 Նոյեմբերի 2006թ.....33

**Էժան ու կարճաժամկետ վարկային նոր ռեսուրս գյուղերին**  
 «Ազգ», 23 Նոյեմբերի 2006թ.....35

**Ի՞նչ թոշակ կստանանք 20 տարի անց**  
 «Ազգ», 14 Դեկտեմբերի 2006թ.....36

**Ո՞վ է միանու և ինչպե՞ս ԱՅՈՒՑ վերանայմանը.....**39

**Բուժմիավորումների ղեկավարները՝ նոր մենաշնորհատերեր**  
 «Ազգ», 21 Դեկտեմբերի 2006թ.....40

**Միայն նվազագույն նյութական պահանջումների բավարարումը չի բերելու մարդու սոցիալական հնարավորությունների մեծացման և աղքատության վերացմանը**  
 Միժի, 1 Դեկտեմբերի 2006թ.....42

**Ներկայացվեցին ԱՅՈՒՑ շրջանակում իրականացված եւ նախատեսվող բարեփոխումները**  
 «Հայաստանի Հանրապետություն», 19 Հոկտեմբերի 2006թ.....44

**Մարզային քննարկումներ.....**45

**ՓՄՁ զարգացման խոչընդոտներն աղքատության հաղթահարման համատեքստում**  
 Հանրային քննարկումների անփոփում.....48

**ԱՅՈՒՑ վերանայման մասնակցային գործընթացի կազմակերպման շրջանակներում իրականացված բնապահպանության ոլորտի մասնագիտական քննարկումներ.....**50



11 Հոկտեմբերի 2006թ.

# ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ԱՀՌԾ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը, համագործակցելով շահագրգիռ բոլոր կողմերի հետ, ձեռնամուխ է եղել Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի վերանայման գործընթացին: ԱՀՌԾ վերանայման գործընթացի կազմակերպման եւ իրականացման սկզբունքները սույն թվականի մայիսի 19-ի հերթական նիստում հաստատվել են ԱՀՌԾ համակարգող խորհրդի կողմից, որը կայացել է ՀՀ վարչապետի նախագահությամբ:

Ինչպես հայտնեցին ԱՀՌԾ աշխատանքային խմբից, արդեն իսկ շահագրգիռ տարբեր կողմերի հետ ԱՀՌԾ աշխատանքային խմբի քննարկումների արդյունքում հստակեցվել են կազմակերպվելիք հանրային եւ մասնագիտական քննարկումների թեմաներն ու ժամանակացույցը: Ելնելով նշված ժամանակացույցից՝ սույն թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին տեղի է ունեցել շուրջ 10 քննարկում, ինչպես հանրապետական, այնպես էլ մարզային մակարդակներում:

Մարզային քննարկումների համար առանձնացված յոթ թեմաներից այժմ՝ «Հայաստանի փոքր եւ միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի հետ համատեղ, քննարկումներ են կազմակերպվում հետեւյալ հիմնախնդիրների շուրջ՝ «Գյուղում ոչ գյուղատնտեսական զբաղվածության հնարավորությունների ստեղծման հիմնախնդիրներ», «Փոքր եւ միջին բիզնեսի զարգացման խնդիրներ եւ հեռանկարներ» եւ «Զբաղվածության ծրագրերի հասցեականություն եւ արդյունավետություն»:

Քննարկումներին մասնակցում են ԱՀՌԾ աշխատանքային խմբի, համապատասխան գերատեսչությունների, մարզպետարանների եւ տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային եւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպես նաեւ գործարարներ եւ գործատուներ:

Հոկտեմբերի 9-ին մարզային հերթական հանդիպումը կազմակերպվեց Լոռու մարզի Ստեփանավան քաղաքում: Հանդիպման մասնակիցներն իրենց տեսակետները ներկայացրին ԱՀՌԾ աշխատանքային խմբի ղեկավարին (ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ս. Ղարայանին) եւ աշխատանքային խմբի մյուս անդամներին:

Մասնավորապես, հանդիպման մասնակիցների կողմից՝ որպես ՓՄՁ զարգացման հիմնական խնդիրներ, նշվեցին հակամենաշնորհային քաղաքականության եւ հավասար մրցակցության ապահովման հարցերը: Առանձնացվեցին նաեւ ֆինանսական ռեսուրսների մատչելիության, հատկապես՝ դրանց տոկոսադրույքների եւ ժամկետայության հետ կապված խնդիրները: Հանդիպման մասնակիցները նշեցին նաեւ, որ մարզերում սահմանափակ թվով բանկերի մասնաճյուղերի առկայության պարագայում մրցակցությունը սահմանափակ է եւ չի նպաստում վարկերի տրամադրման ընթացակարգերի պարզեցմանն ու պայմանների բարելավմանը:

Մարզում իրականացվող զբաղվածության ծրագրերի քննարկման ընթացքում մասնակիցները կարելուեցին ուղորտը կարգավորող նոր օրենքով սահմանված զբաղվածության ակտիվ ծրագրերի շրջանակներում իրականացվելիք ծրագրերը, մասնավորապես աշխատաշուկայում խոցելի համարվող խմբերի համար աշխատավարձի մասնակի փոխհատուցման ծրագիրը: Միաժամանակ կարելուվեց վարձատրվող հասարակական աշխատանքների ծրագրի իրականացման մեխանիզմների վերանայման խնդիրը, հաշվի առնելով, որ այդ ծրագրերի արդյունավետությունը բավականին անկում է ապրել վերջին երկու տարիների ընթացքում:

Հանդիպման արդյունքներով համաձայնություն ձեռք բերվեց ամփոփիչ քննարկում կազմակերպել Երեւանում, որի հիման վրա կծեւակերպվեն ԱՀՌԾ վերանայված տարբերակում սահմանվելիք քաղաքականության ուղղությունները:



8 Նոյեմբերի 2006թ.

# ՄԱՍՆԱԿՅԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՅ.

## ԱՌԾ-ն ՎԵՐԱՆԱՅՎՈՒՄ Է. ԻՆՉՈՐԻ

ՀՀ կառավարությունը, համագործակցելով շահագրգիռ բոլոր կողմերի հետ, ձեռնարկել է Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի վերանայման գործընթացը, որը ներառում է ինչպես մասնագիտական, այնպես էլ հանրային քննարկումներ:

Հասարակական երկխոսության արդյունքում ակնկալվում է վեր հանել աղքատության հաղթահարման տեսանկյունից առավել կարելուր եւ առաջնահերթ լուծում պահանջող խնդիրները, մասնագիտական քննարկումների միջոցով ձեւավորել առաջարկությունների ոլորտային փաթեթը եւ կազմել ԱՌԾ նոր, առավել կենսունակ ծրագրային փաստաթուղթ:

Ինչպես ԱՌԾ նախորդ փաստաթղթի մշակման ժամանակ, ներկայումս նույնպես կիրականացվի հանրության լայն շրջանակների իրազեկման եւ հետադարձ կապի ապահովման լայնամասշտաբ ծրագիր: Մասնավորապես, նախատեսվում է մասնակցային գործընթացի արդյունքում վերանայման խնդիրների եւ դրանց զերակայությունների շուրջ հասարակական համաձայնություն ձեռք բերել:

### ԻՆՉՈՐԻ Է ՎԵՐԱՆԱՅՎՈՒՄ ԱՌԾ-ն

«Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը» ՀՀ կառավարությունը հաստատել է 2003թ. օգոստոսին: Ծրագրի մշակումն ընթացել է բոլոր շահագրգիռ կողմերի՝ պետական կառավարման մարմիններ, մասնավոր հատված, քաղաքացիական հասարակություն, դոնորներ, ակտիվ մասնակցությամբ: Կառավարությունը 2004թ. հունվարին հաստատել է նաեւ ԱՌԾ կատարումն ապահովող 2004-2006թթ. միջոցառումների ցանկը, սահմանելով նաեւ դրանց իրականացման վերաբերյալ տեղեկատվության ներկայացման մեխանիզմը: Տնային տնտեսությունների հետազոտությունների արդյունքները, նախորդ տարիների զարգացումները ցույց են տալիս, որ աղքատության մակարդակը կրճատվել է ավելի արագ տեմպերով, քան ծրագրված էր ԱՌԾ հաստատված սցենարով:

Աղքատության հաղթահարման դրական միտումները պայմանավորված են եղել տնտեսական աճի բարձր ցուցանիշներով եւ եկամուտների բաշխման անհավասարության մեղմացմամբ:

2005-2006-աններին էլ տնտեսության զարգացման

ցուցանիշները հուսադրող են, ինչը եւ հիմնավորում է ԱՌԾ ծրագրային հիմնական ցուցանիշների վերանայման անհրաժեշտությունը:

Միաժամանակ, աղքատության եւ անհավասարության կրճատման դրական միտումներին զուգահեռ, բացահայտվել են խոցելի սոցիալական խմբերի բարեկեցության, տարածքային զարգացման անհամասնություններին վերաբերող եւ այլ խնդիրներ, որոնց հաղթահարման նպատակով կառավարությունը մտադիր է իր առաջիկա ծրագրերում կատարել համապատասխան ճշգրտումներ:

Ծրագրի վերանայման ժամանակ կդիտարկվեն նաեւ սոցիալական ոլորտի, գյուղատնտեսության, մարդկային աղքատության, ԱՌԾ շրջանակներում իրականացվող առանձին ոլորտային քաղաքականությունների վերանայման խնդիրներ, ինչպես նաեւ ԱՌԾ մոնիտորինգի ցուցանիշների համակարգի հայեցակարգման, աղքատության գնահատման բացարձակ եւ պարենային գծերի փոփոխման հարցերը:

### ՄԱՍՆԱԿՅԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՆԵՐԿԱ

#### ԱՌԱՋԱՆԱՅՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

Բնականաբար, համապետական նշանակության այնպիսի խոշոր եւ երկարաժամկետ ծրագիր, ինչպիսին ԱՌԾ-ն է, հնարավոր չէր կյանքի կոչել առանց հասարակության լայն խավերի մասնակցության:

ԱՌԾ մշակման մասնակցային գործընթացը սկսվեց վերելից: Փորձագետները դա բացատրում էին նրանով, որ որոշում ընդունողը կառավարությունն է եւ ինքը պետք է լինի նախաձեռնողը, ինքը պետք է պատրաստ լինի հասարակության հետ երկխոսության:

Երկխոսությունը կայացավ եւ ԱՌԾ մշակման ընթացքում իրականացված մասնակցային գործընթացը միջազգային կազմակերպությունների կողմից եւս բարձր գնահատվեց եւ համարվեց պետական քաղաքականության մշակմանը տարբեր շահագրգիռ կողմերի ընդգրկման լավ օրինակ:

ԱՌԾ վերանայման ներկա փուլում կառավարությունը որդեգրել է «ներքելից վերել» սկզբունքը, այսինքն՝ վերանայման առաջարկությունները կստացվեն հասարակությունից եւ կուղղվեն դեպի որոշում կայացնողները:

Կարելորդվել է նաև մարզային եւ տեղական ինքնակառավարման մարմինների դերը, ինչը նպատակ ունի տեղական մակարդակով վեր հանել աղքատության պատկերը, զտնել նաև այն տեղական մարմինների միջոցով հաղթահարելու ուղիները:

Այդ նպատակով ԱՅԴՎ վերանայման քննարկումներն անցկացվում են մարզային եւ հանրապետական մակարդակներով եւ ներառում են ինչպես մասնագիտական, այնպես էլ հանրային քննարկումներ: Բացահայտվում են տեղական առանձնահատկությունները, հանրային քննարկումների արդյունքում հավաքագրվում են նոր գաղափարներ եւ մոտեցումներ, որոնք մասնագիտական քննարկումների միջոցով խմբավորվում են արդեն որպես նպատակներ եւ գերակայություններ:

ԱՅԴՎ աշխատանքային խումբը սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսների ընթացքում շահագրգիռ կողմերի մասնակցությամբ հանրապետական եւ մարզային մակարդակներում կազմակերպել է ավելի քան 20 համոդիակում-քննարկում:

**Դիտարկում 1.**

**• Մասնագիտական քննարկումներ.**

Մասնագիտական քննարկումների մեկնարկը սեւեռված էր ԱՅԴՎ հիմնական ցուցանիշների նպատակադրումների, եկամտային եւ մարդկային աղքատության, ժողովրդագրական եւ տարածաշրջանային անհամամասնությունների վրա:

Քննարկումները ներառում են 40-ից ավելի առաջարկություններ. նվազագույն սպառողական զանբյուրի կալորիաների վերահաշվարկ, աշխատանքային միգրացիոն հոսքերի հաշվառման մեթոդաբանություն, պետական ծառայության համակարգում կանանց տեսակարար կշռի ցուցանիշի ներառում, գյուղական համայնքներում ինտերնետ կապի մատչելիություն, կրթության եւ առողջապահության որակական ցուցանիշներ, ֆիզիկական խնդիրներ ունեցող մարդկանց համար հանրային ծառայությունների մատչելիություն, առողջապահական ծառայությունների մատչելիություն եւ հասանելիություն, քաղաքի եւ գյուղերի միջև անհամամասնությունների կրճատում, քաղաքացիական մեկուսացվածություն եւ բազմաթիվ այլ խնդիրներ, որոնք փորձագետների կողմից դիտարկվելուց հետո իրենց տեղը կգտնեն վերանայվող փաստաթղթում:

Առողջապահության ծառայությունների որակի ապահովման եւ դեղամիջոցների տնտեսական մատչելիության հիմնախնդիրներն առանձին մասնագիտական քննարկման թեմա դարձան ոլորտի պատասխանատուների, հասարակական կազմակերպությունների եւ ՋԼՄ-ների ներկայացուցիչների մասնակցությամբ:

ՀՀ առողջապահության նախարարության առաջնային բուժօգնության բաժնի պետ Ռուզաննա Յուզբաշյանը վստահեցնում է, որ նախարարությունը հիմք է ընդունել «Եթե բժշկական սպասարկում, ապա՝ որակյալ» սկզբունքը:

Սակայն, ԱՅԴՎ մարդու իրավունքների խմբի փորձագետ Հասմիկ Ասլանյանի կարծիքով, բնակչությունը հաճախ դժգոհում է պետպատվերի շրջանակներում մատուցվող ծառայությունից, բուժօժանությունների ֆինանսավորումը եւ մատուցվող ծառայության որակը համարժեք չեն, խնդրահարույց է որակի վերահսկողությունը:

Համաշխարհային բանկի փորձագետ Սուսաննա Հայրապետյանի համոզմամբ՝ որակի վերահսկողության խնդիրը անհրաժեշտ է ներառել վերանայվող ԱՅԴՎ-ում որպես մոնիտորինգի ցուցանիշ: ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի փոխնախարար Արծվիկ Մինասյանը գտնում է, որ առողջապահության որակական եւ քանակական ցուցանիշները պետք է ոչ թե հակադրվեն, այլ համադրելի լինեն: Նրա կարծիքով սոցիալական ոլորտը պետք է դիտել մեկ ամբողջություն եւ ԱՅԴՎ-ում հստակ պետք է երեւա կապը առողջապահության եւ սոցիալական ապահովության միջև:

Մասնագիտական խորացված քննարկումներ են կազմակերպվել նաև կրթության եւ բնապահպանության խնդիրների վերաբերյալ, ինչպես նաև կազմակերպվել է հանրային քննարկում՝ դատախիրավական բարեփոխումների վերաբերյալ:

**Դիտարկում 2.**

**• Մարզային քննարկումներ.**

*Ստեփանավան*

Գյուղում ոչ գյուղատնտեսական զբաղվածության հնարավորությունների ստեղծման, փոքր ու միջին բիզնեսի զարգացման, զբաղվածության ծրագրերի հասցեականության եւ արդյունավետության բարձրացման հարցերը պատահական չեն ընտրվել: Ֆինանսական ռեսուրսների անմատչելիությունը, բարձր տոկոսադրույքներն ու ժամկետայնությունը, բանկերի մասնաճյուղերի սահմանափակությունը եւ փոքր մրցակցությունը, բանկային երաշխիքների հիմնախնդիրը էապես խոչընդոտում են ՓՄՁ զարգացմանը, զբաղվածության ծրագրերի իրականացմանը: Լուռու մարզի տարածքային զբաղվածության կենտրոնի տնօրեն Արա Աբրահամյանն առաջարկում է որոշակի արտոնություններ սահմանել սկսնակ գործարարների համար, օժանդակել սեփական գործ նախաձեռնողներին, բիզնես ուսուցում կազմակերպել: Մարզի աշխատաշուկայի վերլուծությունը վկայում է, որ փոքր բիզնեսի խթանումը, մասնավորապես աշխատավարձի մասնակի փոխհատուցման ծրագիրը հնարավորություն է ստեղծում խոցելի խմբերից որոշակի թվով մարդկանց ապահովել աշխատանքով:

Սպիտակցի գործարար Արթուր Դանիելյանն այլ կարծիքի է. «Դուք օգնում եք գործազուրկին, ոչ թե գործարարին: Ավելի արդյունավետ կլինի, եթե արտոնություններ տրվեն գործարարին. արտոնյալ վարկեր: Եթե գործարարն ընդլայնի իր արտադրությունը, բնականաբար կստեղծվեն նոր աշխատատեղեր»:

Գյուղում ոչ գյուղատնտեսական զբաղվածության

խնդիրը քննարկման մասնակիցների կողմից միանշանակ չի ընդունվում: Գործարարները որոշակի արտոնությունների ակնկալությամբ պատրաստ են արտադրություն կազմակերպել:

Հովածորի գյուղապետ Էդվարդ Մելիքսեթյանը եւս դեմ չէ, որ գյուղում կաթի արտադրություն, կաշվի վերամշակում կամ մթերում կազմակերպեն, գյուղատնտեսությանը զարկ տան, սակայն դժգոհ է, որ դրսից գյուղում բիզնես կազմակերպողները, օգտվելով համայնքի ենթակառուցվածքներից, հարկերը մուծում են քաղաքային համայնքների բյուջե:

Այլ համայնքների ղեկավարներն էլ մտահոգված են, որ հողը դժվարությամբ մշակող գյուղացին կարող է գայթակղվել ոչ գյուղատնտեսական արտադրությամբ եւ թողնել հողը: Ուստի գտնում են, որ գյուղում ոչ գյուղատնտեսական զբաղվածությունը պետք է նպաստի բուն գյուղատնտեսական գործունեությանը. վերամշակում, մթերում եւ այլն: Գյուղի հոգսով մտահոգ մարդիկ կարեւորում են նաեւ հավասար մրցակցության խնդիրը: Գյուղացին, եթե ցածր տոկոսադրույքներով արտոնյալ վարկեր չստանա, չի կարող մրցակցել խոշոր արտադրողների հետ:

ԱՐՌԾ աշխատանքային խմբի ղեկավար, ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի փոխնախարար Սուրեն Ղարայանը, ամփոփելով քննարկվող հարցը, մատնանշում է 2 հիմնախնդիր, որ պետք է իրականացվի գյուղում ոչ գյուղատնտեսական զբաղվածության հնարավորությունների ստեղծման համար. շուկան մոտեցնել արտադրողին, ապահովել շահեկան վարկավորում:

Քննարկումների ընթացքում արվող բոլոր առաջարկությունները գրանցվում են եւ ներկայացվում փորձագիտական խմբերին՝ համապատասխան եզրակացությունների համար: Ամփոփիչ քննարկումների արդյունքում դրանք կներառվեն ԱՐՌԾ քաղաքականության ուղղություններում:

\* \* \*

ԱՐՌԾ վերանայման գործընթացը բաց է բոլոր մասնակիցների համար:

ԱՐՌԾ աշխատանքային խումբն ակնկալում է, որ կարծիքներ, առաջարկություններ, դիտարկումներ կստացվեն նաեւ նրանցից, ովքեր չեն մասնակցել հանրային քննարկումներին եւ շահագրգիռ են, որպեսզի մշակվի իրատեսական եւ շոշափելի արդյունքներ ունեցող ռազմավարական ծրագիր:

ԱՐՌԾ աշխատանքային խմբի հասցեն է՝

**Երևան, Մելիք-Աղամյան 1, ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարություն:**  
**Հեռախոս՝ 595-334:**  
**Էլ. փոստ՝ info@PRSP.am:**

ԱՐՌԾ աշխատանքային խումբը երկխոսության է հրավիրում նաեւ [www.PRSP.am](http://www.PRSP.am) կայքէջի միջոցով:

**Տնտեսական բարեփոխումների վերլուծական-տեղեկատվական կենտրոն**



7, 9 Նոյեմբերի 2006թ.

### Աղբյուրությունը նվաճել է

Ազգային վիճառայության 2005-ի համալիր հետազոտության նախնական տվյալներով՝ Հայաստանի բնակչության 29,8%-ն աղքատ է, 4,6%-ը՝ շատ աղքատ: Եթե այս տվյալները համեմատենք նախորդ տարվա հետ, աղքատությունը մեր երկրում նվազել է, 2004-ին աղքատ է եղել բնակչության 34,6%-ը, շատ աղքատ՝ 6,4%-ը:







28 Նոյեմբերի 2006թ.

# ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ ՀԵՆՑ ԱՀՌԾ-Ի ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՀԻՄՆԱՔԱՐՆ ԵՆ

ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի փոխնախարար, աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի աշխատանքային խմբի ղեկավար Սուրեն Կարայանին ուղղված հարցերը հիմնականում առնչվում էին աղքատության հաղթահարման հիմնախնդրին:

## ՉԱՆԿԱԼԻ Է, ՈՐ 2-3 ՏԱՐԻՆ ՄԵԿ ԱՅՈՒ ԾՐԱԳԻՐԸ ՎԵՐԱՆԱՅԵՆ

- Որքան հասկանում եմ, Դուք աղքատության հաղթահարման ծրագիրը վերանայելու խնդիր եք դրել: Ի՞նչ կարիք կա վերանայելու մի բան, որը, Ձեր իսկ ասելով, հաջողությամբ կենսագործվում է (Թորգոմյան, նախկին ուսուցիչ):

- Ես կուզեմայի նշել, որ ի սկզբանե նախատեսված էր, որ աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը (ԱՀՌԾ) պետք է լինի երկրի զարգացման գործընթացներին համապատասխանող դինամիկ գործընթաց: Այսինքն, իրականացումը պետք է ընթանա տնտեսական զարգացման գործընթացներին համապատասխան, փորձի անընդհատ ճշգրտել նպատակադրումները եւ դրանց լուծման եղանակները: Հիմնականում հենց այս պատճառով ԱՀՌԾ-ում ամրագրվեց, որ այս փաստաթուղթը պետք է երկու տարին մեկ վերանայվի: Ընդ որում, դա նաեւ հանրության պահանջն էր: Իսկ երկրորդ հիմնական պատճառն այն է, որ ԱՀՌԾ-ի իրականացման գործընթացում մենք արձանագրել ենք բավականին առաջանցիկ հաջողություններ ծրագրի մշակման ժամանակ կատարված նպատակադրումների համեմատ: Դրան հիմնականում նպաստել է երկրի բարձր տնտեսական աճը եւ առավել սոցիալական ուղղվածություն ունեցող պետական ծախսային քաղաքականությունը: Մյուս կողմից՝ ներկայացված ձեռքբերումների հետ մեկտեղ ԱՀՌԾ իրականացման գործընթացում մենք ունեցել եւ դեռեւս ունենք որոշակի խնդիրներ, որոնք մեր լուծումներ են ակնկալում: Դա նախ եւ առաջ վերաբերում է երկրում տարածքային զարգացման անհամասնություններին, մասնավորապես, Երեւանում եւ նրանից դուրս գտնվող բնակավայրերում առկա տարբերություններին՝ ինչպես սոցիալական, այնպես էլ տնտեսական ակտիվության առումներով: Իրավիճակը հատկապես բարդ է Երեւանից դուրս՝ հանրապետության մյուս բնակավայրերում: Շարունակում է բարձր մնալ նաեւ գյուղական աղքատության մակարդակը: Այդ կապակցությամբ ԱՀՌԾ վերանայման ժամանակ տարածքային քաղաքականության ծրագրային ուղղություններում նախատեսում ենք կատարել համապատասխան ճշգրտումներ:

Գյուղատնտեսության ոլորտում որպես չլուծված խնդիր շարունակում է մնալ գյուղատնտեսության ապահովագրման եւ գյուղացիական տնտեսությունների համար վարկային ռեսուրսների ոչ բավարար մատչելիության հարցը: Չնայած վերջինիս լուծման համար արդեն իսկ ստեղծվել են բավարար հիմքեր: Խոսքս մասնավորապես վերաբերում է Համաշխարհային բանկի եւ «Հազարամյակի մարտահրավերներ» հիմնադրամի հայաստանյան ծրագրերի շրջանակներում գյուղատնտեսական գործունեության վարկավորման համար նախատեսված ֆինանսական միջոցներին: Խնդիր ենք համարում նաեւ ԱՀՌԾ իրականացման մոնիտորինգի եւ գնահատման համակարգի կայացումը: ԱՀՌԾ իրականացման մոնիտորինգի եւ գնահատման կենտրոնակ համակարգի ձեւավորումը հնարավորություն կտա գնահատել ոչ միայն ծրագրի առաջընթացը, կատարել միջազգային համադրումներ, այլ նաեւ կօգնի ճիշտ գնահատել պետական համակարգի գործունեության արդյունավետությունը: Ներկայացված հիմնախնդիրների հետ մեկտեղ կան նաեւ մի շարք այլ միջոցառումների իրականացման եւ ծրագրի ընթացիկ կառավարման խնդիրներ, որոնք առաջիկայում եւս պետք է լուծումներ ստանան:

Այս խնդիրները արձանագրել ենք նաեւ 2004, 2005 թվականի առաջին կիսամյակի հաշվետվությունում: Այսինքն, որպեսզի պարբերաբար, երկրի զարգացմանը զուգընթաց ԱՀՌԾ-ն պահպանի իր իրատեսական բնույթը, ցանկալի է, որ 2-3 տարին մեկ ծրագիրը վերանայենք, եւ դա չկապենք այն հանգամանքի հետ, թե ինչքանով է դա հաջողված, կամ ինչ բացթողումներ ենք ունեցել:

## ԵՐԲ ԶԵՆ ԿՍՐՈՂԱՆՈՒՄ ՎԱՐԿՆ ՍՊՈՇՈՎԵԼ ԳՐԱՎՈՎ

- Գործարար եմ, աշխատում եմ Լոռվա մարզում: Այսօր մարզերում աշխատելը մեծ ջանքեր է պահանջում: Քաղաքի մեծահարուստ գործարարների մրցակցությանը հնարավոր չէ դիմանալ. պայմանները հավասար չեն, ֆինանսական միջոցները մատչելի չեն: Դուք ի՞նչ եք մտածում փոքր ու միջին

**ձեռնարկատերերին օգնելու ուղղությամբ (Բորիս Ասատրյան, Սպիտակ):**

- Երբ ԱՅԻՄ վերանայման շրջանակներում իրականացնում ենք մարզային քննարկումներ, գրեթե բոլոր մարզերում տեղի գործարարների կողմից խոսվում է անհավասար մրցակցային պայմանների, ինչպես նաև ֆինանսական միջոցների մատչելիության հետ կապված խնդիրների մասին: Ես կփորձեմ ներկայացնել, թե այս պահին ինչ հիմնական զարգացումներ ենք տեսնում այդ հարցերի շուրջ, ընդ որում, դա կարող է ամբողջական չլինել, որովհետև մենք դեռ գործընթացի սկզբին ենք, երբ բարձրացված խնդիրների շուրջ իրականացվում են որոշակի քննարկումներ: Բնական է, որ վերջնական լուծումներ կունենանք այդ քննարկումներից հետո: Իսկ հիմա կոնկրետ նշեմ, թե ինչ ենք անում փոքր եւ միջին ձեռնարկատիրությանն աջակցելու համար, որովհետև այս խնդիրը շատ սուր է դրված հենց մարզերում: Ես կասեմ, թե ինչ քաղաքականություն ենք իրականացնում եւ, առհասարակ, ինչ լուծումներ ենք փորձելու տալ այդ խնդիրն աղքատության հաղթահարման ռազմավարության վերանայման ծրագրով: Ներկայումս գործում է փոքր եւ միջին ձեռնարկատիրության աջակցության հիմնադրամը: Այդ հիմնադրամի շրջանակներում ամեն տարի պետական բյուջեով գումարներ ենք նախատեսում փոքր եւ միջին ձեռնարկատիրության աջակցության համար: Այդ գումարների որոշակի մասը ուղղված է վարկային երաշխիքների տրամադրմանը: Երբ փոքր եւ միջին ձեռնարկատերերը մարզերում, գյուղերում որոշակի գործունեություն են իրականացնում, նրանց մոտ վարկի հետ կապված խնդիրներ են առաջանում, այսինքն՝ չեն կարողանում վարկն ապահովել գրավով, եւ այդ դեպքում պետությունը, ըստ էության, երաշխավորում է առետրային բանկերին, գումար է տրամադրում, որպեսզի մարզերի, գյուղերի փոքր եւ միջին ձեռնարկատերերի համար ավելի հասանելի դարձնի վարկային միջոցները: Մենք տարեցտարի այդ գումարները մեծացնում ենք, եւ արդեն 2-րդ տարին է, ինչ նախատեսել ենք այդ ծրագրերն ամբողջովին իրականացել մայրաքաղաքից դուրս: Իսկ եթե խոսենք, թե ԱՅԻՄ շրջանակներում մենք ինչ ենք նախատեսում, ապա այստեղ խնդիրը կարելի է բաժանել մի քանի մասի: Քննարկումները գնում են այն ուղղությամբ, որ մենք կարողանանք ապահովել եւ մշակել այնպիսի քաղաքականություն, որը կդրվի նոր ԱՅԻՄ-ի մեջ եւ որը կնպաստի Երեւանից դուրս գտնվող բոլոր քաղաքներում, գյուղական համայնքներում, փոքր ու միջին ձեռնարկատիրության աջակցության խորացմանը զուգահեռ, զարգացնել համապատասխան ենթակառուցվածքները: Այսինքն, այն բոլոր անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, որոնք կհանգեցնեն նրան, որ երկրի տնտեսական զարգացումները մոտ ապագայում հավասարապես բաշխվեն Երեւանում եւ Երեւանից դուրս: Այսինքն, մեր խնդիրն է լինելու ձեռնարկատիրության զարգացման համար բոլոր անհրաժեշտ նախապայմանների ստեղծումը, ինչպես նաև

փոքր եւ միջին ձեռնարկատիրությանը աջակցելը մարզերում:

**- Որո՞նք են այն խնդիրները, որ գտնվելու են ԱՅԻՄ վերանայման գործընթացի ուշադրության կենտրոնում, եւ ի՞նչ ժամկետներում է նախատեսվում ավարտել այդ գործընթացը:**

- Վերանայման գործընթացը նախատեսում է ԱՅԻՄ նպատակադրումների եւ քաղաքականության ուղղությունների վերանայում եւ ճշգրտում: Վերջինիս իրականացման ընթացքում մենք նախատեսում ենք ակտիվորեն համագործակցել բոլոր շահագրգիռ կողմերի հետ՝ ապահովելով անհրաժեշտ միջավայր քաղաքացիական հասարակության եւ կառավարական մարմինների քննարկումների ու բանակցային գործընթացների համար: ԱՅԻՄ վերանայման գործընթացը նախ եւ առաջ պետք է խարսխվի «ներքեւից վերեւ» սկզբունքի վրա, այսինքն՝ այն կսկսվի ներքեւից՝ հասարակությունից եւ կգնա դեպի որոշում կայացնողները: Ուշադրության կենտրոնում պետք է լինի ԱՅԻՄ մոնիտորինգի եւ գնահատման համակարգի ինստիտուցիոնալացման հիմնախնդիրը՝ ի նկատի ունենալով կառավարական եւ ոչ կառավարական կառույցների կարողությունների հզորացումը: Քանի որ ԱՅԻՄ իրատեսականությունը եւ իրագործման արդյունավետությունը մեծապես կախված են այն բանից, թե որքանով է այն ներառված պետական քաղաքականության գործընթացում եւ որքանով է այն համահունչ կառավարության սոցիալական եւ տնտեսական ծրագրերին, ապա պետք է կարելուրդի ԱՅԻՄ վերանայման եւ միջնաժամկետ ծախսերի ծրագրի ու պետական բյուջեի մշակման գործընթացների ներդաշնակեցումը: Այդ նպատակով նախատեսվում է վերանայված ԱՅԻՄ նախնական տարբերակի մշակման աշխատանքներն ավարտին հասցնել մինչեւ ընթացիկ տարվա վերջը, իսկ ԱՅԻՄ վերանայված փաստաթղթի վերջնական տարբերակի նախապատրաստումը նախատեսվում է ավարտել 2007 թվականի փետրվարին:

**Մոտ 18 մարզային քննարկումներ ենք իրականացրել**

**- Երեւանում ԱՅԻՄ-ի շրջանակներում իսկապես փոփոխություններ կան, իսկ Երեւանից դուրս եղե՞լ եք, ի՞նչ եք մտածում Երեւանի եւ գյուղերի կենսամակարդակի տարբերության մասին (Արսեն Ղազարյան):**

- Ձեր բարձրացրած խնդիրը շատ արդիական է, եւ, ինչպես նշեցի, ԱՅԻՄ վերանայման պատճառներից մեկն էլ դա է: Այդ խնդիրների լուծման նպատակով մենք ԱՅԻՄ վերանայման գործընթացում փորձում ենք մարզերի հետ կապված հարցերը քննարկել հենց մարզերում, որպեսզի դրանց լուծումները ավելի իրատեսական լինեն: Մենք արդեն մոտ 18 մարզային քննարկումներ ենք իրականացրել տարբեր թեմաներով: Մարզային մակարդակում անցկացվող քննարկումների համար



ընտրված են թեմաները, որոնք առավելապես արտահայտում են այն խնդիրները, որոնք առկա են տեղերում կամ մարզային կտրվածքով առավել սուր են արտահայտված: Օրինակ, զբաղվածության ծրագրերը, փոքր եւ միջին ձեռներեցության զարգացման հիմնախնդիրները կամ առողջապահական ծառայությունների ֆիզիկական մատչելիության խնդիրները: Դրանք հենց տարածաշրջանային խնդիրների դրսեւորումներ են եւ հիմնականում տեղերում խիստ շոշափելի են արտահայտված: Փորձ է արվել առաջ քաշել այնպիսի խնդիրներ, որոնք առավել առարկայական են՝ տեղերում քննարկելու եւ լուծումներ առաջադրելու առումով: Սա նաեւ պայմանավորված էր այն հանգամանքով, որ վերջին տարիներին Հայաստանում եղած զարգացումները տարածքային առումով որոշակի խնդիրներ են առաջադրել: Այսինքն, ունենք մայրաքաղաք, որը զարգանում է առաջանցիկ ու արագ տեմպերով եւ դրան զուգահեռ ունենք նաեւ տարածաշրջաններ, որոնց զարգացումը նույնիսկ չի հասնում Երեւանի զարգացման մակարդակի գոնե կեսին: ԱՅՌԾ վերանայման գործընթացը հիմնական շեշտադրումներն անելու է հենց այս խնդիրը կարգավորելու ուղղությամբ՝ փորձելով մեղմել այդ տարբերությունը, այսինքն՝ ծրագրերն ուղղորդել դեպի մարզեր: Ու հենց այս տեսանկյունից է խիստ կարեւոր հասկանալ, թե տեղերում որոնք են առաջնահերթ լուծում պահանջող խնդիրները, որպեսզի ամրագրվի, թե ինչ առանձնահատուկ քաղաքականություն է պետք որդեգրել:

## ՄԱՍՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒ

### ՁԵՆԱԿԱՆ ԲՆՈՒՄԹ ՉԻ ԿՐՈՒՄ

- Դուք հռչակել եք ԱՅՌԾ-ին մասնակցության գործընթաց: Դա ձեւակա՞ն, թե իրական բնույթ է կրում:  
 - Մասնակցության գործընթացը, իհարկե, ձեւական բնույթ չի կրում. մենք իրականում, ինչպես ԱՅՌԾ մշակման, իրականացման, այնպես էլ վերանայման գործընթացում շատ կարեւորում ենք քաղաքացիական հասարակության դերը: Մեր հիմնական խնդիրը այս գործընթացում այն է, որ առավելագույնս փորձենք ներգրավել ոչ կառավարական հատվածին այս քննարկումների մեջ, որպեսզի կարողանանք լսել, թե քաղաքացիական հասարակությունը ինչ խնդիրներ է բարձրացնում՝ կապված երկրում աղքատության հաղթահարման հետ: Դա մեզ համար շատ կարեւոր է, որպեսզի հասկանանք, թե հասարակության կողմից խնդիրների լուծման ինչ եղանակներ են առաջարկվում: Այդ նպատակով մենք կազմակերպում ենք քննարկումներ, որոնց մասնակից են լինում ինչպես կառավարական, այնպես էլ ոչ կառավարական հատվածները: Առհասարակ ԱՅՌԾ-ի կարեւորագույն ձեռքբերումներից մեկը ես կհամարեի այն, որ այս գործընթացի շուրջ կայացավ կառավարության եւ ոչ կառավարական հատվածի շահագրգիռ համագործակցություն: Եվ, ինչպես ցույց տվեց ԱՅՌԾ-ի իրականացման այս երեք տարվա փորձը, այն շատ արդյունա-

վետ է, եւ մենք փորձում ենք վերանայման այս գործընթացում եւս զարգացնել այդ համագործակցությունը ու փորձելու ենք այն դնել ինստիտուցիոնալ հիմքերի վրա, որպեսզի այն կարողանա շարունակվել ոչ միայն աղքատության հաղթահարման շուրջ, այլ առհասարակ դառնա կառավարության եւ ոչ կառավարական հատվածի շահագրգիռ համագործակցություն բոլոր հիմնական ռազմավարական ծրագրերի իրականացման ընթացքում:

- Ես շատ բարձր եմ գնահատում Ձեր մտահոգությունը ու նաեւ Ձեր ջանքերը աղքատությունը հաղթահարելու ուղղությամբ եւ ուզում եմ Ձեր ուշադրությունը հրավիրել սահմանամերձ գյուղերում տիրող անմխիթար վիճակի վրա: Գյուղերը դատարկվում են աշխատատեղեր չլինելու, սոցիալական ծանր վիճակի պատճառով:

- Այդ հարցը եւս արդիական է. մենք փորձում ենք ԱՅՌԾ վերանայման գործընթացում առանձնակի ուշադրություն դարձնել նաեւ Ձեր կողմից բարձրացված խնդիրներին: Միաժամանակ նշեմ, որ այդ խնդրի լուծման հարցը կառավարությունը պահում է նաեւ դոմոր հանրության ուշադրության կենտրոնում: Խոսքս վերաբերում է ինչպես գործող ծրագրերին, այնպես էլ առաջիկա ծրագրերին: Այստեղ հատկապես կարելի է առանձնացնել «Հազարամյակի մարտահրավերներ» հիմնադրամի ծրագիրը, որի հիմնական շահառուն գյուղական ազգաբնակչությունն է: Այնուամենայնիվ, մենք քննարկում ենք եւ առաջիկա ամիսների ընթացքում շարունակելու ենք քննարկումներ ծավալել Ձեր կողմից բարձրացված հարցերի շուրջ եւ հաշվի կառնենք ցանկացած հավասարակշռված առաջարկ:

- Ես ստանում եմ 6000 դրամ կենսաթոշակ, բնակվում եմ 76-ամյա հաշմանդամ քրոջս հետ: Իսկ ոմանք դոյակներ են կառուցում: Նման բեւեռացումը մեզ պատիվ բերո՞ւմ է (Կիմա Ամյան):

- Ձեր մտահոգությունը տեղին է, այնուամենայնիվ ցանկանում եմ նշել, որ ԱՅՌԾ իրականացման արդյունքում արդեն իսկ Հայաստանում եկամուտների եւ ծախսերի անհամաչափության մեղմման միտումներ նկատվում են: Մասնավորապես, ընդհանուր եկամուտների, ինչպես նաեւ սպառման համակենտրոնացման Ձինիի գործակցի 2004 թվականի մեծությունները կազմել են համապատասխանաբար 0.387 եւ 0.352: Ծախսերի համակենտրոնացման Ձինիի գործակցի մեծությունը համապատասխանում է Խորհրդային Միության վերջին տարիների համապատասխան ցուցանիշի մակարդակին, իսկ ընթացիկ եկամուտների համակենտրոնացման Ձինիի գործակցից գերազանցում է անգամ ԱՅՌԾ-ով 2015թ. համար սահմանված նպատակադրումը: Սակայն ես ուզում եմ ձեզ վստահեցնել, որ աղքատության եւ անհավասարության հարցերը հենց ԱՅՌԾ-ի վերանայման գործընթացի հիմնաքարն են, եւ բոլոր քննարկումներում հարցերի լուծումները մայվում են հենց այս տեսանկյունից:



23 նոյեմբերի 2006թ.

# ԱՂՈՑ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅ.

## ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ, ԱԶԴԱԿՆԵՐ, ԱԿՉԲՈՒՆՔՆԵՐ

2006թ. մայիսին, ՀՀ վարչապետի նախագահությամբ կայացած ԱՂՈՑ իրականացման աշխատանքները համակարգող խորհրդի նիստում, հաստատվել է ռազմավարական ծրագրի 2004 թվականի և 2005 թվականի առաջին կիսամյակի հաշվետվությունը, արձանագրված արդյունքներից ելնելով, առաջադրվել է ծրագրի վերանայման խնդիրը: Ինչո՞ւ է վերանայվում երեք տարի առաջ, 2003թ. օգոստոսին հաստատված ծրագիրը:

**Որո՞նք են վերանայման նախապայմաններն ու սկզբունքները:**

Ինչպիսի՞ նպատակներ է դրել իր առջև Հայաստանի Հանրապետության կառավարությունը, և դրա արդյունքում ի՞նչ կստանա հանրությունը, հատկապես աղքատ և խոցելի բնակչությունը:

### Որո՞նք են ԱՂՈՑ ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ ԱՌԱՋԱՆՇԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Առաջին և կարևոր առանձնահատկությունն այն է, որ ԱՂՈՑ-ն իր մեջ համախմբում է երկրի զարգացման ռազմավարական ուղղություններն առաջիկա տասը տարիների համար: Այն վեր է ածվել կառավարության կողմից իրականացվող միջին ժամկետ քաղաքականության ուղեկաշարին փաստաթղթի: ԱՂՈՑ հաստատումից հետո կառավարության բոլոր ոլորտային և ճյուղային ծրագրերի մեծ մասը համապատասխանել է ԱՂՈՑ գերակայություններին և քաղաքականության ուղղություններին:

Երկրորդ բնորոշ առանձնահատկությունն այն է, որ ԱՂՈՑ-ն իր նպատակավոր ազդեցությունը թողեց մաս պետական բյուջեի ծախսային ուղղությունների ձևավորման գործընթացի վրա՝ այն դարձնելով ավելի սոցիալական և աղքատամետ: Շարունակվում է ԱՂՈՑ գերակայություններին համապատասխան բյուջետային միջոցներ ընդհանուր վերաբաշխումը՝ հօգուտ սոցիալական ոլորտներում իրականացվող ծախսային ուղղությունների, ինչն իրատեսական է դարձրել աղքատության կրճատման ուղղությամբ կառավարության նպատակադրումների հասանելիությունը:

Այս արդյունքին հնարավոր եղավ հասնել առաջին հերթին ԱՂՈՑ և միջին ժամկետ ծախսերի ծրագրերի համաձայնեցման արդյունքում: Նշված գործընթացը խորանում ու ամրապնդվում է:

Հաջորդ առանձնահատկությունն այն է, որ կառավարության կողմից ԱՂՈՑ իրականացումն իր ազդեցությունն է թողել նաև Հայաստանում գործող դոնոր կազմակերպությունների գործընկերության ծրագրերի վրա: Նրանք իրենց աջակցության միջին ժամկետ ռազմավարությունները համապատասխանեցրին ԱՂՈՑ գերակա-

յություններին և քաղաքականության ուղղություններին, ինչը համարվում է շատ կարևոր ներդրում երկրի զարգացումն արագացնելու գործում:

ԱՂՈՑ գերակայությունները ոչ միայն ազդեցություն ունեցան երկրում իրականացվող ծրագրերի վրա, այլև ուղեկիշ դարձան նորերի համար (Հագարամյակի մարտահրավերների կորպորացիայի, Ասիական զարգացման բանկի կողմից իրականացվող ծրագրեր և այլն):

ԱՂՈՑ-ին բնորոշ չորրորդ առանձնահատկությունը փաստաթղթի մշակման և իրականացման մասնակցալի մոտեցումն է: Ստեղծվել է ԱՂՈՑ իրականացման շուրջ կառավարական և ոչ կառավարական հատվածների շահագրգիռ համագործակցություն, ինչը թույլ է տալիս լսել կողմերի կարծիքները և ընդունել գործընթացի զարգացմանը նպաստող որոշումներ:

Հանրության բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ իրականացված բազմաթիվ քննարկումների արդյունքում 2004թ. հոկտեմբերի 30-ին հնարավոր եղավ ստորագրել ԱՂՈՑ իրականացման գործընկերության համաձայնագիրը:

ԱՂՈՑ իրականացման առաջին տարիների արդյունքներն ակնհայտորեն արձանագրեցին ինչպես աղքատ բնակչության, այնպես էլ շատ աղքատ բնակչության թվաքանակի էական կրճատում: Ընդ որում, 2003, 2004 և 2005 թվականների զարգացումները և դրանց արդյունքում ձևավորված իրավիճակն, ընդհանուր առմամբ, ավելի բարենպաստ է եղել, քան նախատեսվում էր ԱՂՈՑ զարգացման սցենարով:

Աղքատության և անհավասարության կրճատման այն արդյունքները, որոնց հաջողվել է հասնել 2004 և 2005 թվականներին, համապատասխանում են ԱՂՈՑ ավելի հեռավոր ժամանակահատվածի նպատակադրումներին: Մասնավորապես՝

- ՀՆԱ մեկ շնչի հաշվով 2004 թ. փաստացի ցուցանիշը համապատասխանում է ԱՂՈՑ 2007 թ.

կանխատեսումներին, իսկ 2005թ. փաստացի ցուցանիշը (1524 ԱՄՆ դոլար) համապատասխանում է ԱՅԴԾ 2011 թ. կանխատեսումներին:

- 2005 թվականին արձանագրված աղքատ բնակչության 29.8 տոկոս ցուցանիշին նախատեսվում էր հասնել 2009թ. ընթացքում:
- 2005 թվականին գրանցված շատ աղքատ բնակչության 4.6 տոկոս ցուցանիշին նախատեսվում էր հասնել միայն 2015թ.:
- Ընդհանուր եկամուտների, ինչպես նաև սպառման համակենտրոնացման Ձիմիի գործակցի 2004 թվականի մեծությունները կազմել են համապատասխանաբար 0.387 և 0.352: Ծախսերի համակենտրոնացման Ձիմիի գործակցի մեծությունը համապատասխանում է Խորհրդային Միության վերջին տարիների համապատասխան ցուցանիշի մակարդակին, իսկ ընթացիկ եկամուտների համակենտրոնացման Ձիմիի գործակցը գերազանցում է անգամ ԱՅԴԾ-ով 2015թ. համար սահմանված նպատակադրումը:

Այսինքն, նշված քանակական բնութագրիչները վկայում են, որ երկրում տեղի է ունեցել շատ աղքատների թվի և անհավասարության՝ ծրագրվածից առաջանցիկ կրճատում, ինչը հնարավորություն է տալիս հավաստելու, որ այն հիմնական խնդիրը, որն ըստ ռազմավարական ծրագրի դրվել է՝ երկրում աղքատության կրճատումը, կառավարության կողմից իրականացվող քաղաքականության արդյունքում հաջողությամբ է ընթանում, և ապահովված են դրա շարունակականության հիմքերը:

## ՈՐՈ՛ՆՔ ԵՆ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԿՐՃԱՏՄԱՆ

### ՀԻՄՆԱԿԱՆ ԱԶՈՒՆՆԵՐԸ

Դրանք հիմնականում երկուսն են: Առաջինը, իհարկե, տնտեսական աճն է և դրանով պայմանավորված բնակչության եկամուտների աճը, իսկ երկրորդը՝ առավել սոցիալական ուղղվածություն ունեցող պետական ծախսային քաղաքականությունը: Տնտեսական աճն իր բնույթով ունեցել է աղքատամետ առանձնահատկություն. վերջին տարիներին տնտեսական աճի յուրաքանչյուր տոկոսը բերում է մոտավորապես 0.3 տոկոս աղքատության կրճատման: Այսինքն, որքան մեծ է տնտեսական աճի ցուցանիշը, այնքան ավելի շոշափելի է ազդեցությունը երկրում աղքատության կրճատման ցուցանիշի վրա, չնայած այս ցուցանիշը դեռևս շարունակում է մնալ մտահոգիչ: Մեծացել են նաև բնակչության աշխատանքային եկամուտները, և եկամուտների կառուցվածքում 2004-ի տվյալների համաձայն ցուցանիշը կազմել է 56 տոկոս՝ զբաղեցնելով առաջին տեղը:

Երկրորդ ուղղությունը, որ հնարավոր դարձրեց շոշափելիորեն կրճատել աղքատությունը և, հատկապես, ծայրահեղ աղքատությունը, բյուջեի սոցիալամետ ուղղվածությունն է: Այսպես, եթե պետական բյուջեի տարեկան ծախսը աճում է 10-12 տոկոսով, ապա սոցիալա-

կան ոլորտի ծախսն աճում է 36 և ավելի տոկոսով:

Կրթության ոլորտին հատկացված միջոցների աճը եղել է ամենաբարձրը և 2004 ու 2005 թվականներին կազմել է 36 տոկոսից ավելի, ինչը հնարավորություն է տվել էապես բարձրացնել ուսուցիչների աշխատավարձը: Այն եղել է շարունակական, 2004 թվականին կազմում էր 50.000 դրամ, իսկ 2007 թվականի բյուջեով նախատեսվել է հասցնել 74.000 դրամի:

Առողջապահության ոլորտում բյուջետային հատկացումների աճը նույնպես եղել է շոշափելի և կազմել է տարեկան միջին հաշվով 20-25 տոկոս: Արդյունքում ամբուլատոր-պոլիկլինիկական օդակում աշխատավարձը հասել է մոտ 60.000 դրամի, և 2007-ին նախատեսվում են բարձրացումներ նաև հիվանդանոցային օդակում:

Սոցիալական ապահովության ոլորտի ձեռքբերումներից է ընտանեկան նպաստների համար հատկացվող միջոցների մոտ երկու անգամ ավելացումը, որը ևս իր շոշափելի ազդեցությունն է թողել ծայրահեղ աղքատության կրճատման վրա:

## ԻՆՁՈ՛Վ Ե ԴՍԿԱՆՆԱՎՈՐՎԱԾ

### ԱԶՈՒՑ ՎԵՐԱՆՆՄԱՆ ԳՈՐԾԵՆԹԵՅԸ

Ռազմավարական ծրագիրը պետք է մշտապես լինի դինամիկ պրոցեսում: Հանրության պահանջն է, որ պետք է երկու տարին մեկ անգամ ԱՅԴԾ-ն վերանայվի, քանզի բոլորը չէ, որ բավարարված են ծրագրում ամրագրված խնդիրներից:

Ծրագրի գործողության մեջ դրվելուց անցել է ավելի քան երեք տարի, և հստակ երևում են վերանայման նախապայմանները:

Նախ. ծրագիրն առավել պահպանողական էր ներկայացրել երկրի տնտեսական աճի զարգացումները: Իրականում գրանցվել է առավել բարձր տնտեսական աճ, ինչը ենթադրում է, որ այն ցուցանիշները կան դրանց թիրախները, որ նախատեսված էին, պետք էր համապատասխանեցնել մոր իրողություններին: Դա վերաբերում էր ինչպես ցուցանիշներին, այնպես էլ տնտեսական քաղաքականության որոշակի ուղղություններին, քանզի կան ոլորտներ, որտեղ բավականին լուրջ առաջընթաց է նկատվել: Դա առաջին հերթին բյուջետային ֆինանսավորումն է: Բայց կան ոլորտներ, որտեղ առկա են և՛ հապաղումներ, և՛ որոշակի բացթողումներ, որոնք պետք է անպայման վերանայվեին, քանի որ դրանք իրենց բնույթով նաև օբյեկտիվ պատճառներ ունեն: Այսինքն, կան միջոցառումներ, որոնց իրականացումը հնարավոր չի եղել որոշակի իրողությունների հետևանքով: Այդ առումով ԱՅԴԾ համակարգող խորհրդի միստը նաև անրագրեց այն սկզբունքներն ու մեխանիզմները, որոնցով պետք է իրականացվի վերանայումը: Ընդգծենք ընդամենը երկու սկզբունք: Առաջին՝ ամրագրվեց, որ վերանայումը պետք է լինի մասնակցային և որ այն պետք է կազմակերպվի «ներքինից վերև» սկզբունքով, այսինքն՝ անհրաժեշտ է նախ

հստակեցնել խնդիրը, ապա ներկայացնել կարծիքներ ու դրանց հիման վրա մշակել քաղաքականություն: Երկրորդ՝ ամրագրվեց, որ այն որպես սկզբունքային ուղղություն պետք է լինի իրատեսական: Կարևոր է, որ Ծրագրում ներկայացված քաղաքականություններն ապահովված լինեն ֆինանսական հնարավորություններով:

### **Ի՞նչ է եսթիմոնում մասնակցային գործընթացը**

Հանդիպում-քննարկումները, որ կազմակերպվում են շահագրգիռ բոլոր կողմերի մասնակցությամբ և իրականացվում են հստակ ժամանակացույցով, մասնակցային գործընթացի արդյունավետ ձևերից են:

Քննարկումները նախատեսվել և իրականացվում են երկու ձևաչափով՝ մարզային ու հանրապետական մակարդակներում, մասնագիտական և հանրային քննարկումների ձևով:

Մասնագիտական քննարկմանը հրավիրվում են ոլորտի մասնագետներ՝ պետական կառավարման մարմինների, գիտական հաստատությունների, միջազգային կազմակերպությունների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Հանրային քննարկումների կազմակերպումը նպատակ ունի հանրությանը ներգրավել ներկայացվող խնդիրների քննարկմանը՝ նոր գաղափարներ հավաքելու և նոր խնդիրներ բացահայտելու համար:

Մարզային մակարդակում անցկացվող քննարկումների համար ընտրված են թեմաներ, որոնք առավելապես բացահայտում են այն խնդիրները, որոնք առկա են տեղերում կամ մարզային կտրվածքով առավել սուր են արտահայտված: Օրինակ, զբաղվածության ծրագրերը, փոքր և միջին ձեռներեցության զարգացման հիմնախնդիրները կամ առողջապահական ծառայությունների ֆիզիկական մատչելիության խնդիրները: Դրանք հենց տարածաշրջանային խնդիրների դրսևորումներ են և հիմնականում տեղերում խիստ շոշափելի են արտահայտված: Փորձ է արվել առաջ քաշել այնպիսի խնդիրներ, որոնք առավել առարկայական են՝ տեղերում քննարկելու և լուծումներ առաջադրելու առումով: Սա նաև պայմանավորված է այն հանգամանքով, որ վերջին տարիներին Հայաստանում արձանագրված զարգացումները տարածքային առումով որոշակի խնդիրներ են առաջադրել: Այսինքն, ունենք մայրաքաղաք, որը զարգանում է առաջանցիկ ու արագ տեմպերով և, դրան զուգահեռ, ունենք տարածաշրջաններ, որոնց զարգացումը նույնիսկ չի հասնում երևանի զարգացման մակարդակի գոնե կեսին: ԱՅԻԾ վերանայման գործընթացը հիմնական շեշտադրումներն անելու է հենց այս խնդիրը կարգավորելու ուղղությամբ՝ փորձելով մեղմել այդ տարբերությունը, այսինքն՝ ծրագրերն ուղղորդել դեպի մարզեր: Եվ հենց այս տեսանկյունից խիստ կարևոր է հասկանալ, թե տեղերում որո՞նք են առաջնահերթ լուծում պահանջող խնդիրները, որպես-

զի ամրագրվի, թե ի՞նչ առանձնահատուկ քաղաքականություն է պետք որդեգրել:

Հանրապետական մակարդակում քննարկումները կարևոր են հասկանալու համար, թե արդեն իրականացվող ԱՅԻԾ գործընթացում եղած ձեռքբերումներն ի՞նչ բացթողումներ ունեն թե՛ իրականացման մեխանիզմում և թե՛ ընթացակարգերի առումով:

### **Ի՞նչ սրոյունքներ են գրանցվել...**

Դեռևս գործընթացի կես ճանապարհին՝ արդեն իսկ առկա են որոշակի հետաքրքիր բացահայտումներ: Օրինակ, ինը մարզերում քննարկվել են փոքր և միջին ձեռներեցության զարգացման խնդիրները և զբաղվածության ծրագրերը: Քննարկումների արդյունքում, որպես հիմնական խնդիր, բարձրացվում է ֆինանսական միջոցների մատչելիության հարցը: ԱՅԻԾ-ն ամրագրել էր այս հարցը, և բանակցությունների արդյունքում կառավարությանը հաջողվել է որոշակի միջոցներ ներգրավել այդ ոլորտում, մասնավորապես «Հազարամյակի մարտահրավերներ», Համաշխարհային բանկի և IFAD-ի ծրագրերը: Վերջինն, ի դեպ, արդեն իսկ գործողության մեջ է, բայց քննարկումները ցույց են տալիս, որ մենք ունենք ընթացակարգերի հստակեցման խնդիր: Այսինքն, իրականում ֆինանսական միջոցները կան, սակայն գյուղացիների համար դրանք դեռևս մատչելի չեն ո՛չ ժամկետների առումով, ո՛չ ընթացակարգերով, և ո՛չ էլ սահմանված տոկոսադրույքների չափով: Այս համատեքստում հետաքրքիր առաջարկներ են արվում վարկ ստանալու ընթացակարգերի պարզեցման հետ կապված: Բացի այդ, բարձրացվում է նաև մրցակցության կարգավորման խնդիրը: Հաշվի առնելով, որ շատ քիչ թվով բանկեր են աշխատում մարզերում և բավականին սահմանափակ է գյուղական վայրերում աշխատելու փորձը, առաջ է քաշվում այդ բացը լրացնելու խնդիրը: Բարձրացվում են նաև զբաղվածության ծրագրերին վերաբերող խնդիրներ: Առանձնակի շեշտադրվում է այն հանգամանքը, որ հասարակական վարձատրվող աշխատանքների ծրագիրն այնքան էլ արդյունավետ չէ, ուստի ԱՅԻԾ-ում պետք է որոշակի վերանայումներ կատարվեն: Բացի այդ, ամրագրվել են նոր ծրագրեր (օրինակ՝ խոցելի խմբերի համար աշխատավարձերի փոխհատուցման ծրագիրը): Հարկ է նկատել, որ ծրագրերի իրականացման տեսանկյունից թե՛ գործատուները և թե՛ գործազուրկները դեռևս անբավարար են իրազեկված, ինչն անխոս մեծ խոչընդոտ է, և անհրաժեշտություն կա այս ուղղությամբ ևս լրացուցիչ աշխատանք իրականացնել:

Որոշակի արդյունքներ կան կրթության որակի և նախադպրոցական համակարգի խնդիրներին վերաբերող հանրապետական քննարկումների արդյունքում: Կազմակերպվել են նաև քննարկումներ աղքատության գծի և դրա հաշվարկման վերաբերյալ:

Այսպիսով, ԱՅԻԾ վերանայման գործընթացում բավականին տեղեկատվություն է հավաքված, որը պետք է քննարկվի փորձագետների կողմից:

Ներկայացված ձևաչափերով քննարկումները կշարունակվեն ևս 1-2 ամիս, որից հետո կկազմակերպվեն նաև ամփոփիչ քննարկումներ, քանզի ընթացքում ևս առաջ են քաշվում խնդիրներ, որոնք ենթադրում են նոր լուծումներ և նոր տեղեկությունների հավաքում: Այս տեսանկյունից կարևորվում է այն ճկուն մոտեցումը, որ դրսևորվում է աշխատանքային խմբի կողմից, որը քննարկում է հարցերն ու անհրաժեշտության դեպքում՝ նոր խնդիրներ առաջադրում կազմակերպիչներին:

## ՎԵՐՆԱՅՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿԸ ՆՈՒՅՆՊԵՆՄԱՆԱԿՅԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՅ ԿԱՆՉՆԻ

Միանշանակ այո, քանի որ առկա է նախորդ ծրագրի փորձը, և նորացված տարբերակը ևս հետադարձ կապով պետք է ներկայացվի շահառուներին, պետք է տեղեկացվի, թե իրենց ներկայացրած առաջարկներն ի՞նչ տեսքով են արտացոլված վերջնական փաստաթղթում: Պետք է ներկայացնել հիմնավորումներ, թե ինչու՞ այս կամ այն առաջարկը չի ընդգրկվել այդ փաստաթղթում, կամ ներկայացվի, թե ինչպե՞ս են ներառվել ու ի՞նչ լուծումներ են տրվել: Այս առումով նախատեսվում է իրազեկման և հետադարձ կապի հստակ գործընթաց: Այդ գործընթացը ևս պետք է իրականացվի թե՛ մարզային և թե՛ հանրապետական մակարդակով

կազմակերպված քննարկումների տեսքով, այսինքն՝ ինչպես նախնական գործընթացում գաղափարները «ներքևից վերև» սկզբունքով ստացվել են, այնպես էլ պետք է հաջորդող փուլում «վերևից ներքև» տարվի, հասցվի շահառուներին:

\* \* \*

**ԱՅՈՑ աշխատանքային խումբը, մասնակցային գործընթացն առավել թափանցիկ և ընդգրկուն դարձնելու նպատակով, երկխոսության է հրավիրում նաև [www.PRSP.am](http://www.PRSP.am) կայքէջում տեղադրված հարցաթերթիկի միջոցով:**

ԱՅՈՑ աշխատանքային խմբի հասցեն է՝ **Երևան, Մելիք-Ադամյան 1, 33 ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն:**  
**Հեռախոս՝ 595-334: Էլ.փոստ՝ [info@PRSP.am](mailto:info@PRSP.am):**

**ԱՅՈՑ աշխատանքային խումբ**

**Տնտեսական բարեփոխումների վերլուծական-տեղեկատվական կենտրոն**

Սույն հրապարակումը 15.000 օրինակ տպաքանակով զետեղվել և տարածվել է մարզային 10 թերթերի միջոցով:



7 Դեկտեմբերի 2006թ.

# ՓՄՁ-ն՝ ԱՅՈՑ-Ի ԳԵՐԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆ

## ՈՒՐՈՏՈՒՄ ՆԿԱՏԵԼԻ ԵՆ ՇՈՇԱՓԵԼԻ ՆՈՒՅՆԱԿՅԱՅՈՒՄՆԵՐ

Տնտեսության վերակառուցման եւ զարգացման գլխավոր գործոններից, ինչպես նաեւ աղքատության կրճատման տեսանկյունից շատ է կարեւորվում նաեւ ՓՄՁ ոլորտի զարգացումը, որը, բնականաբար, կհանգեցնի ինչպես տնտեսական աճի եւ դինամիկ մասնավոր հատվածի ձեւավորմանն ու ներքին շուկայի ծավալների ընդլայնմանը, այնպես էլ նոր աշխատատեղերի ստեղծմանը: Սակայն այդ առաջանցիկ զարգացումներին հասնելու համար պետք է նախ բարեկեցիկ գործարար միջավայր ստեղծել, պարզեցնել հարկային եւ մաքսային վարչարարությունը, նվազեցնել հարկերի բարձր դրույքաչափը, ինչը թույլ չի տալիս գործարարին նախ կայանալ բիզնեսում ցածր եկամտաբերության եւ հարկերի վճարման պարագայում: Հարկերի վճարման գործընթացում նրանց տրված միակ առավելությունը պարզեցված հարկով աշխատելն է, որի ներդրումը ինչ-որ չափով նպաստեց փոքր հարկ վճարողների վարչական խոչընդոտների նվազեցմանը: Այս հարկատեսակը վճարող ձեռներեցները հիմնականում ՓՄՁ սուբյեկտներ են:

Պարզեցված հարկի ներդրումը հնարավորություն ընձեռեց նրանց ձեռքագատվել ավելացված արժեքի հարկ, շահութահարկ եւ եկամտահարկ վճարելու գործընթացից՝ վճարելով միայն իրական շրջանառության 3, 5 տոկոսը: Հաջորդ խնդիրը դոտացիաների բացակայությունն է, ինչպես նաեւ մասնավոր հատվածների ֆինանսավորումը: Այստեղ մեծ դեր է վերապահված առևտրային բանկերին, որոնցից շատերը ՓՄՁ ոլորտին ուղղված վարկավորում են իրականացնում՝ սահմանելով շուկայական տարբեր սակագներ: Օրինակ՝ փոքր եւ միջին բիզնեսին տրամադրվող վարկերի միջին չափը 50-200 հազար դոլար է, որը տնտեսվարող սուբյեկտին տրվում է ելնելով գրավի գնահատված արժեքի 60-70 տոկոսից, 14-24 տոկոս տոկոսադրույթով եւ 2-3 տարի մարման ժամկետով: Բնականաբար, այս բիզնես վարկերը ոչ բոլոր ձեռնարկատերերին կարող են մատչելի լինել: Տնտեսական գործունեություն ծավալելը կրկնակի դժվարություններ է առաջադրում հատկապես ՀՀ գյուղական համայնքներում, որտեղ ֆինանսական ռեսուրսների տրամադրման խնդրից



բացի, ավելանում է եւս մեկը՝ բանկերի սակավաթիվ լինելու հանգամանքը:

Սահմանված բարձր տոկոսադրույքները եւ կարճաժամկետ տրվող վարկերը գյուղաբնակների համար դեռեւս հասանելի չեն: Սակայն ՀՀ կառավարության կողմից հաստատված աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրում նախկին 1-2 տարում ՓՄՁ ոլորտում ընթացակարգերի պարզեցման հետ կապված որոշ բարեփոխումներ են իրականացվել, իսկ ծրագրի վերանայման ընթացքում ինը մարզերում քննարկվել են փոքր եւ միջին ձեռներեցության զարգացման խնդիրները, որոնցում անդրադարձ է արվել ֆինանսական միջոցների մատչելիության հարցին: 2004-ի ընթացքում ՀՀ կառավարության քայլերը ուղղված են եղել ՓՄՁ զարգացման քաղաքականության ու ռազմավարության մշակմանը:

Այս ոլորտում վերջին 2-3 տարիների ընթացքում ստեղծվել է շուրջ 20000 սուբյեկտ, իսկ միայն 2004-ին՝ շուրջ 8500 նոր ՓՄՁ սուբյեկտ՝ ավելի քան 21 հազար աշխատատեղով: ՓՄՁ պետական աջակցության համակարգի կենսունակության բարձրացման, ինչպես նաեւ ՓՄՁ սուբյեկտների ֆինանսական եւ ներդրումային հնարավորությունների ընդլայնման եւ նոր ստեղծվող կազմակերպությունների խրախուսման նպատակով 2004-ին իրականացվել են վարկային երաշխավորությունների տրամադրման փորձնական ծրագրեր, որոնց շրջանակներում ՓՄՁ սուբյեկտներին տրամադրվել են 44,8 մլն դրամի վարկային միջոցներ, որոնք, ՓՄՁ ՁԱԿ-ի կողմից իրականացված մոնիտորինգի արդյունքների համաձայն, օգտագործվել են նպատակային՝ վերադարձելիության ռիսկերը հասցնելով նվազագույնի:

ՀՀ առևտրի եւ տնտեսական զարգացման փոխնախարար Արմեն Գեւորգյանը կարելորում է ՓՄՁ ոլորտի դերը տնտեսության զարգացման, այդ թվում նաեւ աղքատության հաղթահարման խնդրում: Ըստ փոխնախարարի՝ փոքր եւ միջին ձեռնարկատիրությունն իր առանձնահատկություններով եւ զարգացման հնարավորություններով նշանակալի ազդեցություն ունի երկրում աղքատության կրճատման գործում՝ նոր աշխատատեղերի ստեղծման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, հասարակության միջին խավի ձեւավորման առումով:

Փոխնախարարը նշում է, որ ՀՀ կառավարության կողմից ՓՄՁ պետական աջակցության ուղղությամբ իրականացվող հետեւողական քաղաքականության արդյունքում ոլորտում վերջին տարիներին գրանցվել են էական ձեռքբերումներ. նախ կազմավորվել է ՓՄՁ պետական աջակցության համակարգը, եւ գրանցվել են երկրի տնտեսական համակարգում ՓՄՁ դերի շարունակական աճի կայուն միտումներ, ինչի մասին վկայում են վիճակագրական ցուցանիշները: Որպես այս ոլորտում տնտեսական քաղաքականության նպատակադրված եւ արդյունավետ իրականացման տրամաբանական արդյունք, վերջին տարիներին արձանագրվել է ոլորտը բնութագրող ցուցանիշների դինամիկ աճ: Ներ-

կայունս ՓՄՁ տեսակարար կշիռը երկրի ՀՆԱ-ում կրկնակի գերազանցում է 1999 թ. մակարդակը՝ կազմելով 40 տոկոս: Դրա հետ մեկտեղ ավելացել է նաեւ այս ոլորտի մասնաբաժինը երկրի արտահանման ծավալում՝ նախորդ տարվա տվյալներով կազմելով 16,4 տոկոս, 2003 թ. 14,3 տոկոսի դիմաց: 2005 թ. ՓՄՁ սուբյեկտներում իրականացված օտարերկրյա ներդրումների տեսակարար կշիռն օտարերկրյա ներդրումների ընդհանուր ծավալում կազմել է 9, 2 տոկոս կամ 36. 8 մլն դոլար, ինչը 2004-ի նկատմամբ ավելացել է 7,1 մլն դոլարով: 2005թ. ՓՄՁ սուբյեկտների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի, տուրքերի եւ պարտադիր այլ վճարների տեսակարար կշիռն ընդհանուր բյուջետային եկամուտների մեջ կազմել է 27, 9 տոկոս կամ 87,9 մլրդ դրամ, ինչը նախորդ տարիների համեմատ ավելացել է շուրջ 14,1 մլրդ դրամով:

Անցկացված մոնիտորինգի արդյունքներով, 2000-2005թթ. ընթացքում ստեղծվել են ավելի քան 30 հազար ՓՄՁ սուբյեկտներ, ապահովվել է 70-75 հազար նոր աշխատատեղ:

Վերջին տարիներին փոքր եւ միջին ձեռնարկություններում ավելացել է նաեւ զբաղվածների միջին աշխատավարձը. 2006 թ. մարզերում այն կազմել է 45-55 հազար դրամ, 2004թ. 20-35 հազար դրամի դիմաց: Այս ցուցանիշը երեւանում ավելի բարձր է եւ ներկայումս տատանվում է 60-80 հազար դրամի սահմաններում:

Անդրադառնալով ԱՀՌԾ-ում ներառված գերակա ուղղություններից մեկին՝ ՓՄՁ ոլորտին, Արմեն Գեւորգյանը նշեց, որ փոքր եւ միջին բիզնեսի զարգացումը համապարփակ, լուրջ խնդիր է, այն իր մեջ կրում է նաեւ սոցիալական բնույթ՝ հաղորդակցվելով ԱՀՌԾ-ի հետ, կազմելով նրա բաղկացուցիչ մասը: ՓՄՁ ոլորտի զարգացմանն ուղղված ամբողջ գործընթացը ՀՀ կառավարությունն ավելի վաղ է սկսել իրականացնել, դեռեւս 2000-ից, երբ ընդունվել է ՓՄՁ-ներին պետական աջակցության մասին օրենքը: Այս տարիների ընթացքում կառավարությանը հաջողվել է լուծել ոլորտի հիմնական օրենսդրական խնդիրները, այդուհանդերձ, օրենսդրական դաշտի հետեւողական կատարելագործումը մնում է ՓՄՁ հետագա զարգացման կարելորագույն նախապայմանը:

Ջարգացման ծրագրերում փոխնախարարը նշեց երկու նոր կարելոր ուղղություններ, որոնցից առաջինը ինովացիոն եւ լուրջ գիտական ներուժ պահանջող ձեռնարկությունների աջակցումն է, որոնց պահանջարկը շուկայում մեծ է: Իսկ երկրորդը՝ մարզերում գործող ՓՄՁ սուբյեկտներին լիզինգային ծառայություններից օգտվելու հնարավորությունների ընձեռումն է:

ՓՄՁ զարգացման միտումների հետ մեկտեղ Ա. Գեւորգյանը մատնանշում է նաեւ ոլորտում առկա այն էական խոչընդոտները, որոնց մասին բազմիցս է խոսվել: Փոխնախարարը դրանք պայմանավորում է օբյեկտիվ եւ սուբյեկտիվ գործոններով, մասնավորապես՝ ֆինանսական (վարկային) միջոցների անմատչելիությամբ, գործարար տեղեկատվության եւ խորհրդատվության ստացման ու կադրերի մասնագիտական ուսուցման



հարցերում առկա դժվարություններով, ինչպես նաև ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի (կամ մատուցվող ծառայությունների)՝ շուկաներում հաստատվելու հետ կապված խնդիրներով, ինչպես նաև սկսնակ գործարարների համար ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու հետ կապված գործարար հմտությունների պակասով: ՓՄՁ-ներին աջակցության իրականացվող ծրագրերն ուղղված են նշված խնդիրների լուծմանը:

Օրենսդրական բնույթի հիմնախնդիրներից մա նշում է տնտեսվարող սուբյեկտների եւ պետական մարմինների միջեւ փոխհարաբերություններում դեռեւս առկա այն վարչարարական բնույթի խնդիրները, որոնք կապված են ֆինանսական հաշվետվությունների ներկայացման բարդացված ընթացակարգերի, ստուգումներ իրականացնելու հաճախականության եւ նման այլ խնդիրների հետ: «Հայաստանում ձեռնարկատիրական գործունեության իրականացման վարչական ընթացակարգերի գնահատում» ծրագրի հիման վրա ՀՀ գործարար միջավայրի բարելավմանն ուղղված գործողությունների ծրագրով նախատեսված է համապատասխան միջոցառումներ իրականացնել, մասնավորապես, ստուգումների գործընթացի կատարելագործմանն ուղղությամբ: Բացի այդ, 2006 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին ԱՀՌԾ-ի վերանայման շրջանակներում, ՓՄՁ սուբյեկտների մասնակցությամբ ՀՀ բոլոր մարզերում կազմակերպված հանրային քննարկումների արդյունքները վկայում են, որ օրենսդրության անկատարության տեսանկյունից առկա խնդիրները հիմնականում պայմանավորված են հարկային օրենսգրքում կատարվող հաճախակի փոփոխություններով, ինչի արդյունքում ՓՄՁ սուբյեկտները ստիպված են կատարել ֆինանսական միջոցների լրացուցիչ ծախսեր: «Եթե հաշվի առնենք, որ օրենքներում վերջին փոփոխություններն ուղղված են հարկային վարչարարության բարելավմանը եւ կազմում են աղքատության հաղթահարման քաղաքականության կարեւոր բաղադրիչ, ապա հիմնախնդիրը օրենքներում հաճախակի փոփոխությունների վերաբերյալ ՓՄՁ սուբյեկտների իրազեկվածության մակարդակի բարձրացումն է: Խոսելով ոլորտի զարգացման հեռանկարների մասին, նշեմ, որ պետք է նախ՝ շարունակել որդեգրած քաղաքականությունը եւ այն հարմարեցնել արդիական խնդիրներին: Պետք է նաև շարունակել վարկավորման ծրագրերը: Մեր աջակցության մոտ 90 տոկոսը ուղղված է մարզեր», - ասաց առևտրի եւ տնտեսական զարգացման փոխնախարար Արմեն Գեղորգյանը:

ՀՀ ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնի տնօրեն Իշխան Կարապետյանը, հավաստելով, որ 2006թ. ԱՀՌԾ-ի վերանայման գործընթացում ՓՄՁ զարգացումը ճանաչվել է աղքատության հաղթահարման քաղաքականության գերակայություններից մեկը, ոլորտի զարգացումը բարձր ցուցանիշների, ինչպես նաև ստեղծված նոր կազմակերպությունների առումով հուսադրող համարեց՝ փաստելով, որ ոլորտում առկա է մեծ պոտենցիալ որակական նոր զարգացումների

առումով: Թե ինչպիսի աշխատանքներ են նախատեսվում իրականացնել այս ոլորտի զարգացման ուղղությամբ, Հազարամյակի մարտահրավերներն եւ Համաշխարհային բանկի IFAD-ի ծրագրերով, Իշխան Կարապետյանը նշեց. «Այդ երկու ծրագրերն էլ անկասկած նպաստում են մարզերում, տարածաշրջաններում փոքր եւ միջին ձեռնարկատիրության, գործարար ակտիվության բարձրացմանը, հետեւաբար եւ աղքատության նվազմանը: ՓՄՁ ոլորտում կան եւ արտաքին, եւ ներքին խնդիրներ: Վերջինիս մեջ մտնում են ենթակառուցվածքները, այսինքն՝ ճանապարհները, ջրամատակարարումը, հեռահաղորդակցության գծերը եւ այլն: «Հազարամյակի մարտահրավերներն ծրագրով նախատեսվում է մարզերում լուծել հենց այս կարեւորագույն խնդիրները, որոնց լուծումը կհանդիսանա փոքր եւ միջին ձեռնարկությունների զարգացման կարեւոր նախապայման: Իսկ Համաշխարհային բանկի IFAD-ի ծրագրի նպատակն է աջակցել գյուղական տնտեսական գործունեության ակտիվացմանը գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրի շրջանակներում, գյուղական միջին ու մանր արտադրողների եւ ձեռնարկատերերի համար համապատասխան ֆինանսական ռեսուրսները մատչելի դարձնելու միջոցով: Ծրագրով առաջարկվում է մինչեւ 5 հազար դոլարի վարկ ընտանեկան, գյուղատնտեսական եւ ոչ գյուղատնտեսական, միկրոձեռնարկատիրական գործունեության համար եւ 50-150 հազար դոլար վարկ՝ ուղղված գյուղական փոքր եւ միջին ձեռնարկությունների զարգացմանը, այսինքն՝ ազդեցիկ գնեսի ոլորտին»: Ինչպես նշում է Իշխան Կարապետյանը, այս ծրագրերի իրականացումը եւս մեկ քայլ է մարզերում ֆինանսական ռեսուրսներից օգտվելու հնարավորությունները մեծացնելու համար:

Դարձյալ անդրադառնալով այս ոլորտի ամենացավոտ խնդիրներից մեկին՝ բարձր տոկոսադրույքներին, զրուցակիցս մեջբերեց այն փաստը, որ մարզերում սովորաբար տոկոսներն ավելի բարձր են՝ 22-24 տոկոս, իսկ մայրաքաղաքում, ինչպես նշեցինք, 18-24 տոկոս: ՓՄՁ ՋԱԿ-ի կողմից իրականացվող վարկային երաշխավորությունների ծրագրի շրջանակներում տոկոսադրույքները այս տարվա դրությամբ կազմում են 15-16 տոկոս: Իսկ այս ոլորտի ակնհայտ զարգացումը կառույցի տնօրենը վերագրում է երկու գործոնների, որոնցից մեկը համարում է կառավարության հետեւողական աշխատանքների իրականացումը այս ոլորտի զարգացման ուղղությամբ: «Այդ քաղաքականության դրսեւորումը արտահայտվում է այս բնագավառում իրականացվող պետական աջակցության ծրագրերի՝ նախ ֆինանսավորման ավելացմամբ, այնուհետեւ մեխանիզմների կատարելագործմամբ եւ նոր ծրագրային միջոցառումների ներդրմամբ: Այսօր մենք արդեն ունենք ձեւավորված աջակցության ծրագրերի բավականին լայն շրջանակ: Իսկ զարգացման հեռանկարները տարեցտարի ավելանում են նախ առկա ծրագրային ուղղությունների ընդլայնման, վարկային երաշխավորությունների, գործարար տեղեկատվության, խորհրդատվության ուսուցման եւ այլ առումներով»:

ՀՀ կառավարությունը գյուղական աղքատության եւ անհավասարության հաղթահարման ուղորտում քաղաքականության հիմնական գերակայությունների շարքում կարելու է նաեւ միկրովարկավորման համակարգի ներդրումը:

ՄԱԿ-ի զարգացման ծրագրի փորձագետ, տնտեսագիտության թեկնածու Արմինե Բաբայանը, միկրովարկավորման ուղղությամբ կատարելով իր դիտարկումները, նշեց. «Միջազգային փորձն ընդգծում է, որ բնակչության ինքնազբաղվածության ընդլայնման եւ բարեկեցության բարձրացման լավագույն մեխանիզմներից է միկրոֆինանսավորման ինստիտուտի աշխուժացումը: Վարկավորման նման համակարգը երաշխավորում է փոքր չափերով վարկերի տրամադրում սոցիալապես անապահով մարդկանց, որոնց համար գործող վարկային համակարգերը գրեթե մատչելի չեն: Այսինքն, այս դեպքում չի դրվում համարժեք գրավի առկայության կամ կանոնավոր եկամտի աղբյուրների կամ մի քանի տարիների գործունեության արդյունքների հիմնավոր ներկայացման անհրաժեշտությունը: Ընդ որում, շատ երկրներ են աղքատության հաղթահարման գործընթացում կիրառել միկրոֆինանսավորման համակարգը: Ըստ իս, աղքատության կրճատման գործում կարելու է դերակատարում կարող է ունենալ այդ համակարգը: Այսօր երկրում ստեղծվել է մի իրավիճակ, երբ աղքատության մասին խոսելիս անմիջապես փորձում ենք խոցելի խմբերի մեջ տեսնել հաշմանդամներին, ծերերին ու երեխաներին:

Մինչդեռ, մերօրյա իրականությունում միանգամայն առողջ եւ աշխատունակ բազմաթիվ երիտասարդներ ռեալ կանգնած են այդ աղքատության եզրին եւ լավագույն ցանկության դեպքում անգամ նրանք չեն կարող հայթայթել որոշակի միջոցներ ինչ-որ բան ձեռնարկելու համար, այս պարագայում կարելու է դերակատարում կարող է ունենալ միկրոֆինանսավորման համակարգը: Ավելին, միջին աշխատավարձ ստացող աշխատանքով ապահովված բնակչության համար էլ երկարաժամկետ վարկային ռեսուրսները բավարար մատչելի չեն: Թերեւս, աղքատության հաղթահարման գործում միկրոֆինանսավորման համակարգի կիրառման փորձ Հայաստանը եւս ունի: Մինչեւ այս տարի հանրապետության տարբեր մարզերում հաջողությամբ գործում էին միկրովարկային մի շարք կազմակերպություններ: Վերջիններիս կողմից իրականացված բազմաթիվ փոքր նախաձեռնություններ ու մարզերում միրովարկավորման կիրառման փորձեր լուրջ հաջողություններ են արձանագրել: Շատ անհատ ձեռնարկատերեր ու կազմակերպություններ այդ հիմնադրամների աջակցությամբ ժամանակի ընթացքում կարողացել են գրավիչ հաճախող դառնալ հանրապետությունում գործող բանկերի ու վարկային կազմակերպությունների համար: Սկսած 2006 թվականի մարտից միկրոֆինանսավորման համակարգը կանգնել է վերափոխումների առջեւ: Թե ինչպե՞ս դա կանդրադառնա անապահով բնակչության վարկային ռեսուրսների մատչելիության վրա, դեռ վաղ է դատողություններ անել: ՓՄՁ ուղորտի զարգացումն

իսկապես ԱՀՌԾ գերակայություններից է: Այս առումով ԱՀՌԾ վերանայման գործընթացում ՄԱԿ-ի զարգացման ծրագրի շրջանակներում հանրային քննարկումներ են կազմակերպվել հանրապետության բոլոր մարզերում, որոնց նպատակը հիմնական խնդիրների ու խոչընդոտների վերհանումն էր, որոնք հետագայում իրենց արտացոլումն ու լուծումների մեխանիզմները կստանան վերանայված աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրում»: Իսկ արդյո՞ք գյուղական համայնքներում հնարավորություն կլինի վարկավորման այս տեսակով փոքր-ինչ մեղմացնել ֆինանսական միջոցների հասանելիությունը, Արմինե Բաբայանը ներկայումս գործող օրենսդրության պարագայում դժվարացավ դա հաստատել, քանի որ օրենսդրոեն չկա միկրովարկավորում հասկացության հստակ սահմանում: «Կարծում եմ, որ սա խնդիր է, որի շուրջ պետք է ոչ թե հրապարակային ելույթներ ու բանավեճեր ունենալ, այլ պարզապես մասնագիտական քննարկումների արդյունքում գտնել Հայաստանի իրականությանը լավագույնս համապատասխանող մոդելը: Համոզված եմ, որ միկրոֆինանսավորման դասական մոտեցումների որոշակի տեղայնացման պայմաններում կարելի է կենսունակ համակարգ ձեւավորել»:

Ինչ վերաբերում է հաճախակի արժարծվող հիմնախնդիրներին, ապա արդյունաբերողների եւ գործարարների միության նախագահի խորհրդական, ԱՀՌԾ աշխատանքային խմբի անդամ Սուսաննա Խալաթյանի համոզմամբ, թեւ օրենսդրական դաշտը իսկապես բարելավվել ու հստակեցվել է ձեռնարկությունների գրանցման ընթացակարգերի պարզեցման առումով, այնուամենայնիվ, առաջ է բերում նաեւ հետեւյալ տեսակետը: «Այսօր մեր հասարակության մեջ «խնամակալության» սկզբունքը մեծ դեր է խաղում նաեւ գյուղական համայնքներում՝ գործարարների շրջանում առաջացնելով արհեստական խոչընդոտներ: Այսինքն՝ մեզանում չկա այն գործարար բարենպաստ մթնոլորտը, որը եւ նպաստի անհատ ձեռներեցներին տնտեսական գործունեությամբ զբաղվելու, հետեւապես եւ աշխատատեղեր ստեղծելու համար: Սկսնակ գործարարներին պետք է աջակցություն ցուցաբերեն նաեւ մարզերի ՏԻՄ-երը, ՓՄՁ ԶԱԿ-ը իր մասնաճյուղերով, առեւտրաարդյունաբերական պալատներն ու համապատասխան հասարակական կազմակերպությունները», - նշում է Ս. Խալաթյանը՝ կարելու էլով նաեւ բիզնեսի վարկավորման անմատչելիության խնդիրը եւ փաստելով այն մասին, որ առաջարկը այս դեպքում գերազանցում է պահանջարկին, քանի որ վարկերի տրամադրման պայմաններն ու ժամկետները գրավիչ չեն գործարարների եւ հատկապես փոքր եւ միջին ձեռնարկատերերի համար, ովքեր չունեն համապատասխան եկամուտներ բոլոր հարկատեսակները եւ սոցիալական վճարումները, այդ թվում նաեւ բանկային տոկոսադրույքները մարելու համար:

Այն փաստը, որ սկսնակ փոքր եւ միջին ձեռնարկատերերի համար հարկ վճարելը եւ առհասարակ հարկերի վճարման գործընթացներին առնչվելը ամենահա-

ճախակի հանդիպող խնդիրներից մեկն է, փորձեցինք պարզել նաև հարկային պետական ծառայության դիրքորոշումը այս խնդրի կապակցությամբ: ԴՊԾ-ի պետի տեղակալ Արմեն Ալավերդյանը նախ փորձեց հարկ վճարելու քաղաքականությունը նմանեցնել բիզնեսի ծավալման հետ, նշելով, որ բիզնեսի կառավարման, հաշվառման, աշխատավարձերի եւ այլ գործընթացների հիմքում որպես պարտականություն ներառված է նաև պետությանը հասանելիք գումարը օրինական ճանապարհով վճարելը: Դրա բացակայության պարագայում Արմեն Ալավերդյանը դժվարանում է խոսել տնտեսության կառուցման եւ առհասարակ ՓՄՁ ոլորտի զարգացման մասին: «Հարկերի վճարման միայն 75 տոկոսը խոշոր հարկատուներն են, փոքր եւ միջին ձեռնարկատերերը պետք է գիտակցեն, որ իրենք իրենց մասնաբաժինը պետք է ունենան տնտեսության կառուցման գործընթացում: ՓՄՁ ոլորտում 20 հազարից ավելին կազմում են պարզեցված հարկ վճարողները, որոնց ցուցանիշը 320 մլրդ դրամի մեջ ընդամենը 8 մլրդ է կազմում՝ հասնելով ընդամենը 2 տոկոսի: Նախ պետք է հասկանալ, թե ո՞րն է հարկ վճարելու բարդությունը՝ ստուգման ենթարկվելը, հաշվետվություն ներկայացնելը, թե՞ գումար վճարելը: Իսկ դրույքաչափերը ԱՊՀ անդամ երկրների եւ մյուս այլ երկրների հետ համեմատ ցածր են: Օրինակ՝ պարզեցված հարկի դրույքաչափն ընդամենը 3,5 տոկոս է, եւ եթե մենք նշում ենք բարձր դրույքաչափը եւ հիմնավորում ենք, թե այն բարձր է, ուրեմն պետք է մտածենք այն ուղղությամբ, որ համատարած պարզեցված հարկ վճարողները նույնիսկ ցածր վճարման պարագայում չթաքցնեն իրենց եկա-

մուտները: Իսկ ՓՄՁ ոլորտում եւ առհասարակ ԱՅՈԾ-ի մասին խոսելիս պետք է հիմնվել այն պարզ ճշմարտության վրա, որ աղքատությունը չի կրճատվի, քանի դեռ պետության բյուջեն հարուստ չէ: Աղքատության կրճատման ամենահզոր ֆինանսական լծակը պետական բյուջեն է, եւ բացի աշխատատեղեր ստեղծելուց, պետք է ունենալ ուժեղ, կայուն բյուջետային եկամուտներ, որոնք եւ կնպաստեն աղքատության կրճատմանը, քանի որ բյուջեն իր հերթին կֆինանսավորի բյուջետային աշխատողներին՝ լուծելով ցածր վարձատրության հարցը:

Բյուջետային եկամուտների ավելացումը հնարավորություն կտա նաև սոցիալական, կրթական, առողջապահական ոլորտներին ուղղված լրջագույն ծրագրեր իրականացնել: Աղքատությունը կարող է կրճատվել միայն նման եկամուտներ ունենալու պարագայում: Եթե մենք չկարողանանք ավելի բարձր հարկեր ապահովել նախորդ տարվա համեմատ, ապա չենք կարող լուծել աղքատության կրճատման հարցը», - նշեց հարկային պետական ծառայության պետի տեղակալը:

Եթե միայն այս տարվա դեկտեմբերի 1-ի դրությամբ տրամադրված 79 երաշխավորությունների գծով ակնկալվում է ստեղծել 302 նոր աշխատատեղ, որից 129-ը կամ 42,7 տոկոսը՝ արտադրության ոլորտում, 56-ը կամ 18,6 տոկոսը՝ ծառայությունների եւ 117-ը կամ 38,7 տոկոսը՝ առևտրի ոլորտներում, ուրեմն հաստատապես արժե խոսել ՓՄՁ ոլորտի զարգացման լուրջ հեռանկարներից, որի մասին, թերեւս, վկայում են ցուցանիշները:

*Լուսինե ՆԱԶԱՐՅԱՆ*



1 Դեկտեմբերի 2006թ.

# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԿՅՈՒԹՅՈՒՆ

**ՓՄՁ պետական աջակցության տարեկան ծրագրերի շրջանակներում «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամը (ՓՄՁ ՋԱԿ) 2004թ.-ից իրականացնում է «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության ծրագիրը»:**

Ծրագրի արդյունքում սկսնակ գործարարները ձեռք են բերում գիտելիքներ և հմտություններ մարքեթինգի, կառավարման, բիզնեսի պլանավորման, ինքնարժեքի հաշվարկման, ֆինանսների պլանավորման, ինպես նաև տեղակատվություն ստանում ՀՀ հարկային դաշտի, հաշվապահության, պետական գրանցման ընթացակարգի և այլ հարցերի շուրջ: Հաշվի առնելով սկսնակ գործարարների վարկավորման հնարավորություններն ընդլայնելու ու վարկավորման պայմանները բարելավելու անհրաժեշտությունը, Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ը, համագործակցելով Հայաստանում ՄԱԿ-ի գրասենյակի և Միացյալ Թագավորության միջազգային զարգացման դեպարտամենտի (ՄԹ ՄՁԴ) հետ, 2006թ. հոկտեմբերին սկսնակ գործարարներին ֆինանսական աջակցության նպատակով ձևավորել է դրամագլուխ 7 մլն դրամի (մոտ 18.5 հազ. ԱՄՆ դոլար) չափով: Լավա-

գույն գնահատականի արժանացած գործարար ծրագրերը կներկայացվեն վարկավորման, ընդ որում, վարկային պարտավորությունը Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի կողմից երաշխավորվում է 100%- ով: Վարկը տրամադրվում է հետևյալ պայմաններով, առավելագույն չափը՝ 1 մլն դրամ, տարեկան տոկոսադրույքը՝ 12%, առավելագույն ժամկետը՝ 3 տարի: Արդեն իսկ վարկավորման գործընթացում են 3 սկսնակ գործարարներ: Նշենք, որ 2006թ. 10 ամիսների ընթացքում «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության» ծրագրերը իրականացվել են միայն ՀՀ մարզերում և աջակցություն է տրամադրվել 112 սկսնակ գործարարների, որոնցից 16-ը գրանցվել են որպես անհատ ձեռնարկատեր կամ առևտրային իրավաբանական անձ, իսկ 24-ը՝ գտնվում են գրանցման փուլում:

*Աննա Հակոբյան*

ՀԱՊԱՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

9 Նոյեմբերի 2006թ.

# ԱՌԾ ՎԵՐԱՆԱՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅ



## Աղքատության հաղթահարման ռազմավարական տնօրինումը հոգեվարձի համբերին

Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի (ԱՌԾ) վերանայման գործընթացն սկսվել է 2006 թ. մայիսից: Այս ընթացքում բազմաթիվ քննարկումներ են կազմակերպվել՝ ԱՌԾ քաղաքականությունն ամբողջացնելու նպատակով: Երեկ մեկնարկեց սոցիալական ոլորտի քննարկումների շարքը: Այն սկսվեց «Հատուկ կարիքներով բնակչության խմբերի հիմնախնդիրների» քննարկմամբ, որին մասնակցում էին ՀՀ պետական կառավարման մարմինների, ՀԿ-ների, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, անկախ փորձագետներ:

«Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը երկրի հիմնարար փաստաթղթերից մեկն է, - ասաց ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի փոխնախարար Արծվիկ Մինասյանը: - Դրա հիմնական նպատակներից է սոցիալապես խոցելի խմբերին աղքատությունից հանելը, հասարակության մեջ նրանց ինտեգրվելու հնարավորությունն ընձեռելը, հավասար հնարավորությունն ապահովելը»:

Սակայն այս խմբին վերաբերող ձեւակերպումներով այդ հիմնարար փաստաթուղթն առանձնապես հարուստ չէ: Ակնկալվում է, որ քննարկումների արդյունքում ծնված առաջարկները կօգնեն համալրելու այն:

Բնակչության հատուկ կարիքներ ունեցող խմբերից ամենահիմնականը հաշմանդամներն են, որոնց թիվը, ըստ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության տվյալների, հանրապետությունում 140 հազար է: Մասնագետները գտնում են, որ այդ խմբի կրթական, առողջապահական, սոցիալական, հոգեբա-

նական խնդիրների լուծումը կնպաստի աղքատության նվազմանը: Այսօր հաշմանդամների 58 տոկոսն է համարվում աշխատունակ, սակայն աշխատում է միայն 8 տոկոսը:

«Դա շատ ցածր տոկոս է, - ասում է ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի հաշմանդամների եւ տարեցների հիմնահարցերի վարչության պետ Ջենմա Բաղդասարյանը: - Այսօրվա մեր քաղաքականությունը եւ 2006 թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած նոր օրենքը սահմանում են այն դրույթները, որոնք նպաստելու են հաշմանդամների զբաղվածության խթանմանը»:

Ենթադրվում է, որ ԱՌԾ վերանայման ընթացքում կարվեն առաջարկություններ, որոնք հիմնարար փաստաթղթում տեղ կգտնեն կոնկրետ միջոցառումների տեսքով, իսկ ոլորտի հետագա քաղաքականությունը կկառուցվի դրանց համապատասխան: Հատկապես կարելու են հաշմանդամությունը կամխարգելող միջոցառումները, որոնք հիմնականում քաղաքաշինական եւ բնապահպանական բնույթի են: Արդեն հաշմանդամի կարգավիճակ ունեցողների համար աշխատանքային գործընթացում ներգրավող ծրագրեր կարող են լինել, իսկ աշխատելու հնարավորությունն չունեցողների համար՝ եկամտով ապահովման ծրագրեր:

Մեր երկրում հաշմանդամների համար դեռ երկար ժամանակ օրակարգային կլինի թեքահարթակների խնդիրը, որոնք սայլակով տեղաշարժվող մարդուն ազատ տեղափոխվելու հնարավորություն կտան: Մեզանում շատ քիչ շինություններ թեքահարթակներ ունեն: Դատելով այն բանից, որ Եվրոպայում շուրջ 60 տարի է տեւել փողոցները, մայթերն ու շինությունները հաշմանդամ մարդկանց տեղաշարժմանը հարմարեցնելու գործընթացը, իսկ մենք դեռ նոր ենք սկսել այդ աշխատանքները, բնականաբար, մեր հաշմանդամները դեռ երկար պիտի սպասեն: Այսուհանդերձ, դեռեւս այս տարվա սկզբին կառավարությունը հաստատել է հաշմանդամների համար մատչելիության ապահովման կարգը, իսկ մինչեւ տարեվերջ քաղաքաշինության նախարարությունը պարտավորվել է մշակել համապատասխան նորմատիվները:

ԱՆՈՒՇ  
ՍԱՄՎԵԼՅԱՆ



9 Նոյեմբերի 2006թ.

# ԻՆՉ ՍՊԱՍԵՆ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻՉ ՀԱՇՄԱՆՊԱՄՆԵՐԸ

## «ՏԵՍԱՆԵԱ ՁՄԵՌՎԱԾ ՀԱԳՈՒՄՑ ՈՒՂԱՐԿԵՂ ԵՆ ԱՄԵՐԻԿԱՅԻՆԵՐԸ»

Երեկվանից «Կոնգրես» հյուրանոցում աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի շրջանակներում (ԱՅՌԾ) մեկնարկեց սոցիալական ոլորտի քննարկումների շարքը: Սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին արդեն 25 քննարկումներ են եղել Երեւանում եւ մարզերում:

Նոյեմբերի ընթացքում աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի աշխատանքային խումբը նախատեսում է անցկացնել եւս 20 քննարկումներ առողջապահության, կրթության, սոցիալական ապահովության, գյուղի, բնապահպանության, կոռուպցիայի եւ այլ թեմաներով: Այդ քննարկումները պիտի օգնեն հաղթահարել այս ասպարեզներում առկա խնդիրները եւ կրճատեն աղքատությունը մեր երկրում:

«Ինչ-որ մի հարց պիտի լուծվի<sup>օ</sup>, թե՞ սա ընդամենը «պտիչկայի» համար է», - քննարկումից առաջ (որն այս անգամ նվիրված էր հաշմանդամներին), ինքն իրեն բարձրաձայն հարց էր տալիս «Աստղաբնակ» հաշմանդամ երեխաների ծնողների հասարակական կազմակերպության նախագահ Տիգրանուհի Սուքեյանը՝ անհարգալից կասկածանք արտահայտելով պետական ծրագրի առաքելության հանդեպ: Մասին քաղաքում գործող այս կազմակերպությունը համախմբում է 350 հաշմանդամի, ընտանիքներ կան, ուր 2-3 հաշմանդամ կա:

Ի՞նչ է ինքը սպասում աղքատության հաղթահարման պետական ծրագրից, ի՞նչ կառաջարկեր, որ ծրագիրը նախատեսեր: Տիկին Տիգրանուհին ասում է, որ իր 20, 30, 40 տարեկան ի ծնե հաշմանդամներին անկախ տարիքից ու պայմաններից պետությունն ընդամենը 5 հազար դրամ է տալիս. «Հաշմանդամները մերժված են այս երկրից, կարծես ապրում են այլ պետությունում: 5 հազարով ո՞նց պիտի յուրա գնան: Կուզեմ, որ նրանց թոշակները բարձրանան, որ իսկապես օգտվեն պետապատվերից ու առողջարաններից: Հաշմանդամը պառկում է հիվանդանոց, ասում են՝ պետապատվեր է, բայց հետո փողեր են ուզում»:

Հաշմանդամների հանդեպ սոցիալական ապահովության պետական քաղաքականությունն առաջինը ներկայացնում է ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հար-

ցերի նախարարության աշխատակազմի հաշմանդամների եւ տարեցների հիմնահարցերի վարչության պետ Ջեմմա Բաղդասարյանը:

Այսօր Հայաստանում 141 հազար հաշմանդամ կա, բնակչության ընդհանուր թվի 4 տոկոսը: Ընդհանուր առմամբ հաշմանդամների թվի աճ արժանագրվում է աշխատունակ տարիքի մարդկանց հաշվին: Հաշմանդամության պատճառներ են դառնում ոչ միայն բնածին արատներն ու ախտերը, այլեւ աշխատանքային պայմանների հետ կապված մասնագիտական հիվանդությունները, զինվորական ծառայության ընթացքում դժբախտ պատահարներն ու միջադեպերը: Հաշմանդամության խթանների շարքում առաջատարը սիրտ-անոթային հիվանդություններն են, հետո՝ ուռուցքները, նյարդային համակարգի խանգարումներն ու տուբերկուլյոզը: Հաշմանդամների մեջ որոշակի տոկոս կազմում են նաեւ Չեռնոբիլի աղետի ժամանակ Հայաստանից օգնության գնացած մարդիկ: Հանրապետությունում հատկապես ծանր է հենաշարժողական խնդիրներ ունեցող հաշմանդամների վիճակը: Շենքերն ու փողոցները կառուցվել են ոչ նրանց խնդիրները նկատի առնելով: Վարչության պետը տեղեկացնում է, որ կառավարությունը հանձնարարել է մշակել եւ մինչեւ տարեվերջ հաստատել ազգային նորմատիվներ՝ քաղաքաշինության ոլորտում նախագծային աշխատանքները հաշմանդամների խնդիրներին համապատասխան իրականացնելու վերաբերյալ:

Տեսողությունից հաշմանդամ անձանց համար 2006 թվականին պետությունը առաջին անգամ միջոցներ են նախատեսվել հատուկ տառատեսակներով գրքեր ու տետրեր հրատարակելու համար:

Հաշմանդամների 58 տոկոսն աշխատունակ տարիքի է, բայց նրանց միայն 8 տոկոսն է աշխատում: Հասկանալի է, գործատուները ոտք ու ձեռքով մարդու առաջ են չափորոշիչներ դնում, ուր մնաց հաշմանդամների: Հաշմանդամների զբաղվածությունը խթանելու համար օրենքը գործատուների համար խրախուսական միջոցառում է նախատեսել, օրինակ, հաշմանդամի աշխատավարձի մի մասը պետությունը խոստանում է ինքը վճարել, եթե գործատուն հաշմանդամին աշխատանք



տա: Բայց հաշմանդամների զբաղվածությունը դրանից չի ավելանում:

Պետական որոշումների, օրինագծերի, մարդասիրական ցանկությունների ու հայտարարությունների, անվերջ սեմինարների ու քննարկումների շրջանակներում հաշմանդամների սոցիալական վիճակը չի լավանում, ոչ էլ նրանց ավելի բարեհաճությամբ է ընդունում հասարակությունը:

Թշվառության ընդհանուր խորքի վրա անգնահատելի են այն բարերարությունները, որ ժամանակ առ ժամանակ ցուցաբերում են մեր գործարարներից ոմանք: «Ես շատ շնորհակալ եմ «Ջերմուկ» առողջարանի տնօրեն Արարատ Չակոբյանից, որ իմ կազմակերպության 20 հաշմանդամի տարին 1 անգամ ծրի բուժվելու հնարավորություն է տալիս», - ասում է տիկին Տիգրանուհին:

«Ահազանգ» հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն Ջուլիետա Երեմյանցն ասում է, որ իր կազմակերպությունը 127 հաշմանդամ անդամ ունի: «Այս պատիվ օգնությունները, հագած շորեր, հագարից մեկ՝ ուտելիքի փաթեթներ, փրկություն չեն այդ մարդկանց համար: Օգնության կարիք նրանք շատ ունեն, եւ կառավարությունը պիտի հոգա այդ մասին»:

Հաշմանդամներով զբաղվող հասարակական կազ-

մակերպությունների հույսը հիմնականում միջազգային կազմակերպությունների եւ պետական օգնության բարալիկ առուն է: Երեկ հասարակական 2 կազմակերպությունների ղեկավարները օգտագործած հագուստ էին ստացել IRD («Միջազգային օգնություն եւ ուսուցում») կազմակերպությունից: Տիկին Ջուլիետան ցածրաձայն պատմում էր, որ անցած անգամ 7 պարկ հագուստի մեջ 75 կտորը լրիվ մաշված էր, եւ ստիպված եղան հրաժարվել դրանցից: Բայց դե էլի գոհ եմ ու շնորհակալ, շատ գոհ...:

«Հաշմանդամները մեր հասարակության ամենախոցելի խավն են, պետք է օգնել նրանց, նրանք պետք է հավասար իրավունքներ ունենան, պետք է լիարժեք հնարավորություններ տալ, որ ինտեգրվեն հասարակությանը», - քննարկման խոսնակների հաջորդական ելույթները շուռումուռ էին տալիս այս կաղապարները, իսկ հասարակական կազմակերպությունների ղեկավարներն անհամբեր սպասում էին ավարտին՝ գնալու գրասենյակ եւ տնտղելու օգնություն առաքված մոր հագուստեղենի կապուկները՝ արդյոք ձմեռվա հագուստ ուղարկե՞լ են այս անգամ, ցրտերն ընկել են:

**ԿԱՐԻՆԵ  
ՊԱՆԻԵԼՅԱՆ**

**ԱՄՆ**

**ԱՐՎԱՐԾԱՆՆԵՐԻ ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՐԱԶԱՆՅԵԼ Է ԲԱՂԱՔՆԵՐԻ ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆԸ**

ԱՄՆ-ում քաղաքամերձ բնակավայրերի աղքատ բնակչության թիվը 12 միլիոն մարդ է կազմել և առաջին անգամ, բոլոր ժամանակների դիտումների ընթացքում, գերազանցել է քաղաքաբնակ աղքատների թիվը: Ինչպես հաղորդում է AP-ը, այսպիսին են ամերիկյան 100 խոշորագույն մեծապոլիսներն ընդգրկող հետազոտության տվյալները:

Ջեկույցում, որը պատրաստվել է Բրուքլինյան ինստիտուտի համար, ներկայացվում են գործընթացի մի քանի պատճառներ.

1. Արվարձանների բնակչությունն ավելի արագ է աճում, քան քաղաքի բնակչությունը, ինչը բնականաբար, հանգեցնում է աղքատության սահմանագծում ապրողների տոկոսի բնական աճին:

2. Ամերիկյան արվարձաններում աճում է հասարակության տնտեսական և ռասսայական շերտավորումը:

3. Ներգաղթյալները սովորաբար գերադասում են բնակություն հաստատել քաղաքամերձ բնակավայրերում, այլ ոչ թե քաղաքներում և, բացի այդ, նրանց եկամուտն ավելի քիչ է, քան երկրի հիմնական բնակիչները:

ԱՄՆ-ի խոշորագույն քաղաքներում աղքատ բնակչության տոկոսը արվարձանների համար առայժմ համանման ցուցանիշից բարձր է, բայց հարաբերակցության փոփոխության միտումը ակնհայտ է:

2005 թվականին ԱՄՆ-ի կառավարությունը աղքատության շեմը 3 հոգուց բաղկացած ընտանիքների համար սահմանել է տարեկան 15,5 հազար դոլար:





Բնակչության  
հատուկ կարիքներով  
խմբերի  
հիմնահարցերը երեկ  
քննարկվում էին  
«Աղքատության  
հաղթահարման  
ռազմավարական  
ծրագիր»  
շրջանակներում:



10 Նոյեմբերի 2006թ.

# ՀԵՐԹԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ` ՀԱՃՄԱՆՊԱՄԱՆԵՐԻ ԹԵՄԱՅԻՆ

Աշխատանքի եւ սոցիալական հարցերի փոխնախարար Արծվիկ Մինասյանը պատասխանելով լրագրողների հարցերին՝ կարելորեց աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը՝ այն համարելով մեր երկրի կարելորագույն փաստաթղթերից մեկը: «Կարելոր նպատակներից մեկը սոցիալապես խոցելի խմբերին աղքատությունից վեր հանելն է, հնարավորություն ընձեռելը նրանց ինտեգրելու հասարակության մեջ: Սոցիալական արդարության ամենակարեւոր սկզբունքներից մեկը հավասար հնարավորության ընձեռումն է»,- նշեց նա՝ ավելացնելով, որ սոցիալապես խոցելի խմբերն ի սկզբանե ունեն որոշակի հիմնախնդիր, որը լուծելու համար շատ կարելոր է առանձին դրույթներ նախատեսելը: ԱՅԴ-ի (Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր) վերանայման ընթացքում, փոխնախարարի հավաստմամբ՝ առաջարկություն կներկայացվի, որպեսզի փաստաթղթում լինեն կոնկրետ դրույթներ, միջոցառումներ եւ դրան համապատասխան քաղաքականություն: «Այդ պարագայում սոցիալական խոցելի խմբի ներկայացուցիչներն առարկայական այդ ազդեցությունն իրենց վրա կզգան»: Առաջարկվող դրույթներից են, օրինակ՝ հաշմանդամներին հավասար հնարավորություն ընձեռելը, որպեսզի նրանք ինտեգրվեն հասարակության մեջ, ներգրավվեն աշխատանքային գործընթացներում: Իսկ ամբողջությամբ գործունակությունը կորցրած անձանց համար եկամտի ստեղծման կամ եկամտով ապահովելու առանձին ծրագրեր կիրականացվեն: Աշխատանքի եւ սոցիալական ապահովության ոլորտի ներկայացուցիչ Ջենմա Բաղդասարյանը ներկայացրեց այս ոլորտում իրականացվող քաղաքականությունը եւ ռազմավարությունը: Անդրադառնալով հաշմանդամների կամ հատուկ կարիքներ ունեցող անձանց հիմնախնդիրներին, նա մասնավորապես նշեց, որ հաշմանդամներն ունեն հատուկ կարիքներ, որոնք կախված են նրանց հաշմանդամության տեսակից, ծանրությունից, բազմահաշմանդամությունից, ինչպես նաեւ հաշմանդամության պատճառական կապից: Հայաստանում այսօր հաշվառված է շուրջ 141.000 հաշմանդամ: Տիկին Բաղդասարյանը վստահեցրեց, որ հաշմանդամության կտրուկ աճ չի գրանցվել, պարզապես տվյալների փոփոխությունը կապված է պետական տեղեկատվական բազայի ձեւավորման հետ: Համեմատելով ԱՊՀ երկրների հետ՝ նա

նշեց, որ Հայաստանում հաշմանդամների թիվը կազմում է բնակչության 4%-ը, որն ըստ Ջ. Բաղդասարյանի՝ համարվում է ամենացածր տոկոսը: Տիկին Բաղդասարյանի տվյալներով՝ հաշմանդամ երեխաների թիվը 8300 է, իսկ կանայք կազմում են հաշմանդամների 40%-ը: Հաշմանդամության պատճառներից հիմնականը՝ 70%-ն ընդհանուր հիվանդություններն են, այնուհետեւ՝ մանկուց ձեռք բերված հիվանդությունները, զինծառայության հետ կապված վնասվածքներն ու հիվանդությունները, մասնագիտական-աշխատանքային խեղումները եւ Չեռնոբիլի ատոմակայանի վթարի վերացման աշխատանքներին մասնակցած անձինք: «Հիվանդությունների մեջ առավել ռիսկային, հաշմանդամություն առաջացնողը արյան շրջանառության կամ սրտանոթային համակարգի հիվանդություններն են, երկրորդ տեղում՝ ուռուցքային, նյարդային համակարգի, հոգեկան առողջության հիվանդություններն են եւ տուբերկուլյոզը»,- նշեց տիկին Բաղդասարյանը՝ կարելորելով հատուկ կարիքներ ունեցող հաշմանդամների խնդիրը, որոնք ողնուղեղային վնասվածքի եւ անդամահատության հետեւանք են: Հայաստանում ներկայումս սայլակից օգտվող 2300 հաշմանդամներ կան: 2006թ. նոյեմբեր ամսվա ընթացքում ԱՅԴ աշխատանքային խմբի նախաձեռնությամբ նախատեսվում է կազմակերպել ավելի քան 20 քննարկումներ եւ հանդիպումներ ինչպես Երեւանում, այնպես էլ հանրապետության տարբեր մարզերում: Քննարկումների թեմաները վերաբերում են առողջապահության, կրթության, սոցիալական ապահովության, գործարար միջավայրի, գյուղի, բնապահպանության, հանրային կառավարման, կոռուպցիայի եւ այլ ոլորտներին: Թե հաշմանդամներին ի՞նչ կտան նման քննարկումները, ցույց կտա ժամանակը: Մեր տեղեկություններով՝ ԱՅԴ-ի նման լայնածավալ քննարկումների համար ծախսվել է ավելի քան 100.000 դոլար: Լրագրողների մոտ տարակուսանք էր առաջացրել այն հանգամանքը, որ հսկայական գումար ծախսելով, քննարկումներ են կազմակերպվում, զեկույցներ են հրապարակվում, որոնց մասին վաղուց գիտենք, իսկ կոնկրետ խնդիրը լուծելու համար բյուջեում «փող չի մնում»: ԱՅԴ-ի այս քննարկման համար հսկայական գումարներ են տրամադրել նաեւ միջազգային կազմակերպությունները:

Լուսինե ՍՏԵՓԱՆՅԱՆ

# ԱՂՈԾ-Ն՝ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ

## ԾՐԱԳԻՐԸ ՊԵՏՔ Է ԱՐԴՅՈՒՄՎԵՏ ԼԻՆԻ ԲՈՂՈՐԻ ՀԱՄԱՐ

Վերջին մի քանի տարիներին ՀՀ պետական բյուջեն սոցիալական ուղղվածություն ունի, եւ դա միանգամայն բնական է աղքատության հաղթահարումը երկրի զարգացման ռազմավարական ուղղություն համարող երկրի համար: 2003 թվականին, երբ ՀՀ կառավարությունը հաստատեց Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը (ԱՀՌԾ), երկրում աղքատ էր համարվում բնակչության 42,9 տոկոսը, այդ թվում՝ 7,4 տոկոս էին կազմում շատ աղքատները: Բնականաբար, աղքատություն կոչվածն առավել սրությամբ զգում են սոցիալական խոցերի խմբերը: Այսպես. 3 եւ ավելի երեխա ունեցող ընտանիքներում 2003 թվականին աղքատության մակարդակը 66,1 տոկոս էր, բազմանդամ ընտանիքները (6 եւ ավելի) 57 տոկոս աղքատության մակարդակ ունեին: 5 տարեկան եւ ցածր տարիքի երեխաներ ունեցող տնային տնտեսությունների աղքատության ցուցանիշը 53,9 տոկոս էր գնահատված, իսկ գործազուրկների գլխավորությամբ տնային տնտեսությունների աղքատությունը 48,9 տոկոս էր:

Ու թեւս այդ ցուցանիշները հաջորդ իսկ տարվանից նվազելու միտում սկսեցին դրսևորել, շնորհիվ ԱՀՌԾ սոցիալական քաղաքականության եւ համախմբված բյուջեից հատկացվող միջոցների, սակայն մինչեւ երկրում աղքատության վերջնական կամ առավելագույնս հաղթահարումը ԱՀՌԾ-ն դեռ երկար լինելու է մեր երկրի զարգացման հիմնական ուղեցույց-փաստաթղթերից մեկը: Այն, սակայն, չի կարող լինել քարացած եւ մնալ անձեռնմխելի, քանի որ հասարակության զարգացման յուրաքանչյուր նոր աստիճան պահանջելու է վերանայել ռազմավարությունը: Այսօր ԱՀՌԾ իրականացման աշխատանքները համակարգող խորհուրդը, ինչպես եւ ողջ հասարակությունը, ծրագրի հաստատումից երեք տարի անց, առաջին անգամ վերանայում է փաստաթուղթը: Վերանայման գործընթացի համար խորհուրդը սահմանել է երկու կարեւոր սկզբունք. այն պետք է լինի մասնակցային, այսինքն՝ մասնագիտական եւ հանրային քննարկումների արդյունքում պետք է հստակեցվեն ծրագրում կատարվելիք փոփոխությունները, եւ դրանք պետք է լինեն իրատեսական. անհնաստ է պլանավորել այն, ինչի իրականացման հավանականությունը փոքր է՝ ֆինանսական կամ այլ պատճառներով:

### Առաջարկություններ՝ փաթեթով

Թե ինչպիսի եւ որքան առաջարկություններ կարվեն քննարկումների ընթացքում, եւ դրանցից քանիսը կընդգրկվեն ԱՀՌԾ-ի վերանայված տարբերակում, պարզ կդառնա ավելի ուշ: Սակայն ի՞նչ նկատառումներ եւ առաջարկություններ ունեն սոցիալական ոլորտի մասնագետները եւ ոլորտին առնչվող անձինք, փորձեցինք պարզել մինչեւ քննարկումների ավարտը: ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Արծվիկ Մինասյանն Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրում առաջարկում է փոփոխությունների իր «փաթեթը»՝ սոցիալական ամեն մի ուղղության համար առանձին:

Սոցիալական թերեւս ամենախոցելի խմբի՝ հաշմանդամների եւ հատուկ կարիքավոր անձանց վերաբերյալ նրա տեսակետները հիմնովին կիսում է հաշմանդամ երեխաների ծնողների «Աստղիկ» միության նախագահ, ԱՀՌԾ համակարգող խորհրդի անդամ Լեւոն Ներսիսյանը:

«Լրացուցիչ օգնություն կամ լրացուցիչ նպաստ՝ 1-ին եւ 2-րդ խմբի հաշմանդամի խնամելու դեպքում», - առաջարկում է Ա. Մինասյանը:

«Եթե ուզում եք օգնել հաշմանդամ երեխային, պետք է օգնեք հաշմանդամ երեխա ունեցող ընտանիքին: Պետք է ունենալ համայնքային մատչելի ծառայություններ հաշմանդամ երեխաների համար, որպեսզի եւ երեխան մնա ընտանիքում, եւ մայրը (կամ խնամակալը) ստիպված չլինեն սահմանափակել իրենց գործունեությունը», - հավելում է Լ. Ներսիսյանը:

«Հասարակության մեջ հաշմանդամ անձանց ինտեգրմանը խոչընդոտող հանգամանքների դեպքում մշակել լրացուցիչ ծրագրեր, հատկապես՝ ինքնուրույն տեղաշարժվել չկարողացող հաշմանդամների համար», - առաջարկում է փոխնախարարը:

«Միջավայրի մատչելիություն՝ թեքահարթակներ տրանսպորտում, հասարակական վայրերում, շենքերի մուտքերի մոտ, - լրացնում է ՀԿ նախագահը, - դրանք ոչ միայն հաշմանդամներին, այլեւ ծերերին ու երեխաներին են անհրաժեշտ: Եվ առաջին հերթին՝ պետական մարմիններում՝ քաղաքապետարան, գյուղապետարան եւ սոցիալական օբյեկտներում»:

«Ինքնօգնության ծրագրերի միջոցով՝ հաշմանդամների եւ հատուկ կարիքավոր անձանց համար լրացուցիչ եկամուտների ապահովում, ներգրավում աշխատանքի մեջ կամ անհատական ձեռնարկատիրությամբ զբաղվելու հնարավորություն»,- տեսակետ է առաջ քաշում Ա. Մինասյանը:

«Աջակցել երիտասարդներին, որ կարողանան իրենց կյանքում կազմակերպել, որ հաշմանդամ երեխաներն էլ ապագա ունենան,- իր առաջարկի իրատեսությամբ վստահ՝ ասում է Լ. Ներսիսյանը:- Ձուտ ֆիզիկական խնդիր ունեցող, սայլակի վրա գտնվող հաշմանդամը կարող է աշխատել համակարգչի վրա: Պետք է խրախուսել ձեռնարկատերերին, որ հաշմանդամներին ներգրավեն աշխատանքում: Ծրագրային մոտեցում է պետք: Պետք է ստեղծել այնպիսի պայմաններ, որ գործատուն ինքն ուզենա հաշմանդամին աշխատանքի ընդունել»:

ՀԿ նախագահը նաեւ առաջարկում է սոցիալական ծառայությունների տարածքային գործակալություններում հաշմանդամներին աջակցող, նրանց ծառայություններ մատուցող կառույցներ ունենալ, որտեղ կաշխատեն հատուկ որակավորում ունեցող մասնագետներ:

ԱՅԴԾ-ում զբաղվածությանն ուղղված ծրագրերը մինչեւ 2005 թ. վերջերը հիմնականում պասիվ են եղել: Այլ վայր աշխատանքի տեղավորման համար իրականացվող ծրագրերը, գործազուրկների մասնագիտական ուսուցման, կողմնորոշման ծրագրեր ավելի ուշ ներդրվեցին: «Առաջարկում ենք, որ վերանայված տարբերակում ակտիվ ծրագրերը գերակշռեն եւ նպատակաուղղված լինեն ոչ թե անձանց խնամառությունը ստանձնելու միջոցով օգնություն ցույց տալուն, այլ օժանդակելուն՝ իրենց կարողությունները վեր հանելու եւ իրենք իրենց օգնելու սկզբունքով»,- ասում է ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի տեղակալը:

Անձին ֆինանսական միջոցների տրամադրումը՝ գործ սկսելու համար, նաեւ տարածքային քաղաքականության մաս է, ինչը նպատակաուղղված է ամբողջ հանրապետության, զերազանցապես սահմանամերձ շրջանների եւ հեռավոր գյուղերի բնակչության աշխուժացմանը, սեփական ուժերի հանդեպ վստահության ամրապնդմանը:

Առաջարկվում է ԱՅԴԾ-ում ներառել աշխատանքի եւ աշխատավարձի քաղաքականությունը՝ աշխատողի տարրական իրավունքների պաշտպանությունից մինչեւ աշխատանքում ողջ ներուժը իրացնելու հնարավորությունը: Այդ քաղաքականությունը մշակելիս պետք է հաշվի առնել մեր ստանձնած միջազգային պարտավորությունները՝ աշխատանքի առողջ, անվտանգ պայմանների ապահովումը: Իսկ աշխատավարձը համարել տնտեսական կատեգորիա: Այն սահմանելիս հիմք ըն-



դուներև ոչ միայն ստեղծված արդյունքում անձի կատարած ներդրումը եւ այդ արդյունքի շուկայական արժեքը, այլեւ այն ստեղծող անձի խնամքի տակ գտնվող անձանց թիվը:

Փոխնախարարը կարելու է հանրային ծառայության վարձատրության ռազմավարությունը: Պետության եւ համայնքների կողմից վարձվող պաշտոնատար անձանց կամ ծառայողներին վճարվող հատուցումը որքան համարժեք լինի կատարած ներդրմանը, այնքան ավելի արդյունավետ աշխատող պետական եւ համայնքային համակարգ կունենանք: Եվ եթե պետական համակարգը սկսի պատշաճ եւ հավասարակշռված աշխատավարձ վճարել, մասնավորն էլ ստիպված կլինի համարժեք պաշտպանություն կամ վճար առաջարկել, որպեսզի կանխի իր աշխատողների հոսքը պետական համակարգ:

Սոցիալական աջակցության ոլորտին վերաբերող նկատառումները գուցե փոքր-ինչ հավակնոտ թվան, սակայն բխում են մեր ազգային նկարագրից: ԱՅԴԾ-ում պետք է հաշվի առնել, որ Սահմանադրությունը եւ ընտանեկան օրենսգիրքը ընտանիքի հիմքում դրել է ծնողների՝ զավակներին աջակցելու եւ զավակների կողմից ծնողներին պահելու պարտականությունը: Հետեւաբար, անձի կարիքավորությունը գնահատելիս պետք է հաշվի առնել նրա ունեցած ընտանեկան, արյունակցական կապերը: Թե չէ՝ հաճախ նպաստների համակարգից օգտվում է առանձին տնտեսություն վարող, սակայն հարուստ ու բարեկեցիկ կյանքով ապրող որդիներ ունեցող ծնողը: Լինում է եւ այնպես, որ անձը թեւ հարազատներ ունի, սակայն նրանք ի վիճակի չեն հոգալ նրա կարիքները: Այդ ժամանակ պետությունը պարտավոր է հոգալ իր կարիքավոր քաղաքացու մասին:

Արժվիկ Մինասյանը միանշանակ այն կարծիքին է, որ ԱՅԴԾ-ում պետք է արտացոլված լինի պետության ժողովրդագրական քաղաքականությունը: Նրա մեկնաբանությամբ՝ այն կապված է երկրի ազգային անվտանգության խնդիրների հետ, եւ աշխատանքային ռեսուրսների առուժումը խիստ կարեւոր է մարդկային գործունի

հաշվի առնելը: Հատկապես ժողովրդագրական քաղաքականության երկու տարր՝ մարդկանց բնական աճը եւ միգրացիոն տեղաշարժը ԱՀՌԾ-ի վերանայված տարբերակում արտահայտված լինեն:

«Ցանկացած միջոցառում ԱՀՌԾ-ի շրջանակում պետք է դիտարկել ժողովրդագրության պրիզմայով. որքանով են ձեռնարկվող միջոցները նպաստում Հայաստանի քաղաքացու սոցիալ-տնտեսական պայմանների բարելավմանը, նրա եւ ընտանիքի անդամների գոյատևելու եւ զարգանալու հնարավորությանը», - համոզված է փոխնախարարը:

Ինչ վերաբերում է ընտանիքին, ապա վերջինիս հանդեպ պետական քաղաքականությունը նույնպես պետք է ԱՀՌԾ-ում տեղ գտնի: Առավել եւս՝ աղքատ ընտանիքների հանդեպ այնպիսի մեխանիզմներ կիրառել, որ արժանապատիվ կյանք ունենան՝ կարողանան երեխաների հոգսերը հոգալ, պատշաճ կրթություն ապահովեն նրանց համար, եւ իրենց համար տեսանելի լինի իրենց զավակների ապագան:

Սոցիալական մեկ այլ խոցելի խմբի՝ կենսաթոշակառուների սոցիալական պաշտպանությունն ապահովելը Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրում առաջնահերթություններից մեկը պետք է լինի: Ենթադրվում է, որ բացի սոցիալական ապահովության պետական հիմնադրամի բյուջեում եկամուտների աճից եւ աշխատանքային ստաժից կախված կենսաթոշակների տարբերության ավելացումից, ԱՀՌԾ-ում նոր դրույթներ կմշակվեն: Չնայած սոցիալական ոլորտը արմատական բարեփոխումների փուլում է, սակայն կենսաթոշակային բարեփոխումները դեռեւս ետ են մնում: Դրա վերաբերյալ տարբեր տեսակետներ կան: Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության առաջ քաշած տեսակետները բխում են նույն սկզբունքից՝ ցանկացած բարեփոխում չի կարող սոցիալական պաշտպանությունից դուրս լինել:

Սոցիալական քաղաքականության եվս մեկ ուղղություն՝ գենդերային քաղաքականությունը, ամրագրված է ինչպես միջազգային բոլոր փաստաթղթերում, այնպես էլ մայր օրենքում, սակայն ոչ ԱՀՌԾ-ում: Անգամ մեր երկրի բյուջեներում՝ համայնքային կամ պետական, գենդերային հավասարակշռությունն անտեսված է: Առաջարկը՝ ԱՀՌԾ-ով կամ դրա հիման վրա որեւէ կառույցի միջոցով յուրաքանչյուր ծրագրի իրականացման ժամանակ հաշվի առնել այն, բխում է սոցիալական արդարության սկզբունքից:

Ավելորդ է ասել, որ այսօր որեւէ բնագավառում աշխատանքների կազմակերպումն անհնար է պատկերացնել առանց նոր տեխնոլոգիաների կիրառման, հատկապես, երբ գործ ենք ունենում մեծ ծավալի ինֆորմացիայի հետ: Իսկ սոցիալական ոլորտում ինֆորմացիայի պակասից դժվար է բողոքելը: Այդ ամենը հավաքվում, համակարգվում, վերլուծվում եւ ըստ անհ-

րաժեշտության ուղղորդվում է «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոնում: Կենտրոնի տնօրեն Հայկ Չոբանյանի կարծիքով՝ «տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման անհրաժեշտությունը ԱՀՌԾ-ում պետք է ֆիքսվի որպես առանձին ուղղություն, որպես պետական կառավարման ոլորտում արդյունավետության բարձրացման գործիք»:

Վերջինը ենթադրում է կառավարման ոլորտի արդիականացում՝ էլեկտրոնային կառավարում, էլեկտրական ռեսուրսների ստեղծում եւ էլեկտրոնային ժողովրդավարություն, ասել է թե՛ պետություն-հասարակություն կապի ապահովում էլեկտրոնային միջոցներով, երբ քաղաքացին իրեն անհրաժեշտ ինֆորմացիան կստանա համակարգչի առջեւ նստած, առանց որեւէ տեղ գնալու:

Կարելի է ասել, որ երբ այդ հնարավորությունը մատչելի կդառնա հանրության ավելի լայն շրջաններին, դա եւս մեկ քայլ կլինի աղքատության հաղթահարման գործում:

\* \* \*

**Աղքատությունը բազմաշերտ երեւոյթ է: Այն գնահատելիս ճիշտ չի լինի հաշվի առնել դրա միայն նյութական, կենսաբանական կողմը, մարդկային աղքատություն կոչվածը այլ բաղադրիչներ էլ ունի իր մեջ, մարդու՝ հասարակության մեջ ունեցած դերը, նրա մասնակցությունը զանազան ծիսակատարություններին, նաեւ՝ մշակութային միջոցառումներին, կրթություն ստանալու առողջապահական խնդիրները լուծելու հնարավորությունը: Այսինքն՝ մարդը որպես հասարակական էակ:**  
**Որքա՞ն ժամանակ է պետք, որպեսզի մեր երկիրը հասնի զարգացման այնպիսի մակարդակի, ԱՀՌԾ-ն այլեւս վերանայման կարիք չունեն կամ գոնե վերանայումների միջեւ ընկած ժամանակահատվածը երկարատեւ լինի, ինչը կայուն զարգացման հետեւանքը կլինի: Այդ հարցին այսօր հազիվ թե որեւէ մեկը ճշգրիտ պատասխան տա: Սակայն մի բան անժխտելի է. հասարակությունն ինքը պետք է տեսնի ոչ միայն աղքատության հաղթահարման ջանքեր, այլեւ դրա արդյունքը զգա իր առօրյա կյանքում եւ իր մաշկի վրա: Եվ, իհարկե, գնահատի այն:**

ԱՆՈՒՇ  
ՍԱՄՎԵԼՅԱՆ



7 Դեկտեմբերի 2006թ.

## ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ ՊԵՏՔ Ե ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԻ ԻՐԱԿԱՆ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՄԱՆԸ

### Այլ ոչ թե «հիմնական կարիքների» կամ «կենսաբանական պահանջմունքների» բավարարմանը

Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի (ԱՅՈՒԾ) վերանայման անհրաժեշտությունն անժխտելի է: Ողջունելի է նաեւ, որ ԱՅՈՒԾ վերանայման աշխատանքային խումբն այդ նպատակով պատրաստ է հասարակական քննարկումներ ծավալել եւ առաջարկություններ ընդունել, այդ նպատակով ստեղծելով ինտերնետային էջ ([www.PRSP.am](http://www.PRSP.am)): Հայաստանում արձանագրված տնտեսական աճն ու մի շարք այլ գործոններ ծրագրում շտկումների անհրաժեշտություն են առաջացրել: Բացի այդ, ԱՅՈՒԾ-ով նախատեսված մի շարք նպատակներ ժամանակավրեպ էին արդեն իսկ ընդունման ժամանակ: Դրանց վերանայումն ավելի իմաստալից եւ իրական կդարձնի ծրագիրը: Այստեղ առաջնայինը, նախեւառաջ, աղքատության սահմանագծի փոփոխումն է:

Հիշեցնենք, որ 6 տարի առաջ, 1999 թվականին, նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը 1 չափահաս անձի համար ընդունվել էր ամսական 12 հազար դրամը: Այսինքն, այդ սահմանագիծը հատող անձինք արդեն համարվում էին ոչ աղքատներ: Այս սահմանագիծն ընդունվել էր ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) իրականացրած տնային տնտեսությունների հետազոտության արդյունքում, հիմք ընդունելով փաստացի պատկերը: Մինչդեռ առողջապահության նախարարությունը սահմանեց մեկ այլ, բժիշկների եւ դիետոլոգների հաշվարկած նվազագույն սպառողական զամբյուղ՝ 26 հազար դրամ արժեքով: Ակնհայտ է, որ 12 հազար դրամ աղքատության սահմանագիծն ընդունվել էր առանց մասնագետների տեսակետը հաշվի առնելու: Սա առաջին լուրջ պատճառն է, որպեսզի վերանայվի նվազագույն սպառողական զամբյուղի չափը:

Զնայած 2005 թ. միջին փաստացի գներով նվազագույն սպառողական զամբյուղը կազմել էր մոտ 16 հազար դրամ, դա չի կարող բավարար համարվել անզամ սնվելու նվազագույն պահանջները բավարարելու համար, չխոսելով արդեն մյուս կենսական անհրաժեշտությունների մասին: Ի դեպ, հենց ԱՅՈՒԾ առաջին բաժնի առաջին՝ «Աղքատության սահմանումները եւ գնահատման մեթոդաբանությունը» գլխում սահմանվում են այդ անհրաժեշտությունները: Մասնավորապես նշվում է, որ «այս ծրագրում աղքատության տակ հասկացվում

է կենսաբանական, սոցիալական, հոգեւոր-մշակութային նվազագույնը բավարարելու անհնարինությունը»: «Մարդն աղքատ է կամ աղքատ չէ հիշյալ երեք խմբերի համակցությամբ եւ միայն կենսաբանական պահանջումների բավարարումը չի բերելու մարդու սոցիալական հնարավորությունների մեծացման կամ աղքատության վերացման», - նշվում է ծրագրում: Սակայն դրա հետ մեկտեղ արձանագրվում է, որ Հայաստանում հետազոտությունները կատարվում են միայն կենսաբանական պահանջների ցուցանիշների հիման վրա: Այսինքն, ինչպես նշում են սոցիալական ոլորտի պատասխանատուները, Հայաստանում ոչ թե աղքատությունն է հաղթահարվում, այլ մարդու «հիմնական կարիքները»: Սակայն քանի որ ծրագիրը կոչված է աղքատության հաղթահարման ծրագիր, ապա անհրաժեշտ է, որ իրական աղքատության հաղթահարման նպատակ դրվի: Այն աղքատության, որի սահմանումը տրված է նույն ԱՅՈՒԾ առաջին գլխի առաջին բաժնում:

Հարկ է նաեւ նշել, որ վերջերս ազգային վիճակագրական ծառայությունն անցավ աղքատության մակարդակի գնահատման նոր մեթոդաբանության: Համաձայն նոր մեթոդաբանության, բացի պարենային եւ ոչ պարենային անհրաժեշտ ապրանքներից, աղքատության գիծը սահմանելիս նկատի են առնվում նաեւ երկարատե օգտագործման առարկաները: Գնահատումը կատարվում է ոչ մեկ շնչի, այլ մեկ չափահասի հաշվարկով, փոխվել են նվազագույն պարենային զամբյուղի կառուցվածքն ու էներգետիկ արժեքը: Այս ամենի արդյունքում աղքատության ընդհանուր գիծը գերազանցել է 19 հազար դրամ, ինչը որոշ առաջընթաց է 12 հազար դրամի (2005-ի գներով 16 հազար դրամի) համեմատ: Սակայն այս եզրակացությունը ԱՎԾ-ն կատարել է 2004 թ.-ին անցկացրած հետազոտությունների արդյունքների հիման վրա: Այսինքն, եթե այն հիմք ընդունվի ծրագիրը վերանայելիս, ապա արդեն ժամանակավրեպ կլինի:

Միակ տրամաբանական տարբերակն այն է, որ որպես աղքատության սահմանագիծ, այնուամենայնիվ, ընդունվի 1999 թվականին առողջապահության նախարարության հաշվարկած նվազագույն սպառողական զամբյուղը (26 հազար դրամ արժեքով 1999-ին), որի արժեքը 2005 թ. չորրորդ եռամսյակի գներով գրեթե 30 հազար դրամ էր: Նկատի ունենալով 2006 թվականին



արձանագրված գնաճը, այս ցուցանիշը ներկայումս ավելի բարձր կլինի:

Հասկանալի է, որ աղքատության այսպիսի սահմանագիծ ընդունելը մի շարք այլ նպատակային ցուցանիշների արմատական վերանայման անհրաժեշտություն կառաջացնի: Այդ նպատակների իրականացումն ավելի դժվար կլինի եւ ավելի մեծ միջոցներ եւ ջանքեր կպահանջի: Սակայն աղքատության այս սահմանագիծն ընդունելու եւ հաղթահարելու նպատակադրման դեպքում կարող ենք վստահորեն ասել, որ ԱՀՌԾ-ն

իրական աղքատության հաղթահարման, այլ ոչ թե «հիմնական կարիքների» կամ «նվազագույն կենսաբանական պահանջները» բավարարման ծրագիր է: Այսպիսի՝ ավելի բարձր աղքատության սահմանագիծ հաղթահարելը համահունչ է նաեւ Հայաստանի արձանագրած եւ առաջիկա տարիներին կանխատեսվող տնտեսական աճին: Վերջինիս ամենամեծ նվաճումը կլինի հենց իրական աղքատության հաղթահարումը:

ԱՐԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



14 Դեկտեմբերի 2006թ.

## РЕГИОНЫ ЖДУТ ПРОГРАММЫ

Порядка 40% создаваемых в нашей стране материальных и иных благ приходится на малые и средние предприятия (МСП). Они формируют средний класс, способствуют созданию новых рабочих мест и стабилизации как экономической, так и политической ситуации в стране.

Обобщив эту известную истину в сравнении - уровень развития МСП является лакмусовой бумажкой уровня развития страны и общества в целом, - обратимся к правительственной инициативе по пересмотру Стратегической программы по преодолению бедности (СППБ), которая касается и госсодействия развитию малого и среднего предпринимательства.

Пересмотр напех принятой в 2003 году СППБ в первую очередь обусловлен необходимостью повысить эффективность реализации программы на основе накопленного за эти годы опыта и вытекающих из развития страны новых социально-экономических реалий. Пересмотру, в частности, подлежит и касающийся развития МСП блок. Как объяснил руководитель рабочей группы по пересмотру СППБ, заместитель министра финансов и экономики **Сурен КАРАЯН**, в ходе доработки программы поставлена задача по акцентированию внимания государства на стимулировании развития МСП в регионах. В настоящее время сложилась ситуация, когда половина представителей МСП сконцентрирована в столице, а основным объектом бедности в стране являются регионы. Для активизации предпринимательства в регионах перед властями стоит ряд

непростых задач, из которых представитель МСП в рабочей группе **Тамара АБРАМЯН** выделяет две - обеспечение регионов развитой инфраструктурой и доступными кредитами.

В свое время для решения проблемы дорогих кредитов микрокредитные организации, не требующие залога, были введены в банковскую систему, что позволило снизить проценты с 32% до 24% годовых. Но, действуя в рамках банковской системы, микрокредитные организации стали требовать залоговых гарантий. Это при том, что объекты залога в областях не растут в цене, как это происходит в столице и прилегающих к ней районах. **“Селяне мыслят довольно трезво, утверждая, что предоставляемые Армении различными международными организациями льготные, а то и вовсе беспроцентные кредиты в конечном счете не доходят до бедных слоев - основного адресата этих средств. В результате предоставленные на борьбу с бедностью средства работают на отнюдь не бедную банковскую систему”**, - отмечает Т. Абрамян.

На этом фоне благоприятно выделяется pilotная программа правительства по гарантированию микрокредитов. В рамках этой программы посредством центров содействия развитию МСП селянам без залога и по сравнительно небольшим процентам были предоставлены кредиты. В 2005 году в целом в рамках программы правительство гарантировало микрокредитов на 195 миллионов драмов. **“Селяне положитель-**



но отзывались об этой программе, которая полностью оправдала себя. Однако банки с неохотой предоставляли кредиты под правительственные гарантии. Особенно фермеры жаловались на “Агробанк”, зачастую необоснованно отказывающий в выдаче кредита”, - рассказывает Т. Абрамян.

В целом возвращаемость кредитов на селе составляет порядка 98%. Этот показатель сводит на нет утверждение кредиторов о том, что риск кредитования на селе высок, в связи с чем и устанавливаются высокие процентные ставки. “Сами кредиторы цинично заявляют, что при наличии высокого спроса на кредиты уменьшать процентные ставки нет резона”, - отмечает Т. Абрамян. Получается и вовсе парадоксальная ситуация - вместо того чтобы бороться с бедностью, отечественные финансисты нажимают на бедности села. В правительстве осознают эту проблему, но из-за ограниченности средств финансировать из госбюджета необходимый объем гарантий кредитов затрудняются.

Другая задача, на которой акцентирует внимание правительство, - это таргетирование областей, то есть определение потенциала и приоритетов развития каждой конкретной области в различных сферах. На местах уже имеются соответствующие предложения, и предлагается включить в программу “индивидуальный” подход к каждой области. В этом русле с целью повышения эффективности реализации направляемых в село средств необходимо учитывать мнение тех людей, кому адресованы эти программы. “Дорога в одном из сел Сюникской области ремонтируется каждый год, поскольку тяжелые грузовые машины разбивают грунтовую дорогу. В итоге получается, что, несмотря на ежегодные траты, село не имеет дороги. В связи с этим сельчане предлагают не проводить несколько лет ремонтных работ, накопить средства и построить заасфальтированную дорогу”, - отмечает Т. Абрамян.

Из-за отсутствия должного контроля как над определением приоритетных проектов, так и процесса и путей их реализации примеров неэффективного использования средств международных доноров много. Оптимальным методом контроля тут видится контроль самих адресатов той или иной программы, активное вовлечение жителей в процесс определения объекта строительства, контроль над ходом реализации и предоставление им полной информации о проекте. В противном случае получается, что местные власти, сидя в кабинетах, определяют степень необхо-



димости той или иной дороги или системы орошения зачастую исходя из своих интересов, а не нужд тех людей, для кого предназначен этот объект. “Мы будем бороться за то, чтобы, как и механизм пересмотра программы идет “снизу вверх”, таким же был и процесс ее дальнейшей реализации”, - вполне резонно отмечает Т. Абрамян.

Складывается впечатление, что правительство готово расширить объем сотрудничества с общественными организациями. По крайней мере С. Караян отмечает, что в процессе пересмотра СППБ правительство пытается наметить и пересмотреть принципы развития и становления института сотрудничества с неправительственными организациями. “Для решения этой задачи привлечены и иностранные эксперты, поскольку становление системы институционального сотрудничества является одной из ключевых пунктов пересмотра СППБ. Принцип “снизу вверх”, действующий при пересмотре программы, мы постараемся применить и в процессе реализации программы для ее мониторинга и контроля”, - отмечает замминистра.

В числе иных проблем МСП - несогласованность действий различных государственных и общественных кругов, направленных на развитие общин; монополизация отдельных отраслей и укрепление драма, что приводит к гибели в первую очередь представителей МСП; жесткое фискальное законодательство и еще многое другое. В любом случае, правительство готово выслушать и рассмотреть все предложения, идущие “снизу”. А в целом, на наш взгляд, с пересмотром СППБ правительство делает амбициозную для себя попытку зафиксировать и реализовать механизмы содействия малому и среднему предпринимательству в отстающих от столицы регионах.

**РУБЕН ГРДЗЕЛЯН**



1 Դեկտեմբերի 2006թ.

# ԱՂՌԾ-ն ՎԵՐԱՆԱՅՎՈՒՄ Է

## Առողջո՞ւթյուն, Ի՞րոք, ԹՅԱԿ ԱՐԺԵ

Միշտ էլ առողջապահությունը համարվել է թանկարժեք ծառայություն, որ կարող է անմատչելի լինել ոչ միայն հասարակության աղքատ, այլև բնակչության հիմնական մասին: Ահա թե ինչու զարգացած առողջապահական համակարգ ունեցող երկրներում բնակչությանը պատշաճ նակարդակի եւ որակի բժշկական ծառայություններ մատուցելու գործը պետության հովանավորությանն է արժանանում:

Հասարակության ամենալայն խավերի հետ առնչվող այս ոլորտի անմատչելիությունն առավել ցայտուն է աղքատ եւ անցումային շրջանում գտնվող երկրներում: Պատահական չէ, որ 2003-ի օգոստոսին կառավարության կողմից հաստատված Աղքատության հաղթահարման ազգային ռազմավարության (ԱՀՌԾ) առավել կարեւոր եւ առաջնահերթ լուծում պահանջող խնդիրներն առողջապահական ծառայությունների մատչելիության ապահովումը եւ որակի բարձրացումն են:

Այս ծրագրի համատեքստում առողջապահության ոլորտում իրականացված մի շարք բարեփոխումները, օպտիմալացումն ու արդիականացումը, ինչպես նաեւ ընդհանուր ցուցանիշները նկատելի ձեռքբերումների մասին են խոսում:

Համակարգի զարգացման, բուժօգնության որակի ու մատչելիության բարելավման վրա ամիջական ազդեցություն ունեցավ ֆինանսավորման կայուն աճի միտումը: 2002-ին եթե առողջապահության բյուջեն կազմել է 16 մլրդ դրամ, ապա ընթացիկ տարում այն հասել է 39,4 մլրդ-ի:

Համեմատության համար նշենք, որ հիվանդանոցային բուժօգնության մեկ օրը համապատասխանաբար կազմել է 6000 եւ 9000 դրամ, իսկ բնակչության մեկ շնչի հաշվով ֆինանսավորումը (Per capita)՝ 1416 եւ 4597 դրամ: Զգալի բարձրացել է բժիշկների աշխատավարձը: Տեղամասային բժիշկները եթե 2002-ին ստանում էին 16 800, ապա այս տարի՝ 58 400 դրամ աշխատավարձ: Հիվանդանոցային բժշկի միջին աշխատավարձը հասցվել է 36 հազար դրամի:

Համակարգի բուժհաստատությունների ավելի քան 80 տոկոսում իրականացվել են վերանորոգման եւ վերազինման աշխատանքներ: Բացվել են ժամանակակից բուժարքավորումներով ու տեխնոլոգիաներով հագեցած բաժանմունքներ եւ կենտրոններ:

Կարելիություն են հատկապես երեխաների եւ կանանց հիմնախնդիրները: «Մոր եւ մանկան առողջության

բարելավման 2003-2015 թվականների ազգային ռազմավարության» ծրագրերով մանկական եւ մայրական մահացության իջեցման, դեռահասների առողջության բարելավման եւ այլ ուղղվածության շարունակական ծրագրերը են իրականացվում միջազգային տարբեր կառույցների աջակցությամբ:

Առողջապահության նախարարության առաջնային բուժօգնության բաժնի պետ Ռուզաննա Յուզբաշյանը կարեւորում է, որ 2006 թ. հունվարի 1-ից ամբուլատոր-պոլիկլինիկական բուժօգնության ողջ ծավալը՝ ներառյալ լաբորատոր-գործիքային հետազոտությունները եւ տնային կանչերը, բնակչության բոլոր խմբերի համար պետության կողմից երաշխավորված է կամ անվճար: Հաջողությամբ ներդրվում է ընտանեկան բժշկի ինստիտուտը: Ի դեպ, դեռ 2005-ից առողջության առաջնային պահպանության օղակում ներդրվել են բուժօգնության որակի վերահսկման չափորոշիչները:

Տիկին Յուզբաշյանը հավաստում է, որ բնակչության առողջությունը բնութագրող հիմնական ցուցանիշների վերլուծություններով տարեցտարի ավելանում է ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատություններ դիմողների թիվը:

Եթե 2002-ին առողջության պահպանման առաջնային օղակ է հաճախել 6243.8 հազար, ապա 2005-ին՝ 7731.0 հազար մարդ:

«Այս տարեսկզբից ներդրվել են պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության իրականացման հիվանդանոցային, դիսպանսեր հսկողության, հիվանդությունների եւ վիճակների, ինչպես նաեւ մի շարք այլ չափորոշիչներ: Դա կնպաստի բժշկական ծառայությունների կազմակերպման արդյունավետության բարձրացմանը:

Դեղերի ապահովվածության խնդրում կառավարությունը վարել է հասցեագրված քաղաքականություն: Բոլորվին վերջերս ընդլայնվեց անվճար եւ արտոնյալ պայմաններում դեղորայք ստացող խմբերի ցանկը: Ավելի շատ քանակությամբ դեղերով ապահովվում են նաեւ կենտրոնացված գնումներով:

Սակայն ֆինանսավորման աճին զուգընթաց լուրջ տեղաշարժեր չեն արձանագրվում, քանի որ սոցիալապես անապահով եւ հատուկ խմբերում ընդգրկված անձանց ցանկը տարեցտարի աճում է:

Մյուս կողմից, առանձին եւ հատուկ հիվանդություններով տառապողների թիվը թեեւ էականորեն չի փոխ-

վել, սակայն 2001-ին դեղերի վրա դրված ավելացված արժեքի հարկով զգալիորեն ավելացել է մեկ հիվանդի բուժման արժեքը, չհաշված՝ տարեկան սղաճը», - մեկնաբանում է Ռուզաննա Յուզբաշյանը:

«Տնտեսական իրավունքի կենտրոն» ՀԿ-ի նախագահ, առողջապահության էկոնոմիկայի փորձագետ Մովսես Արիստակեսյանն էլ ամենից շատ կարելու է ոլորտին հատկացվող միջոցների պակասը եւ արդյունավետ օգտագործումը:

«Թեեւ վերջին տարիներին պետական բյուջեից առողջապահությանը հատկացվող միջոցները զգալի ավելացել են, սակայն դեռեւս չեն բավարարում իրական կարիքները: Մեր հաշվարկներով՝ այդ կարիքը 3 անգամ ավելին է: Ընդ որում, պետության կողմից առաջարկվող ծառայությունների գների ցածր մակարդակը սահմանվում է հատկապես ի հաշիվ բժշկական սպասարկող անձնակազմի աշխատանքի ցածր վարձատրության: Բնականաբար, բացը լրացվում է ստվերային վճարներով:

Դեռեւս կանոնակարգված չէ վճարովի ծառայությունների գնադրայցման մեխանիզմը: Շատ դեպքերում այդ գները սահմանվում են պետական բյուջեից ֆինանսավորվող համանման անվճար բուժօգնության համար սահմանված գների շրջանակներում: Արդյունքում այս դեպքում եւս բուժաշխատողներն ու բուժօգնարկները «հայացք են ձգում» հիվանդների գրպաններին: Փաստորեն՝ մի կողմից բուժանձնակազմն իրոք ջանք է թափում մարդկանց բուժելու համար, մյուս կողմից ուզում է արժանապատիվ ձեռով վերձատրվի իր կատարած աշխատանքի դիմաց:

Այսօր հիվանդանոցում աշխատող բժշկի միջին աշխատավարձը 36-37 հազար դրամ է: Բայց արդյո՞ք որեւէ մասնագետ այդչափ վարձատրվելով վիրահատություններ կատարի կամ այլ բուժում կիրականացնի: Նրանք էլ դիմում են հիվանդին, որն իրենցից անմիջականորեն կախված է: Այս հարաբերությունների համար նպաստավոր պայմաններ է ստեղծում հիվանդանոցային բուժօժանդությունների բժշկատնտեսագիտական ստանդարտների եւ բուժման օպտիմալ սխեմաների, շատ տեղերում նաեւ գնացուցակների բացակայությունը:

Եիշտ է, ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայություններն այս տարվանից անվճար են բոլորի համար, սակայն մեր դիտարկումներով՝ հաճախ այնպիսի մոտեցում է ցուցաբերվում, որ մարդիկ կամ ստվերային վճարներ են կատարում, կամ նախընտրում են չօգտվել այդ ծառայություններից:

Առողջապահության տվյալների բազմագործոնային վերլուծությունը թույլ է տալիս պնդելու, որ աղքատության հաղթահարման ռազմավարության իրականացման տեսանկյունից ամենամտահոգիչ եւ առանցքային խնդիրները առողջապահական ծառայությունների եւ դեղերի անմատչելիությունն է:

Բուժօգնության մատչելիությունը հասկացվում է որպես երեք բաղկացուցիչների միասնություն՝ նյութական

եւ ֆիզիկական անմատչելիություն (մասնագետի կամ առողջապահական հիմնարկի դժվար հասանելիություն, մեծ հեռավորություն) կամ բժշկին դիմելու ժամանակի անբավարարություն:

Այս խնդիրն առավել սուր է մարզերում: ԱՀՌԾ իրականացման շրջանակներում ՄԱԿ-ի կողմից 2003-ին անցկացված «Մարդկային զարգացման ազգային հետազոտության» արդյունքներով տնային տնտեսությունների ավելի քան մեկ երրորդը «գրեթե» եւ «բոլորովին» չի կարողանում բավարարել ընտանիքի անդամների առողջության պահպանման խնդիրները: Առողջապահական ծառայությունների անմատչելիությունն առավել սուր է Լոռու մարզում (50,5 տոկոս):

Հատկապես գյուղերում մտահոգիչ է դեղերի անմատչելիությունը: Հետազոտված 170 գյուղերի մոտ 90 տոկոսում կամ դեղատուն չկար, կամ չէր գործում: Իսկ Օքսֆամի կողմից 2003-2004-ին երեք մարզերում իրականացրած ուսումնասիրություններով պարզվել է, որ գյուղաբնակների շուրջ երկու երրորդն օգտվել է մարզային քաղաքների, իսկ 10-15 տոկոսը՝ նաեւ Երեւանի դեղատներից:

Ավելացնենք, որ խիստ մտահոգիչ է դեղերի գների բարձր մակարդակը: Դեղերի գները կանոնակարգվում են պետության կողմից: Մինչդեռ մեզ մոտ դրանք չկանոնակարգվելով՝ հանձնվել են ազատ շուկայի վայրի տարերքին: Չափազանց կարելու, ռազմավարական նշանակություն ունեցող այս ոլորտը դարձել է տնտեսվարող սուբյեկտների՝ հատկապես այդ շուկայում գերիշխող դիրք գրավող օլիգարխների, գերշահույթներ ստանալու միջոց: Ավելին, նրանցից ոմանք նույնիսկ ավելացված արժեքի հարկ չեն վճարում՝ շուկայում ստեղծելով անկատար մրցակցության դաշտ:

Արդյունքում, ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների (2002թ.), դեղերի ստվերային շրջանառությունը կազմում է 70 տոկոս:

Շատ ցավալի է, որ այս պարագայում «Դեղերի մասին» ՀՀ օրենքից հանվեց դեղերի գների կարգավորման մասին բաժինը:

ԱՀՌԾ վերանայումը պետք է որ ծանրակշիռ պատճառ դառնա բժշկական օգնության եւ ծառայությունների գների կարգավորման, ստվերայնության կրճատման համար միջոցներ եւ մեխանիզմներ գտնելու համար:

Մարզերի եւ հատկապես գյուղական բնակչության առողջության պահպանման գործում պետք է բարձրացնել տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսական պատասխանատվությունը: ՏԻՄ-երի շատ ղեկավարներ առողջապահական ծառայությունների անմատչելիությունն աղքատության առաջացման կարելու գործն չեն համարում եւ պատահական չէ, որ եզակի դեպքերում են այդ ոլորտին ուղղված միջոցառումներ ձեռնարկում:

Ես մնում եմ այն կարծիքին, որ առողջապահական ծառայությունների մատչելիության ապահովման գործում չափազանց կարելու է ֆինանսավորման աղբյուրների բազմազանության ապահովումը:

Կարծում եմ, որոշիչ նշանակություն կունենա երկրում բժշկական ապահովագրության, այդ թվում՝ պարտադիր բժշկական ապահովագրության հնարավորինս շուտ ներդրումն ու զարգացումը՝ ծերբազատվելով պետության կողմից երաշխավորվող «հռչակագրային» անվճար ծառայությունների փաթեթի անիրատեսական ծավալներից»,- ասում է Մովսես Արիստակեսյանը:

## **ՀՍՏՈՒԿ ԿԱՐԻՔՆԵՐՈՒ ՊԵՏՔ Է ՏՍՐԱՆՁԱՏՎԵՆ**

«Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի» վերանայման ընթացքում հետաքրքրություն են դրսևորում հասարակական կազմակերպությունները:

«Կյանքը ցույց տվեց, որ աղքատության հաղթահարումը հենց այն խնդիրն է, որ ավելի շատ պետք է ներքեւից հասցվի կառավարությանը»,- ասում է Հայաստանի հաշմանդամ երեխաների ծնողների «Աստղիկ» միության նախագահ Լեւոն Ներսիսյանը՝ ներկայացնելով մի շարք առաջարկներ.

«Մենք առաջարկում ենք, որ նախ տարանջատվի եւ հստակեցվի հատուկ կարիքավորների խումբը: Որովհետեւ հատուկ կարիքներ ունեցողները շատ են՝ հաշմանդամները, հաշմանդամ երեխաները, միայնակ մայրերը, փողոցի երեխաները, ծերերը, անգամ՝ տաղանդավոր երեխաները եւ այլն: Մինչդեռ նրանց խնդիրները, կարիքները շատ տարբեր են:

Այսօր Հայաստանում 141 հազար հաշմանդամներ են հաշվառված, որից 11 հազարը՝ երեխաներ: Կոնկրետ հաշմանդամ երեխաների խնդիրների մասին շատ է խոսվում: Բայց, ցավոք, դրանց ավելի շատ զգացական մոտեցում է ցուցաբերվում:

Եթե ընտանիքում հաշմանդամ երեխա կա, ապա այդ ընտանիքի բոլոր հիմնախնդիրները պատվում են այդ առանցքի շուրջ: Ընտանիքի անդամներից եւս մեկը՝ հիմնականում մայրը, հոգավոր հաշմանդամ երեխայի հոգսերը, նույնպես կտրվում է կյանքից, զրկվում աշխատելու հնարավորությունից: Պետք է նման ընտանիքների հոգսը թեթեւացնենք:

Հաշմանդամությունը առողջապահական խնդիրների հետ զուգորդվող սոցիալական վիճակ է, եւ չի կարելի այն անջատել առողջապահական ծառայություններից:

Հաշմանդամ երեխաների հիմնախնդիրների լուծման համար առանձին ծրագրեր են անհրաժեշտ, ներառելով նրանց բոլոր՝ սոցիալական, կրթական, առողջապահական եւ այլ խնդիրները:

Ավելին՝ ծրագրերը պետք է անհատական լինեն՝ ելնելով հաշմանդամին անհրաժեշտ կոնկրետ ծառայություններից: Հաշմանդամ երեխաներ կան, որ կարիք ունեն պլաստիկ կամ թանկարժեք այլ վիրահատությունների, հոգեմետ դեղերի, թանկարժեք սարքերի, հատուկ սննդի եւ այլն: Հաշմանդամ երեխաների մոտ

40 տոկոսը նյարդահոգեբանական լուրջ խանգարումներ ունեն: Ծիշտ է, այս դեպքում չնախատեսված մեծ ծախսեր կպահանջվեն, սակայն կարելի է ճանապարհներ, դոնորներ գտնել հաշմանդամներին, կարիքավորության աստիճանից ելնելով, թոշակ տալու համար:

Շատ է ասվում, թե 2006-ից ամբուլատոր-պոլիկլինիկական բոլոր ծառայություններն անվճար են: Հաշմանդամների համար դրանք նախկինում էլ էին անվճար: Սակայն հասարակ մի հարց՝ արդյո՞ք պոլիկլինիկաները հասանելի են հաշմանդամներին: Իրականում շատ հաշմանդամ երեխաներով տարածքային իրենց պոլիկլինիկաներն անենելին չեն հետաքրքրվում:

Մենք կարծում ենք, որ պետք է ստեղծվեն համայնքային կենտրոններ, որտեղ հաշմանդամ երեխաները լիարժեք, պրոֆեսիոնալ մակարդակի ծառայություններ կստանան՝ կկրթվեն, իրենց ընտանիքի անդամների հետ միասին հոգեբանական ծառայություն կստանան եւ այլն: Որքան էլ կարելի է հաշմանդամներին հասարակությանն ինտեգրել, հաշմանդամներ ունենք, որ չեն կարող հանրակրթական դպրոցում նույն ծանրաբեռնվածությամբ սովորել:

Գուցե հենց այդ կենտրոններում էլ նպատակահարմար կլինի կենտրոնացնելու նաեւ հաշմանդամների բուժսպասարկումը: Այդ դեպքում երեխայի մոտ շեղումներ ի հայտ գալուն պես ծնողները կիմանան, թե ուր դիմել: Մինչդեռ շատ հաճախ տարբեր մասնագետների դիմելուց հետո բավական ուշ է իմացվում երեխայի հաշմանդամության մասին»:

ՀԿ-ի նախագահը գտնում է, որ հաշմանդամությունը, ինչպես առողջական ցանկացած խնդիր, ավելի ճիշտ է կանխարգելել: Շատ հաճախ գիտելիքների պակասի, ընտանիքի սոցիալական ծանր վիճակի, բարդ փոխհարաբերությունների արդյունքում է հաշմանդամ երեխա ծնվում: Շատ բան կարելի է սովորեցնել դեռ դպրոցական հասակից՝ կրթական հատուկ ծրագրի շնորհիվ:

«Շատ կարելու է, որ առողջապահական համակարգը հատուկ աշխատանք տանի նորաստեղծ ընտանիքների հետ՝ հատկապես հղիության շրջանում: Պետք է ժամանակին կատարվեն բոլոր հետազոտությունները: Եվ որ ամենակարելուն է՝ այդ ծառայություններն իրոք պետք է հասանելի լինեն բոլորին:

Հաջորդ քայլը վաղ հայտնաբերումն է՝ հետագա բարդություններից հնարավորինս խուսափելու համար:

Երբեմն ծնողները չեն էլ նկատում, որ իրենց երեխան գնալով ինքնամփոփ, ցրված է դառնում: Դպրոցներում էլ վատ սովորող նման աշակերտների հետ այնքան էլ հաճույքով չեն զբաղվում: Ու մեկ էլ պարզվում է, որ երեխան հոգեկան կամ առողջական որել է այլ խնդիր ունի: Հենց նման դեպքերից խուսափելու համար հաշմանդամ երեխաների ծնողների միությունն առաջարկում է դպրոցներում առողջապահական ծրագրավորված թեսթեր անցկացնել»:

**ԱՆԱՅԻՏ  
ՀԱՅԹԱՅԱԼ**

# ԻՐԱՉ ԵՆ ՀՈՒՇՈՒՄ «ՆԵՐՔԵՒՆԵՐԸ» «ՎԵՐԵՒՆԵՐԻՆ»

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ մԻՋՈՑՆԵՐԻ մԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ՝ ՎԵՐԻՆՆԴԻՐ

2003թ. հաստատվեց աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը (ԱՅՈՒԾ)։ Սակայն երեք տարի անց ծրագիրը վերանայելու անհրաժեշտություն է ծագել։ Ինչո՞ւ, ի՞նչ է ենթադրում այդ վերանայումը, ի՞նչ է ստանալու դրանից համրությունը։ Հասկանալի է, խոսքը հատկապես բնակչության աղքատ ու խոցելի հատվածին է վերաբերում։ Ըստ այդմ, քննարկվող թեման Երեւանից դուրս է, այլ կերպ՝ աղքատության ծավալները կրճատելու համար ի՞նչ է արվում գյուղերում, մասնավորապես, ոչ գյուղատնտեսական զբաղվածությունը խթանելու համար։ Ի՞նչ հիմնախնդիրներ են ծագել այս գործում, եւ որո՞նք են դրանք լուծելու ուղիները։ Եվ արդյո՞ք ծրագրի վերանայումը նշանակում է, որ ԱՅՈՒԾ-ն չի ծառայել իր նպատակին եւ, այդ իսկ պատճառով, փոփոխությունների կարիք ունի։

Վերջին հարցիս ի պատասխան եւ ֆինանսների ու էկոնոմիկայի նախարարի տեղակալ Սուրեն Ղարայանը, եւ ԱՅՈՒԾ քարտուղարության ղեկավար Հովհաննես Ազիզյանը համառոտեցին. «Միանշանակ՝ ոչ»՝ միաժամանակ հավելելով, թե ռազմավարական ծրագիրը պետք է մշտապես շարժուն լինի, եւ ԱՅՈՒԾ-ն պարբերաբար վերանայելը հենց հանրության պահանջն է։ Երկու բանախոսներն էլ համոզված են, որ ԱՅՈՒԾ իրականացման առաջին տարիներն ակնհայտ արդյունք են տվել ոչ միայն աղքատ, այլեւ շատ աղքատ բնակչության թիվը զգալիորեն կրճատելու առումով։ Ավելին՝ վերջին երեք տարիների զարգացումներն ավելի բարենպաստ են եղել, քան ԱՅՈՒԾ-ի սցենարով էր նախատեսվում։ Որոշ ոլորտներում բավականին լուրջ առաջընթացներ կան։ Սոցիալական բնագավառին տրվող բյուջետային հատկացումները հաջողվել է ապահովել։ Տնտեսական աճ է գրանցվել։ Օրինակ, ըստ Հ. Ազիզյանի, ՀՆԱ մեկ շնչի հաշվով 2004թ. փաստացի ցուցանիշը համապատասխանել է ԱՅՈՒԾ այն կանխատեսմանը, որ միայն հաջորդ տարվա համար էր, իսկ 2005թ. փաստացի ցուցանիշը (այսինքն՝ 1 շնչին շուրջ 1530 ԱՄՆ դոլար)՝ 2011թ. համար։ Նախորդ տարի աղքատ է եղել բնակչության 29.8 տոկոսը, մինչդեռ այդ ցուցանիշին, ԱՅՈՒԾ-ի կանխատեսմամբ, միայն 2009թ. պիտի

հասնեինք։ «Միայն 2015թ. պիտի հասնեինք նախորդ տարի արձանագրված շատ աղքատ բնակչության 4.6 տոկոս ցուցանիշին»,- նկատում է ԱՅՈՒԾ քարտուղարության ղեկավարը։ Այս համապատկերում ծրագրի վերանայման նախապայմաններն արդեն հստակ ուրվագծվում են։

Ի՞նչ կարծիքի են հասարակական կազմակերպությունները։ Որ վերանայումն անհրաժեշտություն է, այս կառույցները համոզված են։ Օրինակ, «Արագ» ՀԿ նախագահ Թամարա Աբրահամյանը տեղեկացրեց, որ ԱՅՈՒԾ իրականացման ընթացիկ աշխատանքների համակարգման խմբի քաղաքացիական հասարակության ոլորտային ներկայացուցիչները ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարությանը վաղուց էին դիմել վերանայման ընթացքում ԱՅՈՒԾ իրականացման, մասնակցային եւ գործընկերային մեխանիզմների կատարելագործման առաջարկների փաթեթ մշակելու խնդրանքով։ ՀԿ-ները ներկայացրել են մարզերում իրենց ուսումնասիրությունների արդյունքները, ըստ այդմ՝ հետագա զարգացումները։ Այն է՝ ԱՅՈՒԾ վերանայման եւ հետո ծրագրի իրագործման ընթացքում հարկ է հաշվի առնել ոչ միայն պետական պաշտոնյաների ու այլ կառույցների ղեկավարների, այլեւ բնակչության խոցելի խմբի կարծիքները, առաջարկները, բողոքները. «Քանզի ԱՅՈՒԾ-ն բնակչության մեծ մասին է վերաբերում։ Յուրաքանչյուր համայնք պետք է մասնակցի ԱՅՈՒԾ վերանայմանը։ Գյուղերն ընդհանրապես պետք է ծրագրերում ներգրավվեն, որպեսզի հավելուկ չդառնան։ Գյուղերում երիտասարդությանը պահելու խնդիր կա, այս տեսակետից է կարելի դրսևում ոչ գյուղատնտեսական զբաղվածությունը խթանելը։ Սակայն ձեռնարկվելիք ամեն քայլ անարդյունավետ կլինի, եթե կարելու մի փոփոխություն չլինի։ «Աղքատության հոգեբանության փոփոխությունը»,- համոզված են ՀԿ-ները։ Անհատից բացի այստեղ դեր ունի նաեւ պետությունը՝ ազգային եկամտի ճիշտ վերաբաշխմամբ, ծրագրերի հասցեականությամբ։

Ինչեւէ, որո՞նք են այդ վերանայման նախապայմանները, եւ ներառու՞մ են, արդյոք, վերոհիշյալ ոլորտները։



### «ԾՐԱԳԻՐԸ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՄԱՐ Է, ԱՐԱՆ ԳԶԱՐՑՆԵ՛ՆՔ...»

Այսպիսով, ըստ ֆինանսների եւ էկոնոմիկայի փոխ- նախարարի, ԱՅԴԾ-ն հարկ է համապատասխանեցնել նոր իրողություններին. «Կան բնագավառներ, որտեղ բավականին լուրջ առաջընթացներ են եղել: Դա առա- ջին հերթին բյուջետային ֆինանսավորումն է: Բայց կան նաեւ այնպիսիք, որտեղ թե՛ բացթողումներ են եղել, թե՛ դանդաղեցումներ: Ի՞նչ քայլեր պիտի ձեռնարկվեն, որ չեն ձեռնարկվել, որո՞նք են պատճառները. ահա այս ամենը պարզելու նպատակով որոշեցինք, որ վերանայու- մը մասնակցային պիտի լինի»: Այսինքն՝ ըստ ԱՅԴԾ քարտուղարության ղեկավարի, ծրագրում փոփոխու- թյունները հարկ է որ լինեն՝ նախ դրանց քննարկումը «ներքեւից վերեւ» սկզբունքով կազմակերպելով. «Ծրագիրը ժողովրդի համար է, նրան չհարցնե՞նք՝ ինչ է ուզում, ինչ ակնկալիք ունի»:

- Հարցրեցի՞ք,- հարցնում են: «Սոցիարցում արե- ցինք», - պատասխանում է Հ. Ազիզյանը: Իրավիճակը հետեւյալն է. «Գյուղերում ոչ գյուղատնտեսական զբաղ- վածությանը զարկ տալը մեզ հենց «ներքեւից» են հու- շել: Ու ընդհանրապես կայուն զարգացման համար, նախ, երեք խնդիր է լուծել անհրաժեշտ՝ ապահովա- գրական համակարգի ստեղծումը, կոոպերացիայի զարգացումը, որ պետք է հողերի խոշորացման որոշա- կի գործընթաց ապահովի (այս ծրագրի մեկնարկին Նոր Երզնկա համայնքում «ՀՀ»-ն անդրադարձել է), ոչ գյու- ղատնտեսական զբաղվածությունը: Այս երեք առումնե- րով էլ նոր լուծումներ են հարկավոր: Ու քանզի վերջի- նի առումով խոսքը փոքր ու միջին ձեռներեցության ոլորտին է վերաբերում, բոլոր մարզերում քննարկվել են դրա զարգացման հիմնախնդիրները: Դրանք են- թակառուցվածքներին են վերաբերում»: Հ. Ազիզյանը պատմում է, որ Սիսիանից մեկը, որ պարբերաբար բնակչությունից ապրանքը հավաքում - Երեւան էր բե- րում, կապի՝ Սիսիան «հասնելուց» շատ գոհ էր. «Առաջ մինչեւ Երեւանում ապրանքի գինն իմանում էի, ապ- րանքս շուկա հասցնում, էնքա՛ն բան էր փոխված լինում որ: Հիմա ավելի հեշտ են որոշում՝ երբ ինչ ապ- րանք տանեն ու մինչեւ հասցնելս ինչ գին կլինի»...

### Ո՞ՒՄ ՏՆՄ ՀՍԶՄ ՈՒ ՄԻ ԳՈՒՄԱՐՍ

ՓՄՁ զարգացման համատեքստում իբրեւ առաջին են իբրեւ գերխնդիր հիմնականում բոլոր մարզերում էլ նշվել է ֆինանսական միջոցների մատչելիությունը: Հարց է ծագում, ինչո՞ւ այդ միջոցները դարձյալ մատ- չելի չեն, այն էլ այն պարագայում, երբ կառավարությու- նը վերջին տարվա ընթացքում մի քանի միջազգային կազմակերպություններից շարունակաբար փորձում է բավականին էժան (համեմատության մեջ) վարկեր վերցնել եւ դրանք մրցութային հիմունքներով տրամա- դրել բանկերին, որոնք էլ դրանք պիտի տան գյուղա-

ցում: Կամ՝ եթե տալիս էլ են, ապա տոկոսադրույքն այնքան բարձր է, որ արդյունավետ գործունեություն ծավալելու հնարավորություն չի ընձեռում: Իհարկե, հասկանում ենք, որ յուրաքանչյուր ցանկացող չէ, որ կարող է վարկ ստանալ, ամեն դեպքում գրավադրման պայման կա:

Հենց այստեղից էլ ծագում են բոլոր խնդիրները: Գրավի առարկա բոլոր հողերն ու տները չէ, որ կարող են լինել: Բանկը Արարատյան դաշտի հողը թողած՝ Ամասիայի հողը գրավ չի վերցնի: Ս. Ղարայանն ու Հ. Ազիզյանը իրավիճակի պատճառ մեկ այլ հանգամանք են մեջբերում. բանկերին մեծածավալ միջոցներ են պետք: Պետությունն, օրինակ, տարեցտարի պետբյու- ջեից ավելի շատ գումարներ է հատկացնում փոքր ու միջին ձեռներեցության աջակցման հիմնադրամին, վերջինս էլ, դրան համապատասխան, մեծացնում է իր երաշխիքային ծրագիրը: Որպեսզի թյուրըմբռնման տե- դիք չտա, ասենք, որ քիչ այլ է բանկերի պարագայում: Ամեն դեպքում դրանք մասնավոր են, եւ ինչքան էլ պե- տությունը քաղաքականություն որոշի, բանկի գործերին կոշտ միջամտություն ցույց տալ չի կարող, այլապես խախտվում է ազատական տնտեսահարաբերություն- ների տրամաբանությունը:

«Այո, բայց պետությունը դրսից միջոցներ է ներգրա- վում, որ տա բանկերին: Ինչպե՞ս է, որ բանկերը վերց- նելիս վերցնում են, տալիս՝ հիշում են, որ մասնավոր են, ու միջամտության իրավունք չկա», - հարցադրումներիս ի պատասխան ԱՅԴԾ քարտուղարության ղեկավարը նախ նկատեց, որ մարզերում էլ քննարկումների ժամա- նակ այս կարգի հարցեր հնչել են, ու հետո էլ խորհուրդ տվեց մեղալի մյուս երեսն էլ նայել: Քանզի վարկային միջոցներ դրսից բերողը, ճիշտ է, պետությունն է, բայց ռիսկը բանկինն է: Պետությունը բանկին գումարը տա- լիս է, ասենք, 5 տոկոսով, վերջինս էլ գնահատում է իր ռիսկը 10 կամ 12 տոկոս, գյուղացուն էլ դա հասնում է 18 տոկոսով:

Ի՞նչ է պարզվել համալիր քննարկման (հանրության, բանկերի, ոչ գյուղատնտեսական զբաղվածություն ստեղծողների հետ) արդյունքում. ինչո՞ւ է, օրինակ, 5-ով վերցրածը մինչեւ 18 տոկոսի վերաճում: 18-ով գումար վերցրածը զբաղվելու է ոչ թե արտադրությու- նը զարգացնելով, այլ, բացառապես, «տոկոս փակե- լով»: Իսկ գուցե 5-ը 18-ի հասցնելու մեկ այլ պատճա՞ռ կա. օրինակ՝ այն, որ եթե բանկը կարողանում է իր մի- ջոցներն իրացնել 18 տոկոսով, դա հաստատ չի նվա- զեցնի 2 տոկոսով: Այսինքն՝ թեկուզ ոչ մեծաթիվ, բայց կա 18 տոկոսով վարկ վերցնող վարկառու այդ հատ- վածը: Այս պարագայում էլ զրուցակիցներս խորհուրդ տվեցին խնդիրը նաեւ այլ տեսանկյունից դիտարկել: 1. Այնուամենայնիվ, չնայած պետության ներգրավածին, մեր բանկերը դեռ մեծածավալ միջոցներ չունեն, որ կարողանան երկարաժամկետ վարկեր տրամադրել, իսկ ցածր տոկոսադրույքը հենց երկարաժամկետու- թյան հետեւանք է: 2. Փոքրածավալ վարկերի վարչա- կան ծախսերն ավելի մեծ են ստացվում: 3. Ոլորտում

մրցակցության պակաս կա: Ասել է թե՛ քիչ են այն բանկերը, որոնք գնում են մարզեր ու փորձում այնտեղ աշխատել: «Յաշվի առնելով, որ բավականին սահմանափակ է գյուղական վայրերում աշխատելու բանկերի փորձը, նաև այս բացը լրացնելու խնդիր է առաջ քաշվել», - ասաց ԱՅԴԾ քարտուղարության ղեկավարը՝ չբացատրելով մասնագիտական կարողությունների պակասի գործոնը:

Փորձենք մեղալի կողքերը մենք էլ զննենք. գյուղերում գյուղատնտեսական ու ոչ գյուղատնտեսական զբաղվածությունը երբեմն տարանջատել գրեթե պետք է: Ավելի պարզ. տվյալ փոքր ու միջին ձեռնարկությունը վերանշակող կառույց է՝ լուրջ վերածում է տոնատի մածուկի: Անբարենպաստ պայմանները փչացրին լուրջը, ըստ այդմ էլ ձեռնարկությունը դժվարանում է բանկին վերադարձնել գումարը: Ուրեմն՝ գուցե բանկերը ռիսկ չեն անում մարզերում աշխատելու, որովհետև ապահովագրական համակարգ չկա, որն էլ հենց ռիսկը «չեզոքացնողն» է: «Այո՛, սա եւս քննարկման խնդիր է», - չհերքեցին բանախոսները: «Ապահովագրական համակարգի զարգացումը շատ կարելու է, - ասաց Յ. Ազիզյանը, - բայց խնդիրը բանկերի մեջ է. սրանք սովոր չեն մարզերում աշխատելու: Հիմնականում գործ են ունեցել մեծ առևտրային գործարքների հետ, ինչը չես ասի փոքր ծրագրերի մասին: Այդ իսկ պատճառով էլ փոքրերի դեպքում բավականին չեզոք է: Իսկ եթե մար-

զերում մի քանի բանկեր աշխատեն, մրցակցությունն ինքնին տոկոսադրույքների նվազեցմանը կնպաստի»: Ֆինանսական միջոցները գյուղացիների համար դեռևս մատչելի չեն ոչ միայն տոկոսադրույքների, այլև ժամկետների ու ընթացակարգերի մասով:

ԱՅԴԾ քարտուղարության ղեկավարը վստահեցնում է, որ վարկ ստանալու ընթացակարգերը պարզեցնելու վերաբերյալ առաջարկներ եղել են, որոնք անպայման կքննարկվեն: Ինչ վերաբերում է զբաղվածության ծրագրերի հասցեականությանը. դա առանձին խնդիր չէ եւ պետք է լուծվի յուրաքանչյուր քայլին զուգահեռ: Հատկապես շեշտադրվում է հետեւյալ հանգամանքը. հասարակական վարձատրվող աշխատանքը «կարծես այնքան էլ արդյունավետ չէ», ուստի ԱՅԴԾ-ում որոշակի վերանայումներ պետք է արվեն: Նոր ծրագրեր ամրագրվել են. խոսքը խոցելի խմբերի համար աշխատավարձերը փոխհատուցելուն է վերաբերում:

ԱՅԴԾ աշխատանքային խումբը քննարկումները կշարունակի եւս 1-2 ամիս, որից հետո ամփոփիչ քննարկում կկազմակերպվի:

Սա գործընթացի ձգձգում չէ, պարզապես խնդիրները հարկ է քննարկել համակողմանի եւ լուծել համալիր, այլապես միշտ պոչեր կմնան՝ դարձյալ մոր գումարների ու մոր լուծումների կարոտ...

**ՄՐՄԵՆՈՒՅԻ  
ՍԵԼԵՈՆՅԱՆ**

**ՀԱՊԱՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

30 Նոյեմբերի 2006թ.

# ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ Ե ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

2006 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ է մտել «Բնակչության զբաղվածության եւ գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» մոր օրենքը՝ հիմք ընդունելով «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրում» անրագրված զբաղվածության բնագավառի ուղեւիշները, Հայաստանի զբաղվածության պետական քաղաքականությունը: Նոր օրենքի կիրառումն ապահովելու համար կառավարությունն ընդունեց որոշումներ, որոնցով հստակեցվեցին զբաղվածության մի շարք ծրագրերի իրականացման մեխանիզմները, մասնավորապես՝ վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման, «Զբաղվածության պետական ծառայություն» դիմող անձանց հաշվառման ու հաշվառումից հանելու, աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման աջակցության նպատակով աշխատավարձի փոխհատուցման, աշխատանք փնտրող անձանց

մասնագիտական ուսուցման կազմակերպման, գործազուրկներին ու հաշմանդամներին ձեռնարկատիրական գործունեության գրանցման համար ֆինանսական աջակցության տրամադրման:

Ըստ «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալությունից «ՀՀ»-ին տրամադրած տվյալների՝ զբաղվածության ամենամյա ծրագրի ամբողջական կատարումը դեռ ապահովված չէ, քանի որ որոշ կարգեր ընդունվել են վերջերս:

Օրենքում անրագրված գործազրկության դեպքերից ապահովագրության համակարգի ներդրման ու աշխատաշուկայում անմրցունակ անձանց սոցիալական պաշտպանվածության աստիճանի բարձրացման սկզբունքներից ելնելով՝ զբաղվածության պետական ծրագրերը տարանջատված են ըստ ֆինանսավորման աղբյուրների. ապահովագրական ծրագրերը ֆինանսավորվում են սոցիալական ապահովագրության պետա-



կան հիմնադրամի, աջակցության ծրագրերը՝ պետական բյուջեի միջոցների հաշվին:

Սոցապ հիմնադրամի միջոցներից ֆինանսավորվում են հետևյալ ծրագրերը. առնվազն մեկ տարվա ապահովագրական ստաժ ունեցող գործազուրկների մասնագիտական ուսուցում, գործազուրկներին այլ վայր աշխատանքի գործուղելու կապակցությամբ նյութական ծախսերի փոխհատուցում, առնվազն մեկ տարվա ապահովագրական ստաժ ունեցող հաշմանդամների մասնագիտական ուսուցման կազմակերպում, երկարամյա ծառայության եւ արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստացող - աշխատանք փնտրող զբաղված անձանց վերամասնագիտացում:

Պետբյուջեի միջոցներից ֆինանսավորվող ծրագրերն են ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով պետական գրանցման համար գործազուրկներին տրամադրվող ֆինանսական աջակցությունը, աշխատավարձի մասնակի փոխհատուցումը գործատուին՝ աշխատաշուկայում խոցելի խմբերին աշխատանքի ընդունելու դեպքում, ապահովագրական ստաժ չունեցող կամ մինչեւ մեկ տարվա ապահովագրական ստաժ ունեցող գործազուրկ անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպումը, ապահովագրական ստաժ չունեցող կամ մինչեւ մեկ տարվա ապահովագրական ստաժ ունեցող հաշմանդամների մասնագիտական ուսուցման կազմակերպումն ու աշխատանքային ունակությունների վերականգնումը, վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպումը:

Զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի իրականացման համար 2006 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ պետբյուջեից ծախսվել է 521659500 դրամ, սոցապահովության հիմնադրամի միջոցներից՝ 584507900 դրամ:

Այս տարվա նոյեմբերի 1-ի դրությամբ գործազրկության մակարդակը հանրապետությունում կազմել է 7.4 տոկոս՝ տարեսկզբի 7.7 տոկոսի փոխարեն: Գործազրկության ամենաբարձր մակարդակները կրկին գրանցվել են Սյունիքի (17.7 տոկոս), Շիրակի (17.5 տոկոս), Լոռու (17.2 տոկոս) մարզերում, ամենացածրերը՝ Արա-

գածոտնի (1.9 տոկոս), Արարատի (2.8 տոկոս), Արմավիրի (3 տոկոս) մարզերում: Գործազրկության մակարդակը գյուղատնտեսական բնակավայրերում ցածր է, քանի որ գործող օրենսդրությամբ գյուղատնտեսական նշանակության հողերի սեփականաշնորհումից օգտվողները եւս համարվում են զբաղվածներ: Այդ պատճառով հնարավոր չէ ցույց տալ գյուղատնտեսական բնակավայրերի գործազրկության իրական պատկերը:

Գործազրկության իրական պատկերի արտացոլմանը խոչընդոտում է նաեւ ընտանեկան նպաստի ինստիտուտը, մասնավորապես՝ ընտանեկան նպաստի գերազանցումը գործազրկության նպաստին, ինչի հետեւանքով շատ գործազուրկներ չեն հաշվառվում ընտանեկան՝ ավելի բարձր նպաստ ստանալու մտադրությամբ:

Տարեցտարի զբաղվածության ոլորտում ավելանում է, այսպես կոչված՝ որակյալ զբաղվածությունը, երբ զբաղվածությունը համատարած բնույթ չի կրում, սակայն աշխատողներն ստանում են բարձր աշխատավարձ:

Գործազուրկների թվի ավելացմանը նպաստում է նաեւ ժամանակակից տեխնոլոգիաների ներդրումը, ինչի հետեւանքով, օրինակ, նախկին հիսուն անձի փոխարեն ժամանակակից հաստոցի առջեւ բավարար է լինում 5 անձի աշխատանքը:

2006 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ հանրապետությունում աշխատանք է փնտրում 1079 հազար մարդ: Նրանց 81.3 տոկոսը կամ 87.7 հազար մարդ ունի գործազուրկի կարգավիճակ: Գործազուրկների թվում շարունակում է բարձր մնալ կանանց տեսակարար կշիռը՝ 62.8 հազար մարդ:

Տարեսկզբից աշխատանքի է տեղավորվել 6986 աշխատանք փնտրող: Աշխատանքի տեղավորվածների 60 տոկոսը կանայք են: Տեղավորվածների ամենամեծ թիվը արդյունաբերության ոլորտում է՝ 21 տոկոս, առեւտրի եւ հասարակական սննդի ոլորտում՝ 19.1 տոկոս, շինարարության ոլորտում՝ 10 տոկոս, կրթության ոլորտում՝ 6.5 տոկոս, տրանսպորտի եւ կապի ոլորտում՝ 5.4 տոկոս: 2006 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ գործազրկության նպաստ է ստանում 9877 անձ:

Շարունակվում են աշխատանքները «Դպրոցական աշխատակազմի օպտիմալացման եւ սոցիալական աջակցության» ենթածրագրի շրջանակում: Աշխատատեղից կրճատված 7242 մանկավարժներից 3093-ը հաշվառվել են զբաղվածության տարածքային կենտրոններում: Նրանց համար ներկայում իրականացվում է չորս ծրագիր. «Լրացուցիչ դրամական վճար», «Տեղափոխման դրամաշնորհ», որը ենթադրում է աշխատանքի նպատակով տեղափոխում հանրապետության մի բնակավայրից մյուսը, «Մասնագիտական ուսուցում» եւ «Փոքր բիզնեսի աջակցություն»: Այս ծրագրերում շարունակում է բարձր մնալ լրացուցիչ դրամական վճարից օգտվողների թիվը:

**ԳԱՅԱՆԵ  
ԳԱՊՊՐՅԱՆ**



23 Նոյեմբերի 2006թ.

# ԷԺԱՆ ՈՒ ԿԱՐՋԱԺԱՄԿԵՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՆՈՐ ՌԵՍՈՒՐՍ ԳՅՈՒՂԵՐԻՆ

Մեկ շաբաթ առաջ Վայոց ձորի 25 ֆերմերի 1000-ական դոլարի վարկեր տրվեցին, որոնց վերադարձը երաշխավորեց նրանց արտադրանքի ապագա իրացմանը խոշոր մթերողը: Մինչ այժմ այդ տարածքի գյուղերում վարկ չէին ստացել:

Տարբեր մարզեր այցելություններիս ժամանակ գյուղացիներից բազմիցս բողոքներ են լսել գյուղին ուղղված վարկային պետական քաղաքականությունից: Եթե գյուղացուն վարկեր են տրամադրվում, ապա կարճ ժամկետով, բարձր տոկոսադրույքներով, ոսկու կամ մեքենայի գրավներով: Դրանց արդյունավետությունը չափազանց փոքր է, որովհետև մեքենա կամ ոսկի գրավ դնելու հնարավորություն ունի գյուղի համեմատաբար ունեւոր շերտը, եւ աղքատը դարձյալ մնում է դատարկաձեռն:

2005 թվականի հունվարի 28-ին ՀՀ կառավարության եւ Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի (IFAD) միջեւ կնքվել է միջպետական համաձայնագիր, ըստ որի մեր կառավարությանը 40 տարով տրամադրվել է 28 մլն դոլարի վարկ: Դրա 9,8 դոլարը պետք է հատկացվի գյուղերին:

Նոր վարկային ռեսուրսը, ըստ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության «Գյուղական ֆինանսավորման կառույցի» ծրագրի իրականացման գրասենյակի տնօրեն Արա Մուրադյանի, անհամեմատ սրբագրված ու խոստումնալից մեխանիզմով է գործում լիովին տարբերվելով առ այսօր շուկայում շրջանառվող վարկային ռեսուրսներից: Գյուղի սոցիալական առողջացման խնդիրը փորձ է արվում լուծել ընդհանրական, հեռահար բարելավումների սկզբունքով, երբ տրամադրվող վարկերը եկամուտ պիտի բերեն ոչ միայն վարկառուին, այլև նոր աշխատատեղերի ստեղծմամբ, արտադրության զարգացմամբ բարերար լինեն ողջ գյուղի համար:

Նոր ծրագրով դրանք տրվում են մինչև 7 տարի ժամկետով՝ նախկին 2-4 տարիների փոխարեն: Նախկինում եւս վարկային ռեսուրսները տեղաբաշխել են բանկերը, սակայն պետությունը երբեք չի խառնվել վարկ տվող եւ վարկառու հարաբերություններին: Փողը տրվել է բանկերին եւ նրանից ընդամենը հաշվետվություն է պահանջվել, թե ինչպես են բաշխել դրանք: Հիմա բանկին փող տրվում է այնքան, ինչքան նա պատրաստ է տվյալ պահին տվյալ վարկառուին

տրամադրել: Ընդ որում, փողը տալուց առաջ ծրագրի կառավարման գրասենյակը վարկառուի հայտի միջոցով նախապես ստուգում, վերահսկում է վարկի նպատակայնությունը: Եթե հետագայում հայտնաբերվի, որ ասենք, վերցրած 10 հազար դոլարով գյուղացին գնել է ոչ թե 10 կով եւ գոմ կառուցել, այլ փողը ներդրել է ավելի եկամտաբեր բիզնեսում, ասենք խանութ է բացել, ապա քրեական օրենսգրքի համաձայն, նա պատասխանատվության է ենթարկվելու:

Վարկերը բաշխվում են հանրապետության 7 մարզերի գյուղերում (բացառությամբ Երևանի եւ հարակից Արարատ, Կոտայք, Արմավիր մարզերի), փորձելով աշխուժացնել մայրաքաղաքից հեռու, մոռացված տարածքների տնտեսությունը: Առ այսօր ամենաշատ վարկեր տրամադրվել են Վայոց ձորի գյուղերին՝ նոր այգիների տնկման, գինու, կաթի վերամշակման արտադրությունների, անասնապահության զարգացման համար: Ընդհանրապես, վարկային նոր ռեսուրսի հայեցակարգը շեշտադրում է վերամշակող ձեռնարկությունների զարգացումը, ինչը չափազանց կարեւոր է գյուղմթերքի իրացման տարիներ չլուծվող խնդրի համար:

1000-ից մինչև 150 հազար դոլար՝ այսպիսին է տրամադրվող վարկերի նվազագույն ու առավելագույն չափը, միջին չափը՝ 45-50 հազար դոլար է: Արդեն 10 վարկառու (գինու, պանրի, պահածոյի գործարանները) ստացել է 150 հազար դոլարի վարկ: Տվյալ ծրագրով վարկ ստանալը շահավետ է նաեւ ցածր տոկոսադրույքի պատճառով: Գրասենյակը վարկը բանկերին տրամադրում է 4 տոկոսով: Սպասարկման ինքնարժեքի հետ վերջնարդյունքում վարկառուն, նախկին 12-13 տոկոսի փոխարեն, ստանում է 10 % դրույքով վարկ: Վարկի վերադարձի պատասխանատուն ու երաշխավորը բանկերն են, պետությունը չի միջամտում գրավի քաղաքականությանը: Եթե պետության հետ համագործակցող բանկը սնանկանա, գրասենյակը գումարները հետ է ստանալու վարկառուից: Այսինքն, ի սկզբանե բացառվում է ծրագրային գումարների կորուստը, ինչը բազմիցս արձանագրվել է նախկինում:

Նախագծի իրականացմանը մասնակցում են 6 բանկեր՝ Յունի, Ինեկո, Անելիք, Արդշին, Կոմվերս բանկերը, Հայգյուղփոխբանկը: 9,8 մլն դոլարից արդեն իսկ սպառվել է գրեթե 5 մլն դոլարը: Մնացած գումարների

բաշխման արդյունավետությունը բարձրացնելու համար նոր մեխանիզմ է մշակվել՝ ֆինանսավորումը տրամադրվելու է բիզնես պլանների միջոցով, ոչ թե պարզունակ, 2 թերթի վրա ներկայացված ծախսային պլաններով: Վարկը տրամադրելուց առաջ գրասենյակի մասնագետներն ուսումնասիրելու են նաև իրականում առկա միջոցները: Սա՝ այն բանից հետո, երբ պարզվեց, որ 2 վարկառուների ներկայացրած տվյալները թեև թղթի վրա համապատասխանում էին ծրագրի պահանջներին, բայց փաստացի գոյություն չուներին: 2 դեպքում էլ գումարը վերադարձվել է: Բացի այդ, 5 հազար դոլարը գերազանցող վարկերն ուղղվելու են կապիտալ ներդրումներին: Այսինքն, փող պետք է տրվի

ոչ թե շենք գնելու, այլ շենք կառուցելու, նոր հոսքագծեր տեղադրելու համար:

Երևանի եւ հարակից մարզերի պարագայում Համաշխարհային բանկի ծրագրերով նախատեսվում է վերականգնել նաև արդեն երկար ժամանակ չգործող Երևանի ձեթ-օճառի կոմբինատը, որն, անկասկած, բարերար շունչ կհաղորդի հարակից մարզերին:

Ինչ վերաբերում է վարկ ստանալու համար ընկեր-ծանոթ-բարեկամ մակարդակի միջնորդություններին, ապա Արա Մուրադյանը հավաստում է, որ իրենք փորձում են բացառել հայկական իրականության մեջ խոր արմատներ գցած արատավոր գործելաոճը:

**ԿԱՐԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆ**



14 Դեկտեմբերի 2006թ.

# ԻՆՉ ԹՈՇԱԿ ԿՍՏԱՆԱՆՔ 20 ՏԱՐԻ ԱՆՉ

## ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻ ՔԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՅԱՆ ՈՒ ԱՏՎԵՐԸ

Դժգոհությունը կենսաթոշակների չափից Հայաստանում հավերժական թեմա է: Դժբախտաբար, դժգոհությունն արդարացի է՝ միջին կենսաթոշակը ցածր է անգամ աղքատության առանց այն էլ ցածր գծից: Սակայն պարզվում է, որ սա դեռ ամբողջ եւ ամենասարսափելի դժբախտությունը չէ: Սոցիալական վճարումների եւ կենսաթոշակների Հայաստանում գործող համակարգը 20 տարի հետո վերջնականապես կսնանկանա, եթե չձեռնարկվեն արմատական բարեփոխումներ: Սա ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության եզրակացությունն է:

Թե ինչպե՞ս պետք է իրականացվեն կենսաթոշակային բարեփոխումները, ի՞նչ կտան բնակչությանը, ի՞նչ խնդիրներ կարող են առաջացնել եւ խոչընդոտների հանդիպել, փորձեցինք պարզել սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի նախագահ Վազգեն Խաչիկյանից, Կենտրոնական բանկի ավագ խորհրդական Ներսես Երիցյանից, ինչպես նաև Համաշխարհային բանկի՝ «Հայաստանի Հանրապետությունում կենսաթոշակային բարեփոխումների իրականացման ծրագրից» (հեղինակ՝ Գիլերմո Լարեյն):

## ՔԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐՆ ԱՂԸՆՏՐԱՆՔ ՉՈՒՆԵՆ

Սրանում կարծես թե համոզված են բոլորը: «Այսօրվա համակարգն ինքնին դատապարտված է, քանի որ

կարող է իրեն արդարացնել միայն այն դեպքում, երբ աշխատողներ (սոցվճար կատարողներ)-թոշակառուներ հարաբերակցությունը կլինի 3-ը 1-ի: Մինչդեռ այսօր այդ հարաբերակցությունը 0,9 1-ի է: Այսինքն, բեռը աշխատող սերնդի վրա մեծ է», - նշում է Վազգեն Խաչիկյանը, ավելացնելով, որ առաջիկայում այդ հարաբերակցությունը կխորանա ի վնաս աշխատողների:

Ըստ Ներսես Երիցյանի, նույնպես ներկայիս համակարգը «ժողովրդագրական պատկերի փոփոխության հետ մի օր կարող է պայթել»: Վերելում արդեն նշեցինք, որ, ըստ ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության, այդ «մի օրը» կարող է գալ արդեն 20 տարի հետո: Հետևաբար, նկատի ունենալով, որ կենսաթոշակային բարեփոխումները ոչ թե մեկ-երկու տարվա, այլ առնվազն 20-25 տարվա գործընթաց են, կասկած չի մնում, որ դրանք պետք է սկսել հնարավորինս շուտ:

Համակարգի բարեփոխումները արագ սկսելու անհրաժեշտությունը պայմանավորված է նաև մեկ այլ հանգամանքով: Որքան ուշանում են դրանք, այնքան բարձրանում է բարեփոխումների գինը, որովհետև տարեց-տարի բարձրացող թոշակները ավելացնում են բյուջեի բեռը, եւ պետությունն ավելի շատ ծախսեր պետք է անի բարեփոխումների իրականացման համար:

## ՉԻԼԻ ՓՈՐՁԸ ՀՆՅԱՍՏԱՆԻՆ

Վազգեն Խաչիկյանը հայտնեց, որ նոր կենսաթոշակային համակարգը կսկսի գործել 2009 թ. հունվարի 1-ից եւ որ այդ մասին քաղաքական որոշումն արդեն կայացած է: Ընդգծելով, որ բարեփոխումներն անմիջականորեն վերաբերելու են ապագա կենսաթո-



շակառուներին (ներկայում 18-45 տարեկաններին), որոնք դեռ աշխատողներ են, սոցիալապես անապահով մարդկանց կարելու է բարեփոխումների ճիշտ հաշվարկված լինելը: Ըստ նրա, դրանց տեղադրությունը պետք է հաշվարկել 40-45 տարվա կտրվածքով, պետք է գնահատել անցումային ծախսերը, եւ թե դա ինչ կարծե՞նա պետքու՞ն է եւ հարկատուների վրա:

Ըստ Համաշխարհային բանկի առաջարկած ծրագրի, Հայաստանի ապագա կենսաթոշակային համակարգի կառուցվածքը հիմնված է Չիլիի կենսաթոշակային համակարգի վրա: Չիլիի փորձը լավագույնն է համարում նաեւ Ներսես Երիցյանը, նշելով, որ այն արդեն 20 տարվա պատմություն ունի: Ի՞նչ են բարեփոխել չիլիացիները, որն առաջիկայում սպասում է նաեւ մեզ:

Նախատեսվում է անցում կենսաթոշակների կուտակային համակարգին, ներկայում գործող «սերունդների համերաշխության» համակարգի փոխարեն: Եթե ներկա համակարգով աշխատողների կատարած սոցվճարումները վերաբաշխվում են որպես թոշակառուներին վճարվող թոշակներ եւ աշխատողի վճարած գումարի չափը որքան է կերպ չի ազդում նրա ապագա թոշակի չափի վրա, ապա նոր համակարգն այլ տարբերակ է նախատեսում:

Յուրաքանչյուր անձի աշխատանքային տարիների ընթացքում կատարած վճարումները կկուտակվեն իր հաշվին, որոնք տվյալ անձի կենսաթոշակային տարիքը լրանալուն պես կվերադարձվեն որպես կենսաթոշակ: Այսինքն, յուրաքանչյուրն ըստ իր կատարած վճարումների կորոշի իր ապագա կենսաթոշակի չափը: «Կուտակային համակարգում կյանքիդ ընթացքում կուտակելով քո հաշվին որոշակի գումար եւ օգտվելով ֆինանսական շուկայի հնարավորություններից, կարող ես դրական եկամտաբերություն ստանալ», - պարզաբանում է Ներսես Երիցյանը: Նա նաեւ նշում է, որ կուտակված կենսաթոշակին գումարվելու է պետության երաշխավորած բազային կենսաթոշակ: Թե որքա՞ն պետք է կազմի վերջինս, դեռ ստույգ որոշված չէ, բայց, ըստ ԿԲ նախագահի ավագ խորհրդակցի, պետք է մոտ լինի ներկայիս միջին կենսաթոշակի չափին:

Սակայն ամեն ինչ, բնականաբար, այնքան հարթ ու առանց խութերի չէ, ինչպես կարող է թվալ առաջին հայացքից:



## ԱՆՈՒՄԱԿԱՆ ԾՐՁՆՈՒՄ` ՀՆՐԿՆԵՐ ԲԵՌԻ ԲԱՐԹՐԱԾՈՒՄ

Ինչպես նշեց սոցիալապես անապահով մարդկանց վազգեն խաչիկյանը, մինչ նոր համակարգին անցնելը պետք է լինեն անցումային շրջան եւ անցումային ծախսեր: Սա, թերեւս, ամենաբարդ ժամանակահատվածն է լինելու:

Նախ՝ փաստը, որ բարեփոխումներն սկսվելու են 2009 թվականից, եւ որ նախապես դա ծրագրվում էր սկսել 2008-ից, խոսում է այն մասին, որ երկրի քաղաքական ղեկավարությունը դեռ որոշակի մտավախություններ ունի: Բացի այդ, եւս մեկ տարով նոր համակարգին անցումը հետաձգելով, լրացուցիչ բեռ է դրվում բյուջեի վրա, քանի որ, ինչպես արդեն նշեցինք, որքան ուշ է սկսվում բարեփոխումը, այնքան թանկանում է նրա արժեքը:

Հաջորդն անցումային շրջանում ստեղծվելիք իրավիճակն է: Այդ ժամանակահատվածում պետությունը պետք է շարունակի ներկա համակարգի կենսաթոշակառուներին վճարել թոշակները, իսկ աշխատողներն էլ պետք է սկսեն կուտակել իրենց ապագա կենսաթոշակները: Փաստորեն, եթե ներկայիս աշխատողների վճարած սոցվճարները այլեւս չեն ուղղվելու ներկա թոշակառուների թոշակների վճարմանը, ապա պետությունը պետք է այլ աղբյուրներից ֆինանսավորի այդ ծախսերը: Ի՞նչ միջոցներից են վճարվելու ներկայիս թոշակառուների կենսաթոշակները:

Այս հարցի պատասխանը չստացանք Ներսես Երիցյանից: Նա միայն տեղեկացրեց, որ տարբերակներից մեկն էլ այն է, որ սոցվճարներն ու եկամտահարկը միավորվեն եւ այդ գումարից վճարվեն ներկա թոշակները: Ըստ մեր զրուցակցի, բյուջեն դա պետք է երաշխավորի: Նոր համակարգում նույնպես պետությունը պետք է երաշխավորի բազային թոշակների վճարումը:

Մեր հարցի պատասխանը ստացանք Համաշխարհային բանկի փորձագետ Գիլերմո Լարեյնի առաջարկած ծրագրում: Այստեղ նշված է, որ կառավարությունը նախատեսում է նոր համակարգում աշխատողների համար ընդհանուր հարկային եւ սոցիալական բեռը ներկայիս 25 տոկոսից բարձրացնել մինչեւ 32 տոկոսի: Փաստորեն, տեղի է ունենալու հարկային բեռի բարձրացում, որի մասին իշխանություններն առայժմ նախատեսում են չբարձրաձայնել: Բյուջեն պարտադրված կլինի առնվազն 20 տարի հավելյալ միջոցներ տրամադրել ներկայիս թոշակառուների համար, ինչն իրագործելը նույնպես լուրջ դժվարությունների է հանդիպելու:

Հարկային բեռի բարձրացումն առնվազն երկու լուրջ խնդիր է առաջացնելու: Առաջինը՝ գործատուների դժգոհությունը, որոնք ընդվզելու են հարկային բեռի բարձրացման դեմ, թեւ նրանք հիմա էլ, մեղմ ասած, աչքի չեն ընկնում սոցվճարներ կամ հարկեր վճարելու պարտաճանաչությամբ:

Սոցիալապես անապահով մարդկանց, օրինակ, բացի հարկային վարչարարության կատարելագործումից, նշում

է, որ ներդրվելու են խրախուսման միջոցներ: Նոր համակարգում աշխատողը պետք է շահագրգռված լինի, որ գործատուն ցույց տա իր իրական աշխատավարձը եւ կատարի սոցիալական վճարումները: Այն, որ աշխատողները ներկայիս գործազրկության պայմաններում չեն կարողանում պաշտպանել իրենց իրավունքները եւ արհմիութիւններն էլ, ըստ էության, ընդամենը զոյություն են պահպանում, նշում է նաեւ Վազգեն Խաչիկյանը: Հեռանկարում եւս այս խնդիրը լինելու է բարեփոխումներին խոչընդոտող հանգամանք:

Երկրորդը այդ համակարգում ընդգրկվածների եւ չընդգրկվածների միջեւ առաջացող հակասությունն է: Քանի որ մինչեւ 40 տարեկանների համար, որոնք կանավոր կամ պարտադիր պետք է անցնեն կուտակային համակարգի, գործատուները վճարելու են ավելի բարձր հարկեր, քան դրանից բարձր տարիքի եւ այդ համակարգում չընդգրկվածների համար, ապա գործատուները կսկսեն աշխատանքի ընդունելիս նախապատվությունը տալ վերջիններիս: Սա նշանակում է, որ կավելանա գործազրկությունը երիտասարդների շրջանում, ինչը կարող է խթանել նրանց արտագաղթը Հայաստանից:

Բարեփոխումների իրականացման մյուս կարեւոր բաղադրիչը դրանց տեղաբաշխմանն է վերաբերում, առանց որի բարեփոխումները դատապարտված են: Խոսքը կապիտալի եւ արժեթղթերի շուկաների մասին է, որոնք Հայաստանում դեռ կայացած չեն:

**Ի՞նչ երթուիք, որ ԶԵՐԾ ԿՄՆԱՆՔ ԿԱՆԽՍՏԵՄԵԼԻ ԵՒ ԱՆԿԱՆԽՍՏԵՄԵԼԻ ՈՒՍԿԵՐԻՉ**

Վազգեն Խաչիկյանը բարեփոխումների կարեւոր արդյունքներից մեկը համարում է այն, որ դրանց ճիշտ եւ ծրագրված իրականացումը հնարավորություն կտա Հայաստանում ստեղծելու «երկար փողեր», զարգացնելով կապիտալի եւ արժեթղթերի շուկաները:

Ըստ ՀԲ ծրագրի, սոցիալական հիմնադրամների կառավարիչները գումարները կարող են ներդնել գանձապետական պարտատոմսերի, հիպոթեկային վարկերի եւ կորպորատիվ արժեթղթերի մեջ: ՀԲ ծրագրից տեղեկանում ենք, որ այդ կապակցությամբ Հայաստանի իշխանությունները բանակցություններ են վարում Կոպենհագենի, Ստոկհոլմի, Հելսինկիի, Ռիգայի, Տալլինի եւ Վիլնյուսի ֆոնդային շուկաները միավորող «ՕԷմ-Էքս հոլդինգի» հետ:

Սակայն հարց է առաջանում, թե ֆինանսական շուկայի տատանումների (գնաճ, արժեզրկում կամ արժեւորում եւ այլն) բացասական հետեւանքներից ինչպե՞ս կարող են խուսափել կուտակային վճարներ կատարածները, երբ գա այդ գումարները թոշակի տեսքով հետ ստանալու ժամանակը: Ներսես Երիցյանը գտնում է, որ մասնավոր հիմնադրամներն ավելի արագ կարծագանքեն շուկայի տատանումներին: «Ռիսկերը հնարավոր է նվազեցնել, եթե գումարները ներդրվեն միջազ-



գայնորեն քիչ ռիսկային ճանաչված արժեթղթերում»,- նշում է ԿԲ նախագահի ավագ խորհրդականը, ավելացնելով, որ դա կանոնակարգվելու է օրենքներով:

Ներսես Երիցյանի լավատեսությամբ հակառակ, սոցիալադրամի նախագահը մատնանշեց այն փաստը, որ Հայաստանում արժեթղթերի շուկան դեռ կայացած չէ եւ հայաստանյան որեւէ ձեռնարկության բաժնետոմս չի վաճառվում կամ գնահատվում երկրորդային շուկայում: Այդուհանդերձ, Վազգեն Խաչիկյանն էլ գտնում էր, որ այս բարեփոխումները կարող են նպաստել այլ ոլորտներում բարեփոխումների արագացմանը կամ սկսելուն:

Ի՞նչ երաշխիք, որ 10 կամ 15 տարի հետո, երբ ներկայիս աշխատողները կսկսեն ստանալ իրենց կուտակային գումարները թոշակների տեսքով, չեն ծագի փակուղային խնդիրներ, որոնք հիմա հնարավոր չէ կանխատեսել, եւ ո՞վ պետք է դրա համար պատասխանատվություն կրի՝ կենսաթոշակային բարեփոխումների հեղինակները եւ ներկայիս իշխանությունները, թե՞ այն ժամանակվա իշխանությունները: Ի վերջո, հեռանկարումն է այս բարեփոխումները:

Ի պատասխան մեր հարցերի, Ներսես Երիցյանը կարեւորեց լավ կառավարումն ու վերահսկողությունը բարեփոխումների ամբողջ ընթացքում: Հարկ է նաեւ դասեր քաղել արդեն այս բարեփոխումներն իրականացրած երկրներից եւ նկատի ունենալ ամենահոռետեսական սցենարները: ԿԲ ավագ խորհրդականը նաեւ ընդգծեց, որ այդ երկրներում բարեփոխումները հիմնականում հաջողված են:

Վազգեն Խաչիկյանի կարծիքով, բարեփոխումները հեռանկար ունեն: Յուրաքանչյուր կենսաթոշակային բարեփոխում, իրականացման ընթացքում, 5 կամ 10 տարին մեկ որոշակի փոփոխություններ է կրում, քանի որ բարեփոխումների հաջող իրականացումը կախված է բազմաթիվ գործոններից: «Նրանցից յուրաքանչյուրի փոփոխությունը կարող է էական փոփոխությունների բերել ամբողջ համակարգում», նշեց սոցիալադրամի նախագահը, ավելացնելով, որ այնուամենայնիվ «ինչ-որ տեղից պետք է սկսել»:

# ՈՐՎ Ե ՄԻԱՆՈՒ ԵՎ ԻՆՉՊԵՆ ԱՅՈՑ ՎԵՐԱՆԱՅԱՄԱՆԸ

2003-ին հաստատված Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը մեր երկրի այն միակ պաշտոնական քաղաքական-տնտեսական փաստաթուղթն է, որը մշակվել և իրականացվում է հանրային մասնակցությամբ:

2004թ. հոկտեմբերի 30-ին կնքվեց ԱՅՈՑ իրականացման գործընկերության համաձայնագիրը, որի կողմեր են հանդիսանում՝ իշխանությունները, հասարակական միավորումները, գործարար շրջանակները, արհեստակցական միությունները և Հայ առաքելական եկեղեցին: Այսպիսով հաստակեցվեցին սոցիալական գործընկերության կողմերը: Համաձայնագրում ամրագրված սկզբունքների հիման վրա ձևավորվեց հանրության մասնակցությամբ ԱՅՈՑ իրականացման կառավարման համակարգը, բաղկացած երկու մակարդակներից՝ ԱՅՈՑ իրականացման գործընթացը համակարգող մասնակցային խորհրդից և ԱՅՈՑ իրականացման ընթացիկ աշխատանքները համակարգող մասնակցային աշխատանքային խմբից, որոնց կազմերում ընդգրկված են գործընկերության համաձայնագրին միացած բոլոր կողմերը:

Բանակցային սեղանի ոլորտային խմբերը և Բաց Ֆորումը մասնակցային ինստիտուտի միկրոմակարդակ տանող օղակն են, որոնց կապն ինստիտուցիոնալ մակարդակում իսկ հստակ չի:

ԱՅՈՑ իրականացման գործընթացի մասնակցային ինստիտուտի շրջանակներում ձևավորվել է կառավարություն - հասարակություն երկխոսության միջավար: Սակայն դա գործընկերության միայն նախապայման է, իսկ գործընկերներն ընդունում են, որ ԱՅՈՑ համագործակցությունը ենթադրում է առավել առարկայական, գործուն ներգրավվածություն, ինչը կապահովի առավել բարձր արդյունքների երաշխիք: Ինչպես օրինակ որոշակի ծրագրերի իրականացման արդեն իսկ պատվիրակումը քաղաքացիական հասարակության կառույցներին, որը գործընկերության մեխանիզմի բարձրագույն մակարդակ է համարվում: Ինչպես նաև ծրագրերի վերահսկողության մասնակցային մոնիտորինգ, որը դեռ չի հաջողվել ապահովել:

ԱՅՈՑ իրականացումը զուգորդվում է Մասնակցային ինստիտուտի ձևավորման ու զարգացման գործընթացով և կողմերն արձանագրում են առկա չլուծված խնդիրներ, որոնք խոչընդոտում են ԱՅՈՑ գործընկերության ինստիտուտի, ուստի և ԱՅՈՑ արդյունավետ գործունեությանը: **Պա պայմանավորված է մասնավորապես ինստիտուցիոնալ կառույցի շրջանակներում համագործակցության մեխանիզմների անկատարությամբ, մշակույթի բացակայությամբ և ՀԿ սեկտորի սահմանափակ ու անհավասար հնարավորություններով:**

ԱՅՈՑ իրականացման 2004-2005թթ. հաշվետվությունում և ԱՅՈՑ Բաց Ֆորումի քննարկման ընթացքում գործընկերության ինստիտուտի արդյունավետության բարձրացման և մեխանիզմների կատարելագործման խնդիրներից կարևորվել են՝

- ընդհանուր իրազեկվածության բարձրացումը և անգամ կողմերի ներսում կապերի ամրապնդումը,
- սոցիալական գործընկերության ոլորտում օրենսդրական կարգավորման բացակայությունը,
- սոցալական գործընկերության ինստիտուցիոնալ կառույցների առավել ցածր մակարդակներում իրականացման հիմնադրույթների, հայեցակարգի և պատասխանատու կառույցների բացակայությունը,
- ԱՅՈՑ կառավարման համակարգում ընդգրկված կողմերի իրավունքների և պարտականությունների հստակության պակասը, հետադարձ կապի սահմանափակությունը և ռեսուրսների անհավասար մակարդակը,
- կողմերի վերլուծական կարողությունների պակասը:

Հասարակական կազմակերպություններն այս խնդիրների լուծման վրա բեռնել են կառավարության ու դոնոր հանրության ուշադրությունը:

Հաշվի առնելով ներկայացված իրողությունները և այն, որ իրականացվում է ԱՅՈՑ վերանայման գործընթաց, որտեղ կարող են առաջարկվել նաև ԱՅՈՑ գործընկերային ինստիտուտի հետագա զարգացման վերաբերյալ առաջարկություններ՝ ԱՅՈՑ աշխատանքային խումբն իր 2006թ. նոյեմբերի 10-ի նիստում կարևորեց խնդրի ուսումնասիրության և բարելավման առաջարկությունների ներկայացման անհրաժեշտությունը:

Դոնոր հանրության կողմից ՀԿ սեկտորի կողմից բարձրացված խնդիրների լուծմանն աջակցելու առնչությամբ առարկայական արձագանքներ չկան մինչ օրս: Ընդհանրապես միջազգային կառույցները, որոնք իրենց մանդատի համաձայն իրականացնում են ծրագրեր ուղղված ԱՅՈՑ աջակցմանը, նախընտրում են ինքնուրույն պլանավորել իրենց քաղաքականություններն ու գործունեության ուղղությունները: Դրանք որոշ դեպքերում չեն համապատասխանեցվում ԱՅՈՑ միջոցառումների պլանին, հանրային պահանջարկին, անգամ միմյանց հետ, չկրկնվելու կամ շարունակականության ու աշխարհագրության ծածկույթ ապահովելու նպատակով:

2003-ին, երբ քննարկվում էր ԱՅՈՑ մոնիտորինգի ցուցանիշները, գործընկեր կողմերը փաստեցին, որ մի քանի տասնյակ ցուցանիշներ հավաքագրման ենթակա

չեն, տասնյակից ավելին չեն կարող ծառայել նպատակին հասնելու ճիշտ գնահատմանը, ինչպես նաև արտահայտում են միայն քանակական և ոչ որակական ցուցանիշ, ինչը չի կարող ապահովել գնահատման ճիշտ պատկեր: Սակայն Ցուցանիշների այս համակարգն առանց վերանայման հաստատվեց, ինչի արդյունքում 2004-2005թթ. ԱՅՈԾ հաշվետվությունում ունեցանք 177-ի փոխարեն 28 ցուցանիշների արդյունք, որի համաձայն ԱՅՈԾ առաջընթացը գնահատվել է մոտավորապես 4,5 բալով: Այս սկզբունքով ծրագրի գնահատումը որքանով է ճիշտ և արդարացված, կարելի է դատել, անդրադառնալով այն խնդրին, որ 2004-2005 թթ. ժամանակահատվածում ԱՅՈԾ շրջանակներում արձանագրելով՝ աղքատության նվազեցում 10%-ով, տնտեսական աճ՝ 11.7%-ով և կայուն զարգացման տեմպով, ՀՆԱ-ի աճ՝ 10.1 %-ով, միաժամանակ ակնհայտորեն բախվում ենք խորացող աղքատության և աղքատության վերարտադրողականության երևույթների ու փաստերի հետ:

Ակնհայտ է, որ Հայաստանում աղքատության հաղթահարման համար անհրաժեշտ է ապահովել ոչ միայն տնտեսական աճի բարձր տեմպերը, այլ նաև այդ աճին մասնակցելու հավասար հնարավորությունները: Ակնհայտ է նաև, որ ներկա ԱՅՈԾ փաստաթղթի զարգացման գործընթացում հավասար մասնակցության խնդիրը անտեսված է:

Հետևաբար հասարակության լայն շերտերն էլ, միանշանակ, արդարացիորեն ըմբոստանում են, լսելով պետական այրերի կամ ավելի շատ և շուտ հասարակական սեկտորի ներկայացուցիչների կողմից ԱՅՈԾ շրջանակներում ներկայացվող նվաճումների մասին: Քանի որ ոչ տնտեսական և ոչ էլ ՀՆԱ-ի աճի նշված

տոկոսաչափը չի ազդել աղքատի կենսամակարդակի և ընտանեկան բյուջեի վրա:

Ավելին, վերջիններս ԱՅՈԾ վերանայման հանրային քննարկումների ընթացքում բարձրացրել են ինչպես վերոհիշյալ, այնպես էլ ոլորտային այլ հիմնախնդիրներ, որոնք պայմանավորված են ԱՅՈԾ հայացակարգային սկզբունքներով, կառավարման համակարգային քաղաքականությամբ:

ԱՅՈԾ փաստաթղթի, Համաձայնագրի և ինստիտուցիոնալ կառույցի աշխատակարգից բխող գործունեության մեխանիզմների առկա խոչընդոտներն ու բացթողումները նվազեցնում են ԱՅՈԾ վերանայման գործընթացում որոշումների կայացման վրա ՀԿ սեկտորի կողմից կոնցեպտուալ բարեփոխումների ազդեցության հնարավորությունը:

Նշված փաստերից ու արձանագրված հիմնախնդիրներից ելնելով կարելի է եզրակացնել, որ այսօր, երբ վերանայվում է ԱՅՈԾ փաստաթուղթը, հասարակական կազմակերպություններն ու մասնավորապես կառավարման աշխատանքային խմբի և կառավարման համակարգող խորհրդի լիազոր ներկայացուցիչներն ունեն բարեփոխումների իրականացման լուրջ պատասխանատվություն:

Ուստի հաշվի առնելով ՀԿ սեկտորի ռեսուրսների սահմանափակությունը, գործընթացի հաջողությունը մեծապես պայմանավորված կլինի վերջիններիս համախմբվածությամբ և միասնականությամբ, ինչի կոչն ենք անում այսօր:

**ԹԱՄԱՐԱ ԱՐԻՎԱՍՅԱՆ**  
**ԱՅՈԾ աշխատանքային խմբի անդամ**  
**«Արագ» ՀԲԿ նախագահ**



21 Դեկտեմբերի 2006թ.

# ԲՈՒԺՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԴԵԿԱՎԱՐՆԵՐԸ՝ ՆՈՐ ՄԵՆԱՇՆՈՐՀԱՏԵՐԵՐ

**Ինչ պետք է անել բոլորին հասանելի եւ որակյալ բուժսպասարկում ունենալու համար**

2005 թ. պետական բյուջեում առողջապահությանը 7 մլրդ դրամից ավելի գումար հատկացվեց նախորդ տարվա համեմատ: Եթե 2004 թ. այս ոլորտին հատկացված գումարը կազմել էր 25 մլրդ դրամ, ապա 2005-ին՝ 32,2 մլրդ դրամ: Ինչ խոսք, առողջապահությանն ուղղված հատկացումների մոտ 20-25 տոկոսով ավելացումը լուրջ ցուցանիշ է: Առավել եւս, որ այդ գումարը գերազանցել է անգամ Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրով (ԱՅՈԾ) նախատեսված 30,8

մլրդ դրամը: Սակայն արդյոք մեր բնակիչները անցնող տարում իրենց վրա զգացի՞ն 7 մլրդ դրամի ավելացումը հանընդհանուր դարձած անվճար բուժօգնությունից, դեղորայքից կամ այլ ծառայություններից օգտվելիս: Բարելավվե՞ց բուժօգնության մատուցման որակը, հասանելի դարձա՞վ յուրաքանչյուրի համար:

Ակնհայտ է, որ արմատական փոփոխություններ, չնայած բյուջեով հատկացված գումարների զգալի ավելացմանը, չնկատվեցին: Ընդ որում, դրանք չնկա-



տեցին ոչ բնակիչները, ոչ էլ բուժաշխատողները: ԱՅՌԾ վերանայման գործընթացում հարկ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել այս հանգամանքի վրա եւ քայլեր ձեռնարկել առողջապահությանը հատկացվող միջոցների արդյունավետության բարձրացման նպատակով: Ո՞րն է խնդիրը:

Ինչպես հայտնի է, առողջապահության ոլորտում իրականացված բարեփոխումների արդյունքում ստեղծվել են բուժմիավորումներ, որոնք որպես առանձին միավորներ տնօրինում են պետական բյուջեից ստացված միջոցները: Այս բարեփոխումների անհրաժեշտության հիմնավորումները տրվել են: Դրանք կառավարման, ծախսերի արդյունավետության, բուժփիմնարկների ինքնուրույնության եւ մի շարք այլ հանգամանքներն են: Սակայն այստեղ եւս սկսել է գործել ավանդական հայկական հիվանդությունը: Տվյալ բուժմիավորման ղեկավարը, փաստորեն միանձնյա տնօրինում է պետական բյուջեից ստացվող եկամուտները: Փաստորեն այս ոլորտում նույնպես սկսում են ձեւավորվել մենաշնորհներ, որոնք բացասաբար են ազդում եւ բուժփիմնարկների, եւ բուժաշխատողների, եւ բնակիչների վրա:

Հիվանդանոցներում, օրինակ, ինչպես նախկինում, անկողնային պարագաները հիվանդի հարազատները պետք է բերեն տնից, դեղերը ձեռք բերեն իրենց միջոցներով, բացի համապատասխան վճար կատարելուց, վճարեն բուժող կամ վիրահատող բժշկին, բուժքույրերին եւ այդպես շարունակ: Որեւէ կերպ հնարավոր չէ իմանալ, թե պետական բյուջեից ստացած գումարներից հիվանդանոցը պարտավոր է հոգալ վերոնշյալ ծախսերն եւ հոգսերը: Իսկ եթե այնուամենայնիվ ինչոր կերպ դա հաջողվում է իմանալ, ապա հետեւում է ստանդարտ պատասխանը՝ միջոցները չեն բավակաացնում: Ընտրել այլ հիվանդանոց՝ անիմաստ է, որովհետեւ պատկերը նույնն է ամենուրեք:

Ինչ վերաբերում է առաջնային բուժօգնությանը, որն անցյալ տարի դարձավ անվճար բոլորի համար, ապա կարծես թե անժխտելի է դրա անհրաժեշտությունը մեր երկրի համար, որի բնակչության ավելի քան մեկ երրորդը դեռ գտնվում է աղքատության առանց այն էլ ցածր գծից ներքեւ: Սակայն ամեն մի լավ գաղափար կարելի է վարկաբեկել այնպես, որ դրա մասին հետագայում խոսել անգամ հնարավոր չլինի: Ցավոք, դա տեղի է ունենում անվճար բուժօգնության հետ: Առողջապահության ոլորտի պատասխանատուները անընդհատ հրապարակավ հայտարարում են, որ պոլիկլինիկաներում բնակիչներից ոչ ոք գումար պահանջելու իրավունք չունի: Արդյունքում առաջնային բուժօգնության կարիք ունեցող այդ նույն բնակիչները, այցելելով պոլիկլինիկա, տեսնում են բուժաշխատողների դժգոհ եւ կոպիտ վերաբերմունքն ու համապատասխան սպասարկումը: Ինչը, ճիշտ է, արդարացնել չի կարելի, բայց միանգամայն բացատրելի է:

Ինչպես կարելի է բարեհաճ վերաբերմունք եւ որակյալ բուժօգնություն ակնկալել բժշկից, որի աշխատավարձը կազմում է 30-35 հազար դրամ: Մի՞թե բուժաշխատողների աշխատավարձերը նվազ կարելու են, քան, ենթադրենք, դատավորների աշխատավարձերը,



որոնց կտրուկ բարձրացման վերաբերյալ տրվող պաշտոնական բացատրություններն արդարացիորեն անհասկանալի են հասարակայնությանը: Այս իրավիճակի պատճառը, ինչպես նշեցինք վերելում, դարձյալ նույն մենաշնորհն է, որն առաջացել է բուժփիմնարկների միավորումից հետո: Բուժմիավորումների ղեկավարներն են դարձյալ միանձնյա, առանց որեւէ չափանիշների հաշվի առնելու որոշում, թե որքան աշխատավարձ պետք է ստանան իրենց այս կամ այն բուժփիմնարկի բժիշկներն ու բուժաշխատողները: Արդյունքում կառավարության պաշտոնյաները հայտարարում են, որ, օրինակ, 2006-ին պոլիկլինիկաների բուժանձնակազմի աշխատողների միջին աշխատավարձը բարձրացել է, կազմելով 46800 դրամ, սակայն իրականում անգամ միայն բժիշկները դրանից էապես ցածր աշխատավարձ են ստանում: Աշխարհում ընդունված է, որ բուժսպասարկումը թանկ ծառայություն է եւ որպեսզի որակյալ լինի, հարկ է դրա համար միջոցներ հատկացնել եւ հետեւել, որ դրանք արդյունավետ ծախսվեն:

Առողջապահության ոլորտում իրականացրած բարեփոխումներն իսկապես արդյունավետ, բուժօգնությունը որակյալ եւ հասանելի դարձնելու համար հարկ է միջոցներ իրականացնել ստեղծված բուժմիավորումների արդյունավետ կառավարման եւ ծախսերի վերահսկողության համակարգ ստեղծելու ուղղությամբ: Պետք է հստակ ընդգծվի եւ իրազեկվի, թե որ հիվանդանոցը, որ ծառայություններն է կատարում անվճար՝ պետական բյուջեից ստացած միջոցներով, իսկ որի համար պետք է վճարեն հիվանդների հարազատները: Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել բուժաշխատողների աշխատավարձերին: Դրանք պետք է զոնե մոտ լինեն մասնավոր բուժփիմնարկներում, այսինքն՝ շուկայում գոյություն ունեցող աշխատավարձերին: Դրանից հետո միայն կարելի է, ավելի ճիշտ՝ պետք է պահանջել որակյալ սպասարկում եւ հիվանդների նկատմամբ բարեհաճ վերաբերմունք: Հուսանք, որ այս նկատառումները հաշվի կառնվեն ԱՅՌԾ վերանայման աշխատանքային խմբի կողմից եւ կնախանշվեն քայլեր, որոնք հնարավորություն կտան ինչպես բուժօգնությունը հասանելի եւ որակյալ դարձնել բնակչության բոլոր խավերին, այնպես էլ այն իրականացնողների համար ստեղծել ճկուն համակարգ եւ ապահովել գործունեության համար անհրաժեշտ պայմաններով ու վարձատրությամբ:



ՄԻԺԻ-ի նոր դիրքորոշումը ԱՅՌԾ մասին՝ վերանայման գործընթացի շրջանակներում



ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԻԺԻ

1 Դեկտեմբերի 2006թ.

## Միայն նվազագույն նյութական պահանջմունքների բավարարումը չի բերելու մարդու սոցիալական հնարավորությունների մեծացման և աղքատության վերացմանը...

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից շարունակվում են ՀՀ Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի (ԱՅՌԾ) վերանայման գործընթացները, որոնց նպատակն է գնահատել մինչև այժմ կատարված աշխատանքները՝ 2003-ին ՀՀ կառավարության կողմից հաստատված ԱՅՌԾ-ի շրջանակում, և ըստ այդմ՝ կատարել փոփոխություններ առաջիկա երկու տարվա ծրագրային դրույթներում: Վերանայման այս գործընթացը ՀՀ կառավարությունը պետք է կատարեր 2005թ., սակայն այն չիրականացվեց և սկսվեց միայն 2006-ին: Այս մասին տե՛ս «Տեսակետ-ՄԻԺԻ» 20-րդ համարում, էջ 12-13, հուլիս 2006թ.:

ՄԻԺԻ-ն 2006թ. հուլիսի 12-ին, հանդես եկավ ԱՅՌԾ վերանայման գործընթացի և գերակայությունների վերաբերյալ իր առաջարկություններով ու դիրքորոշումով (տե՛ս «Տեսակետ-ՄԻԺԻ» 20-րդ համար, հուլիս 2006թ.), որտեղ ևս մեկ անգամ՝ 2001 թվականից սկսյալ, ՄԻԺԻ-ն կրկին անգամ հստակ դրեց այն գերակայությունները, որոնք պետք է ամրագրվեն ՀՀ կառավարության կողմից՝ ԱՅՌԾ-ի վերանայման ընթացքում:

ՄԻԺԻ-ի առաջարկությունների հիմնական առանցքը՝ ծրագրի գերակայությունների փոփոխումն է, քանզի **տնտեսական աճի քաղաքականությունը ՉԻ ԿԱՐՈՂ հաղթահարել աղքատությունը ՀՀ-ում, այլ հանրային կառավարման, արդարադատության, կրթության ոլորտում կատարվող հիմնական և իրական բարեփոխումները՝ հիմնված եկամուտների արդար վերաբաշխման, արդար ու սոլիդար (քաղաքացիական գոտեկցության) սոցիալական համակարգի սկզբունքների վրա,** որ հնարավորություն կտան մշակել աղքատության հաղթահարման համար իրական և ազդու քաղաքականություններ ու մեխանիզմներ Հայաստանի Հանրապետությունում:

ՄԻԺԻ-ն իր այս դիրքորոշման մեջ կրկին և առավել պնդում է իր սկզբունքային դիրքորոշումը ու նաև կրկին բացահայտում է մի շարք հիմնական խնդիրներ, որոնք **պետք է հաշվի առնվեն ՀՀ կառավարության կողմից՝** վերանայումների և ռազմավարական ծրագրի հետագա իրականացման ընթացքում:

ՀՀ Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի առաջին բաժնի 1-ին գլխի 41-րդ մասում տրված է աղքատության սահմանումը. «...աղքատու-

թյան տակ հասկացվում է կենսաբանական, սոցիալական, հոգևոր-մշակութային նվազագույն պահանջմունքները բավարարելու անհնարինությունը...»: Հետագա շարադրանքում առավել մանրակրկիտ ներկայացվում են վերոնշյալի բնութագրերը: Իսկ 42-րդ մասում գրված է. «**Մարդն աղքատ է կամ աղքատ չէ՝ հիշյալ երեք խմբերի համակցությամբ, և միայն նվազագույն նյութական (կենսաբանական) պահանջմունքների բավարարումը չի բերելու մարդու սոցիալական հնարավորությունների մեծացման և աղքատության վերացմանը...**»<sup>1</sup>: Սակայն ՀՀ կառավարության 2003-2004թթ. և 2004-2005թթ. առաջին կիսամյակի ԱՅՌԾ հաշվետվություններում, որոնք ի դեպ այն փաստաթղթերն են, որոնց տվյալների հիման վրա է այսօր խոսվում աղքատության հաղթահարման «մեծ նվաճումների» մասին, աղքատությունը չափվում է զուտ կենսաբանական և նյութական կողմի գնահատման սկզբունքների վրա: Եվ մինչև օրս ՀՀ կառավարությունը, ԱՅՌԾ-ն իրականացնողները՝ խոսելով աղքատների թվաքանակի կրճատման մասին, շրջանցում են **բուն աղքատության սահմանումը**, ուստի հրապարակված ցուցանիշներում այն նույնպես հաշվի չի առնված, որը մեր գնահատումներով՝ **առնվազն 1.5 անգամ կարող է ավելացնել աղքատների ներկայիս թվաքանակը (39 % x 1.5 = 58.5 %):**

ՀՀ կառավարությունը, ԱՅՌԾ-ն իրականացնողները, վերահսկողները - մոնիտորինգային խմբերը և այլ հիմնական դերակատարներ վերոնշյալն արդարացում են այն հանգամանքով, որ դեռևս հնարավոր չէ չափել սոցիալական և հոգևոր-մշակութային աղքատությունը, և այդ պատճառով դրանք չեն դրվում աղքատության չափման հիմքում: **Սակայն սա իրավունք չի տալիս խաբել հասարակությանը և ժողովրդին, թե աղքատությունն իրականում հաղթահարվում է ՀՀ-ում, թվախեղ անել այդ մասին կասկած արտահայտողներին ու ձեռնավարության (մանիպուլյացիա) ենթարկել ժողովրդին և հասարակությանը:**

Սա նաև հասարակության մեջ անլուրջ տպավորություն է ստեղծում աղքատության հաղթահարման գործընթացի նկատմամբ՝ որպես **կեղծ ու ձևական գործընթաց:** Ելնելով այս ամենից, ի թիվս վերը նշված գերակայությունների՝ ՄԻԺԻ-ն առաջարկում ու պնդում

<sup>1</sup> Աղքատության Հաղթահարման Ռազմավարական ծրագիր, էջ 21-22, Երևան, 2003 թ.:

է, որ գերակա խնդիր պետք է լինի աղքատության սոցիալական և հոգևոր-մշակութային ցուցանիշների և չափորոշիչների համակարգի մշակումը, որը մեզ հնարավորություն կտա իրապես չափել աղքատությունը, և ըստ այդմ իրագործել քաղաքականությունները և որոշումները: Մենք վստահ ենք, որ այս պարագայում, ԱՅԴ-ում հռչակված տնտեսական աճի քաղաքականությունը չի կարող հիմք հանդիսանալ իրական աղքատության հաղթահարման համար:

Միժի-ի դիտանկյունից՝ մյուս կարևոր հիմնախնդիրն առնչվում է հենց «կենսաբանական» աղքատությանը կամ աղքատության նյութական կողմին: Սա վերաբերում է նվազագույն սպառողական զամբյուղին, որը 2004-2005 թթ. առաջին կիսամյակի հաշվետվությունում կազմում է մոտ 20000 դրամ: Պետք է նշել, որ այստեղ նվազագույն պարենային զամբյուղը հաշվարկված է ավելի պակաս, քան մեկ շնչին մեկ օրում բաժին ընկնող 2400 կկալ-ով, ինչպես նախատեսվում է ՀՀ Առողջապահության նախարարության կողմից: Հարկավոր է փոխել սպառողական նվազագույն զամբյուղի արժեքը և ըստ այդմ հաշվարկել կենսաբանական աղքատությունը, քանզի ծիծաղելի և անհեթեթ է, որ այսօր ՀՀ-ում ամսական 20000 դրամով մարդը կարող է ապահովել իր « ... սնունդը, անձնական և կենցաղային հիգիենայի անհրաժեշտ նվազագույն պահանջների բավարարումը և նվազագույն սեզոնային հագուստը, բնակարանի առկայությունը, ջրի, ջերմության և էլեկտրաէներգիայի անհրաժեշտ նվազագույն սպառման հնարավորություն...»<sup>2</sup>:

Պետք է սահմանվի այնպիսի սպառողական նվազագույն զամբյուղ, որը լիարժեք և որակով կարողանա ապահովել վերը նշված պահանջները, խնայողությունները և պարունակի գնաճի, դրամի գնողունակության ռիսկերը:

Պատկերացրեք մի երիտասարդ ընտանիք՝ կազմված երկու հոգուց, որն ըստ այսօրվա աղքատության


գծի «աղքատ» չի համարվում. օրինակ՝ երկուսի եկամուտը կազմում է ամսական 42000 դրամ... և դրանով ընտանիքը պետք է ապահովի իր կենսաբանական պահանջները... Ամենավառ երևակայությունն անգամ այս գումարով հնարավորություն չի տալիս պատկերացնել «առողջ», առավել ևս «մարդավայել», անգամ կենսաբանական պահանջները բավարարում: Իսկ կրթության, առողջապահության, մշակութային պահանջները, երեխա ունենալու, ինքնագարգացման և նմանատիպ այլ բաներն ուղղակի անիրականացալի երազանք են դառնում:

Ժամանակն է ՀՀ այս պետական ռազմավարական ծրագիրը դարձնել ԻՐԱԿԱՆ Աղքատության հաղթահարման ծրագիր, ԻՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐ աղքատության ԴԵՄ ի խնդիր մեր ժողովրդի և հասարակության ՋԱՐԳԱՑՄԱՆ: Քանզի մեր պետության և ժողովրդի համար ափսոս է ու նաև անթույլատրելի այն էներգիան, աշխատանքն ու ֆինանսները, որ ծախսվում են ոչ նպատակային, և ծրագիրն էլ դարձնում ինքնանպատակ և զուտ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ:

Միժի-ն ՊԱՅԱՆՁՈՒՄ է ՀՀ կառավարությունից և ԱՅԴ-ն իրականացնող կառույցներից լինել՝ արդար ու ճշմարիտ, դնել աղքատության բնութագրման ճիշտ չափը և ԻՐԱՊԵՍ ՊԱՅՔԱՐԵԼ դրա դեմ. այդ ժամանակ այս գործընթացը չի համարվի ձևական ու կեղծ, ու հասարակությունը և ժողովուրդը՝ իրական շահառու խումբը, կհավատա ու կմասնակցի այս գործընթացին, նաև նրա ԼԻՄԻԺԵ ՏԵՐԸ ԿԴԱՌՆԱ:

Միժի-ն ՊԱՅԱՆՁՈՒՄ է ՀՀ կառավարությունից և ԱՅԴ-ն իրականացնող կառույցներից քաղաքական և քաղաքացիական, իրական և հզոր ԿԱՄՔ ու հանրային հավաքական շահի ճիշտ ԳԻՏԱԿՑՈՒՄ և ԳՈՐԾԱԴՐՈՒՄ:

<sup>2</sup> Աղքատության Հաղթահարման Ռազմավարական ծրագիր, 41-րդ մաս, էջ 21:



ՀԱՊԱՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

19 Հոկտեմբերի 2006թ.

# ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԸՆԿԱԼՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի (ԱՅՈԾ) շրջանակում արդարադատության համակարգում իրականացված եւ նախատեսվող բարեփոխումները երեկ ներկայացրեց ՀՀ արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանը: Նշելով, որ ցանկացած երկրի տնտեսական կարողությունները եւ դրանց միջոցով աղքատության հաղթահարման հաջողությունները մեծապես կապված են այդ երկրի օրենսդրության եւ արդարադատության համակարգի հետ՝ նախարարը հայտնեց, որ բազում երկրներում բարեփոխումները, որպես աղքատության հաղթահարման կարելորագույն գործոն, իրականացվում են հենց դատաիրավական համակարգում:



## ՆԵՐԿԱՅԱԾՎԵՑԻՆ ԱՀՈԾ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱԾՎԱԾ ԷՒ ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ԲԱՐԵՓՈՒՄՈՒՄՆԵՐԸ

Խոսելով օրենսդրական բարեփոխումների մասին՝ նախարարը նշեց, որ Հայաստանի անկախության հռչակումից հետո եղան մի շարք երեւոյթներ, որոնց հետեւանքով երկրի օրենսդրական դաշտը հայտնվեց խառնաշփոթ իրավիճակում:

«Ներկայումս այդ դժվարությունների մի մասը հաղթահարված է, սակայն այսօր առաջնահերթ խնդիր է, վերանայելով մեր մոտեցումները, մեր անցած ուղին եւ թերությունները, իրավական դաշտում հստակություն մտցնելը», - նշեց Դ. Հարությունյանը: Նրա խոսքերով՝ արդյունավետ իրավական դաշտը կարելորագույն գործիք է, որը խթանում է երկրի զարգացումը, ապահովում է մարդու իրավունքների պաշտպանության պատշաճ մակարդակ, հենք է ստեղծում կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարի համար:

Նախարարի խոսքերով՝ ներկայումս օրենքները եւ իրավական ակտերը պետք է համապատասխանեն այն սկզբունքներին, որոնք ընդունված են միջազգայնորեն՝ անցումա-

յին փուլում գտնվող երկրների համար: Օրենքների իրականացման համար, ըստ նրա, պետք է լինեն անհրաժեշտ ռեսուրսներ, օրինակ՝ հասարակական ընկալումը:

Ըստ «Արմենպրեսի», աղքատության հաղթահարման իրականացման համար երկրորդ կարելոր բաղադրիչը, Դ. Հարությունյանի կարծիքով, դատական համակարգի բարեփոխումներն են: Այս ուղղությամբ իրականացվող ռազմավարական ծրագիրը նախատեսում է դատարանների անկախության, ինքնավարության եւ ինքնիշխանության հաստատում: «Անկախությունը դատարանի համար անհրաժեշտ է, եթե դատարանները չլինեն անկախ, նրանք չեն կարողանա հակազդել օրենսդիր եւ գործադիր մարմինների ճնշումներին, եւ այս առումով անհրաժեշտ է ոչ միայն զուտ անկախության ապահովումը, այլեւ այնպիսի գործելակերպ, որը ցույց տա հասարակությանը, որ դատարանն իրականում անկախ է», - նշեց նախարարը, ավելացնելով, որ ներկայումս հաճախ են վեճերը օրենսդիր եւ գործադիր իշխա-

նությունների միջեւ եւ, չլինելով անկախ, դատական իշխանությունը չի կարողանա ճիշտ լուծում տալ այդ վեճերին:

Նախարարի խոսքերով՝ դատարանների անկախության համար անհրաժեշտ են սահմանադրական-օրենսդրական եւ ինստիտուցիոնալ-կազմակերպչական երաշխիքներ:

Խոսելով դատական համակարգում առկա կադրային քաղաքականության մասին՝ նախարարը նշեց, որ այն ներկայումս վարվում է արդարադատության նախարարի, արդարադատության խորհրդի եւ ՀՀ նախագահի կողմից: «Սակայն արդարադատության նախարարը չպետք է առնչվի կադրային քաղաքականության հետ, դատավորների ընտրությունը պետք է կատարի դատական իշխանությունը, բայց ոչ կամայական միջոցով», - ասաց Դ. Հարությունյանը: Նա ավելացրեց, որ օրենսդիրը պետք է դատավորի ընտրության հստակ կանոններ սահմանի:

«Մենք ենթադրում ենք, որ դատավոր դառնալու համար անձը

պետք է անցնի մի քանի փուլ. առաջին՝ մասնագիտական կարողությունների ստուգումը, որը դարձյալ պետք է իրականացնի դատական, այլ ոչ թե գործադիր իշխանությունը»,- ասաց նախարարը: Նա նշեց նաև, որ արդարադատության խորհուրդը փակ քվեարկությամբ կորոշի այն անձանց, որոնք հավակնելու են լինելու դատավորներ, սակայն, նախարարի խոսքերով, բացի գիտելիքներից, դատավորը պետք է ունենա նաև այլ հմտություններ, որոնք բուհում չեն ուսուցանվում: Դրա համար պետք է ստեղծվի դատական դպրոց, որտեղ մեկ եւ կես տարվա ընթացքում դատավորները կծանոթանան այդ մասնագիտական հմտություններին: «Դատավորի պաշտոնում ոչ պակաս կարևոր է դատավորների առաջխաղացման հարցը եւ գործադիրն է դա իրականացնում: Սակայն դատավորների աշխատանքի գնահատականը նույնպես պետք է տա դատական իշխանությունը, ի դեմս արդարադատության խորհրդի»,- հավելեց Դ. Զարուբյունյանը:

Նախարարը նշեց նաև, որ կմե-

ծանան պահանջները դատավորների ուսուցման նկատմամբ, ավելին, մշտական ուսուցումը, օրենսդրական դաշտում տեղի ունեցող փոփոխություններին մշտապես իրազեկ լինելը դիտվելու է որպես դատավորի աշխատանքային պարտավորություն:

Դատավորների աշխատավարձի բարձրացումը չպետք է դիտել որպես պայքար կոռուպցիայի դեմ: Ինչպես նշեց Դավիթ Զարուբյունյանը, դատավորների աշխատավարձի բարձրացումը նախատեսում է հասարակության մեջ նրանց կշռի ու դերի բարձրացում: «Գաղտնիք չէ, որ ցանկացած պաշտոնի կշիռը որոշվում է դրա համար սահմանված աշխատավարձով, իսկ տվյալ դեպքում դատավորների աշխատավարձի բարձրացումը ենթադրում է նաև նրանց անկախության եւ ինքնուրույնության աստիճանի բարձրացում»,- ասաց նախարարը:

Խոսելով կոռուպցիայի դեմ պայքարի մասին՝ Դ. Զարուբյունյանը նշեց, որ դա հնարավոր է իրականացնել դատական համակարգում նախատեսվող նորամուծու-

թյունների շնորհիվ: Մասնավորապես՝ արդարադատության խորհրդին տրվում է հնարավորություն՝ խստացնելու դատական որոշումների նկատմամբ ներկայացվող պահանջները, այսինքն՝ ցանկացած դատավոր պարտավորվելու է մանրամասն հաշվետվություն ներկայացնել կայացրած որոշման մասին, ներկայացնելով օրենսդրական եւ իրավական հիմքերը: Բացի այդ, բոլոր դատական ակտերը, ցանկացած դատավորի կողմից կայացված որոշում հասանելի կդառնա հասարակության համար ինտերնետ ցանցի միջոցով:

Դատավարության ընթացքում յուրաքանչյուր կողմ հնարավորություն կստանա նաև որպես փաստարկ ներկայացնելու նմանատիպ մեկ այլ դատավարության ընթացքում կայացված որոշում: «Դա պարտավորեցնող է դատավորների համար, քանզի նրանք կգիտակցեն, որ իրենց կայացրած որոշումը, ծիշտ լինի դա, թե ոչ, կօգտագործվի մեկ այլ դատական գործընթացում»,- նշեց Դ. Զարուբյունյանը:

## ՄԱՐԶԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Մասնակցային գործընթացի արդյունավետ ձևերից են հանդիպում-քննարկումները, որոնք կազմակերպվում են շահագրգիռ բոլոր կողմերի մասնակցությամբ, ըստ ժամանակացույցի:

Մարզային քննարկումների համար ընտրված են այնպիսի թեմաներ, որոնք առավելապես բացահայտում են տեղերում սուր արտահայտված խնդիրները, այդ թվում՝ զբաղվածության, փոքր և միջին ձեռներեցության, կրթության և առողջապահական ծառայությունների զարգացման ծրագրերը: Փորձ է արվել առաջ քաշել այնպիսի հարցեր, որոնք առավել առարկայական են՝ տեղերում քննարկելու և հնարավոր լուծումներ առաջադրելու առումով: Հայտնի է, որ վերջին տարիներին Հայաստանի տարածքային զարգացումը որոշակի խնդիրներ է առաջացրել. ունենք մայրաքաղաք, որը զարգանում է արագ թափով, և ունենք մարզեր, որոնց զարգացումը չի հասնում Երևանի զարգացման գոնե կեսին: ԱՅՌԾ վերանայման գործընթացը կոչված է լուծելու հենց այս խնդիրը՝ մեղմելու այդ տարբերությունը, ծրագրերն ուղղորդելու դեպի մարզերը: Այս իմաստով խիստ կարևոր է հասկանալ, թե տեղերում որո՞նք

են առաջնահերթ լուծում պահանջող հարցերը, որպեսզի ամրագրվի, թե ի՞նչ առանձնահատուկ քաղաքականություն է պետք որդեգրել:

\* \* \*

**ԱՅՌԾ վերանայման մասնակցային գործընթացի կրթության ոլորտի «Դպրոցների կառավարման համակարգերի գործունեությունը» թեմայով հանդիպում-քննարկումներում արծարծված խնդիրներ և առաջարկություններ:**

### ԽՆԴԻՐՆԵՐ

- Դպրոցների կառավարման համակարգի և ընդհանրապես ԱՅՌԾ-ի վերաբերյալ իրազեկման մակարդակը շատ ցածր է, 5 տոկոսից ոչ ավելի (Գյումրի – 25.10.06%, Մեղրի – 30.10.06%, Գավառ – 10.11.06%, Վանաձոր – 14.11.06%):
- «Տրանսփարենսի ինտերնեյշնլ» կազմակերպության կողմից Շիրակի մարզի հանրակրթության ոլորտում անցկացված հետազոտությունների համա-



ծայն ընտրված ոչ մի դպրոցի խորհուրդ չէր գործում (Գյումրի – 25.10.06թ.):

- Դպրոցական խորհուրդների՝ մանկավարժական և ծնողական խորհուրդների կողմից նշանակված անդամները պետք է նվիրված լինեն կրթության զարգացման գործին, սակայն, որպես կանոն, «նվիրված» են տնօրենին: Նրանք, բացի ֆինանսական գործերից, ոչ մի այլ բան չեն տեսնում: Հաճախ մարզկենտրոններից դուրս գտնվող դպրոցների խորհուրդների կազմում լիազոր մարմինը ներկայացնում են այդ բնակավայրում չբնակվող կամ նույնիսկ արտագնա աշխատանքում գտնվող անձինք (Գյումրի – 25.10.06թ., Մեղրի – 30.10.06թ., Իջևան – 07.11.06թ.):

- Ուսուցիչները և ծնողները կաշկանդված են, մտավախություն ունեն, որ եթե իրենք ակտիվ լինեն, ապա դա բացասաբար կազդի իրենց կարիերայի (ուսուցիչների դեպքում) կամ իրենց երեխաների առաջադիմության (ծնողների դեպքում) վրա (Գյումրի – 25.10.06թ.):

- Խորհուրդների գործունեությունը կրում է ձևական բնույթ. իրականում ամեն ինչ որոշում է դպրոցի տնօրենը, հարկավոր է թեթևացնել ծրագրերը, որպեսզի երեխաներն ի վիճակի լինեն սովորելու (Մեղրի – 30.10.06թ.):

- Ուսումը անհնար է կազմակերպել, եթե չկան ֆիզիկայի, քիմիայի գործնական պարապմունքների անհրաժեշտ նյութեր, ուսուցման տեխնիկական միջոցներ: Դպրոցներում չկան գլոբուսներ, քարտեզներ, ուսումնական ֆիլմեր (Մեղրի – 30.10.06թ.):

- Բարձրագույն կրթությունը թանկ է և տարեցտարի ավելի է թանկանում, հնարավոր չէ երեխաներին ուսման տալ (Մեղրի – 30.10.06թ.):

- Մեր երկրին պե՞տք է այսքան ուսանող, ավելի լավ է մասնագետ դառնան, աշխատեն (Մեղրի – 30.10.06թ.):

- Մասնավորի մոտ պարապելու սովորությունը երևանից են բերել, այստեղ այդ բանը չկար: Գյուղական դպրոց ավարտածները բուհ չեն կարողանում ընդունվել (Մեղրի – 30.10.06թ.):

- Գյուղերում դասագրքերի և մասնագետների (հատկապես անգլերենի) կարիք կա (Մեղրի – 30.10.06թ.):

- Կոմպլեկտավորեցինք 6 և 6,5 տարեկանների դասարանները, մեկ դասասենյակում ստացվեց 35 աշակերտ: Ի՞նչ անի դասվարը այս պայմաններում (Իջևան – 07.11.06թ.):

- Ծնողներն ահռելի միջոցներ են ծախսում մասնավոր պարապողների վրա, վերջիններս էլ շահագրգռված են, որպեսզի դպրոցները թույլ լինեն (Վանաձոր – 14.11.06թ.):

### Առաջարկություններ

- Ստեղծել մասնագետների հատուկ բանկ, որտեղից վիճակահանությամբ ընտրվածները (որոշակի

թվով) անցկացնում են տնօրենի ընտրություն: Այսպիսով կբացառվի որևէ մեկի ազդեցությունը կամ միջամտությունը (Գյումրի – 25.10.06թ.):

- Հաստատության տնօրենի ընտրության ժամանակ, ՀՀ ԿԳ նախարարի հրամանով, խորհրդի կազմը վիճակահանությամբ համալրել վերոհիշյալ բանկում գրանցված մասնագետներով (որոշակի թվով)՝ վերապահելով նրանց վճռական ձայնի իրավունք կամ էլ դպրոցի տնօրենը թող լինի քաղծառայող (Գյումրի – 25.10.06թ.):

- Տնօրենի պաշտոնի հավակնորդի համար սահմանել գիտելիքների պարտադիր շեմ, որի չբավարարման դեպքում հավակնորդը չի կարող խորհրդի կողմից գրանցվել քվեաթերթիկում և ընտրվել: Գիտելիքների համապատասխանությունը որոշվում է խորհրդի և նիստին մասնակցող փորձագետների կողմից հավակնորդին տրված գրավոր և բանավոր հարցերի միջոցով (Գյումրի – 25.10.06թ., Մեղրի – 30.10.06թ.):

- Լիազորված մարմինը, ՏԻՄ-ը, ծնողական խորհուրդը և ՀԿ-ն որպես կանոն, պետք է առաջադրեն այնպիսի ներկայացուցիչներ, որոնք ունեն առնվազն միջին մասնագիտական կամ բարձրագույն կրթություն՝ իրավաբան, մանկավարժ, տնտեսագետ, ֆինանսիստ մասնագիտություններով (Գյումրի – 25.10.06թ., Մեղրի – 30.10.06թ.):

- Մանկավարժական խորհրդի կողմից դպրոցի կառավարման խորհրդում ընդգրկված անձինք կարող են աշխատանքից ազատվել ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով, նախապես ստանալով լիազորված մարմնի համաձայնությունը (Գյումրի – 25.10.06թ.):

- Հարկավոր է խորհուրդների անդամներին վարձատրելու (խրախուսելու) ձև մշակել (Գյումրի – 25.10.06թ., Գավառ – 10.11.06թ.):

- Խորհրդի կազմում կարող են ընդգրկվել թոշակի անցած ուսուցիչներ, որոնք նվիրյալներ են (Գյումրի – 25.10.06թ.):

- Համայնքը շատ ավելի շահագրգիռ կլինի, եթե խորհրդի կազմում առաջադրվի նաև համայնքի ներկայացուցիչը (Գյումրի – 25.10.06թ.):

- Պետք է պետության մեջ բանվորի, արհեստավորի, մասնագետի, աշխատավորի նկատմամբ հասարակական դրական կարծիք ձևավորել (Մեղրի – 30.10.06թ.):

- Ութերորդ դասարանից հետո երեխայի՝ մասնագիտություն ստանալու հնարավորություններ ներկայումս չկան, անհրաժեշտ է բացել արհեստագործական ուսումնարաններ, մասնագիտացված դպրոցներ (Մեղրի – 30.10.06թ., Գավառ – 10.11.06թ.):

- Պետք է վերականգնել հեռակա կրթության հավակարգը (Մեղրի – 30.10.06թ.):

- Անհրաժեշտ է որևէ բուհում դպրոցի տնօրենի հավակնորդներին դպրոցի կառավարում ուսուցանել, որից հետո միայն լավագույնին ընտրել (Իջևան – 07.11.06թ.):

- Նկատի առնելով բնակչության սոցիալական



վատ վիճակը, ԱՅՈԾ-ով շրջանառու հիմնադրամի մեջ 10 տոկոսի շեմն ավելացնել, ավելացնել նաև անվճար բաժանվող դասագրքերի քանակը (Իջևան – 07.11.06թ., Վանաձոր – 14.11.06թ.):

• Մանկավարժական բուհերի շրջանավարտների հիպոլոնը հանձնել երեք տարվա աշխատանքից հետո (Իջևան – 07.11.06թ., Գավառ – 10.11.06թ., Վանաձոր – 14.11.06թ.):

• Խորհրդին չվերապահել հաստատության տնօրենի ընտրության լիազորությունը, այլ միայն աշխատանքային պայմանագրին հավանություն տալու իրավունք (Գավառ – 10.11.06թ.):

\* \* \*

**ԱՅՈԾ վերանայման մասնակցային գործընթացի առողջապահության ոլորտի «Բուժօռնաբանությունների ֆիզիկական մատչելիության ապահովում» թեմայով հանդիպում-քննարկումներում արծարծված խնդիրներ և առաջարկություններ:**

### ԽՆԴԻՐՆԵՐ

• Մեղրիից հիվանդը ուղևորվում է Երևան, բայց մայրաքաղաքում անվճար բուժօռնաբանություն չի ստանում նույնիսկ հաշմանդամը կամ քաղցկեղով հիվանդը (Մեղրի – 31.10.06թ.):

• Մեղրիում, Բերդում, Ամասիայում բժիշկների, թերապևտների մեծ կարիք կա, 70-80 տարեկան բժշկին չենք կարողանում կենսաթոշակի ուղարկել, որովհետև փոխարինող չկա, էլ չենք ասում, որ ոչ մի նեղ մասնագետ չի մտնում այս տարածքներ, Մեղրիի երեք հրաշալի կառուցված ամբուլատորիաները դատարկ են, նույնիսկ պահակ չկա, քանի որ պահպանման ծախս չի նախատեսված (Մեղրի – 31.10.06թ., Բերդ - 16.11.06թ., Գյումրի – 18.11.06թ.):

• Մեղրու տարածաշրջանում մեծ է շրջակա միջավայրի աղտոտվածությունը, ինչի հետևանքով ավելի հաճախակի են դարձել արյան խտացման, հողացավի, ալերգիայի դեպքերը (Մեղրի – 31.10.06թ.):

• Ատամնաբուժական սարքավորումներն այնքան են հնացել ու շարքից դուրս եկել, որ շատերը սարսա-

փում են ատամ բուժելուց և գերադասում են ցավող ատամը հեռացնել, այլ ոչ թե բուժել (Մեղրի – 31.10.06թ.):

• Չմռանը որոշ տարածաշրջանների հետ կապը պարզապես խզվում է (Մեղրի, Ամասիա)՝ ճանապարհները փակվելու պատճառով, և շատ հիվանդների վիճակը օրհասական է դառնում (Մեղրի – 31.10.06թ., Գյումրի – 18.11.06թ.):

• Շիրակի և Լոռվա մարզերում քիչ չեն վագոն-տնակներում ապրող բնակիչները, ինչը առողջության քայքայման հիմնական պատճառներից է (Գյումրի – 18.11.06թ.):

### Առաջարկություններ

• Հարկավոր է ընդլայնել անվճար դեղորայքի ցանկը, քանի որ ներկայիս գներով այն հասանելի չէ բնակչությանը, հատկապես հաշմանդամներին (Մեղրի – 31.10.06թ., Գյումրի – 18.11.06թ.):

• Անվճար բուժօգնության մասին անհրաժեշտ է ՁԼՄ-ներով, տեղեկատվական թերթիկներով և գրքույկներով ճիշտ տեղեկատվություն տարածել ամբողջ հանրապետությունում (Մեղրի – 31.10.06թ., Բերդ - 16.11.06թ., Գյումրի – 18.11.06թ.):

• Բժշկական բուհ ավարտածներին դիպլոմ չտալ՝ մինչև որ մի քանի տարի չաշխատեն սահմանափակ բնակավայրերում (Մեղրի – 31.10.06թ., Բերդ - 16.11.06թ.):

• Վերապատրաստման ժամանակ պետք է վարձատրել ոչ միայն ընտանեկան բժիշկներին, այլև մյուսներին (Մեղրի – 31.10.06թ.):

• Կազմել հատուկ ժամանակացույց և մինչև 10 օրով Մեղրու տարածաշրջան գործուղել նեղ մասնագետների, և դա կրկնել տարեկան առնվազն երկու անգամ (Մեղրի – 31.10.06թ.):

• Պոլիկլինիկաներն անհրաժեշտ է ապահովել ինտերնետ կապով (Մեղրի – 31.10.06թ.):

• Սահմանափակ բարձր լեռնային գյուղական բուժամբուլատորիաների բժիշկների և բուժքույրերի աշխատավարձը բարձրացնել նվազագույնը 20 տոկոսով (Մեղրի – 31.10.06թ., Բերդ - 16.11.06թ., Գյումրի – 18.11.06թ.):

• Դեղամիջոցների հայտը, որ տրվում է տարին մեկ անգամ, պետք է ընդունել շատ ավելի հաճախակի (Բերդ - 16.11.06թ.):

• Մանկուց հաշմանդամ երեխայի հաշմանդամությունը ցմահ նշանակել, այլ ոչ թե ամեն տարի ներկայացնել հանձնաժողովին, ինչը կոռուպցիայի տեղիք կարող է տալ (Բերդ - 16.11.06թ.):

• Առողջապահության համակարգում ներդնել ապահովագրական բժշկությունը (Գյումրի – 18.11.06թ.):

• Կա ուժեղ և թույլ մասնագետ, և բնակիչը սովորել է, թե ում մոտ գնա բուժվելու, բայց բոլորն էլ հավասարաչափ են վարձատրվում: Նրանց պետք է վճարել ըստ բուժած հիվանդների թվի (Գյումրի – 18.11.06թ.):



# ՓՄՁ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՉԵՆԴՈՏՆԵՐՆ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ՀՆԱՐԱՅԻՆ ՔԱՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՆՓՈՓՈՒՄ

2006 թվականին ԱՅՈԾ վերանայման գործընթացում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումը ճանաչվել է որպես աղքատության հաղթահարման քաղաքականության գերակայություններից մեկը:

ՓՄՁ ոլորտի կարևորումն աղքատության հաղթահարման համատեքստում պայմանավորված է հետևյալ գործոններով՝

### 1. Ոլորտի զարգացման բարձր ներուժով՝

ՓՄՁ ոլորտի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 2005 թ. կազմել է 39% և ունի կայուն աճի միտում:

### 2. ՓՄՁ ոլորտի գործարարների և աղքատների ռազմավարական շահերի համընկնումը:

Ինչպես աղքատության հաղթահարման, այնպես էլ ՓՄՁ զարգացման կարևոր պայման է հանդիսանում ռեսուրսների հավասար մատչելիությունը և ռեսուրսների օգտագործման արդյունքում ձևավորվող եկամուտների արդարացի բաշխման ապահովումը:

ՓՄՁ զարգացման հիմնախնդիրների բացահայտման նպատակով ԱՅՈԾ վերանայման մասնակցային գործընթացի շրջանակներում կազմակերպված մարզային քննարկումների արդյունքում վեր են հանվել ոլորտի զարգացման մի շարք խոչընդոտներ, որոնք դասակարգվել են հետևյալ ուղղություններով՝

- քաղաքականության անկայունություն
- ռեսուրսների ցածր մատչելիություն
- հավասար մրցակցային դաշտի բացակայություն

### Քաղաքականության անկայունություն

Քաղաքականության անկայունությունը դրսևորվում է հիմնականում հարկային օրենսգրքում հաճախակի փոփոխություններով, ինչի արդյունքում ՓՄՁ սուբյեկտները ստիպված են կատարել ժամանակի և ֆինանսական միջոցների լրացուցիչ ծախսեր:

Սակայն եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ օրենքներում վերջին փոփոխություններն ուղղված են հարկային վարչարարության բարելավմանը և կազմում են աղքատության հաղթահարման քաղաքականության կարևոր մաս, ապա հիմնախնդիրն ավելի շատ կայանում է օրենքներում փոփոխությունների վերաբերյալ ՓՄՁ սուբյեկտների իրազեկվածության բարձրացմանն ուղղված պետության կողմից ձեռնարկվող միջոցառումների ցածր արդյունավետության մեջ:

### Զարգացման ռեսուրսների մատչելիություն

ՓՄՁ ոլորտի զարգացման լրջագույն խոչընդոտ է հանդիսանում զարգացման ռեսուրսների՝ տեղեկատվության, ենթակառուցվածքների, վարկային միջոցների,

որի, որակյալ աշխատուժի մատչելիության ցածր աստիճանը:

ՓՄՁ սուբյեկտների հարաբերական առավելություններից մեկը արտաքին միջավայրում տեղի ունեցող փոփոխություններին արագ արձագանքելու կարողությունն է: Ֆինանսական ռեսուրսների սակավությունը սահմանափակում է ՓՄՁ սուբյեկտների հնարավորությունները կիրառել տեղեկատվության հավաքագրման թե՛ ակտիվ (յուրահատուկ հետազոտությունների և վերլուծությունների իրականացում կամ պատվիրում), թե՛ պասիվ (վերլուծությունների և հետազոտությունների արդյունքներին ծանոթություն) մեթոդները: Արդյունքում նվազում է պահանջարկի և արտադրության ու կառավարման տեխնոլոգիաների շուկաներում տեղի ունեցող զարգացումների վերաբերյալ ՓՄՁ սուբյեկտների տեղեկացվածության և արդյունքում՝ ձեռնարկությունների մրցունակության մակարդակի անկմանը, հատկապես արտաքին շուկաներում:

Ենթակառուցվածքների վատ վիճակը խոչընդոտում է ոչ միայն ՓՄՁ, այլ նաև ամբողջ տնտեսության զարգացմանը: Սակայն եթե խոշոր ձեռնարկություններն ի վիճակի են լուծել որոշ հիմնախնդիրները (խմելու ջրի, էլեկտրական հոսանքի կայուն մատակարարում, հեռատեսակապի անցկացում) սեփական ուժերով, ապա ՓՄՁ սուբյեկտների համար ենթակառուցվածքների վատ վիճակը դառնում է լուրջ խոչընդոտ բիզնեսի նախաձեռնման և ընդլայնման համար: Թեև որոշ ուղղություններով հիմնախնդիրների լուծման հիմնական բեռն իր վրա է վերցրել պետությունը (Հազարամյակի մարտահրավերներ և այլ ծրագրեր), սակայն արտադրական կառույցների կապիտալ նորոգման և շինարարության հարցերի լուծումը մնում է սեփականատիրոջ վրա: Սակայն ՓՄՁ սուբյեկտների տեսակետից ֆինանսական միջոցների և ժամանակի վերաուղղորդավորումը շինարարական գործունեության իրականացման համար հաճախակի դիտվում է ոչ նպատակահարմար: Այդպիսով արտադրական կառույցների վարձակալության շուկայի թերզարգացումը ևս զսպում է ՓՄՁ ոլորտի առաջանցիկ աճի տեմպերը:

2003-2006 թթ. իրականացված մի շարք հետազոտությունները<sup>1</sup>, ինչպես նաև ԱՅՈԾ շրջանակներում կազմակերպված մարզային քննարկումների արդյունքները վկայում են, որ ՓՄՁ զարգացման խոչընդոտներից է վարկային միջոցների ցածր մատչելիությունը:

Վարկերի բարձր տոկոսադրույքները, մարման կարճ

<sup>1</sup> «ՓՄՁ զարգացման հիմնախնդիրները Հայաստանում» ՓՄՁ ԶԱԿ, 2006 թ., «Հայաստանում գործարարության և ներդրումային միջավայրի խոչընդոտների գնահատում 2003-2004 թթ.» Օտարերկրյա Ներդրումների հյրախուսման Ծրագիր, «Փոքր և միջին ձեռնարկատիրությունը ընդդեմ կոռուպցիայի» Փոքր և միջին բիզնեսի հիմնադրամ:

ժամկետը և կոշտ գրաֆիկը, գրավի գնահատման կարգը և վարկավորման երկար ու բարդ ընթացակարգերը Հայաստանում դառնում են ՓՄՁ սուբյեկտների համար բիզնեսի կայացման անհաղթահարելի խոչընդոտներ:

Ֆինանսական շուկայում ստեղծված իրավիճակն առավելագույն բացասական ազդեցությունն է թողնում արդյունաբերության, գյուղատնտեսության ոլորտներում և մարզերում տնտեսվարող սուբյեկտների վրա:

Այդպիսով վարկային միջոցների ցածր մատչելիությունը կարող է խորացնել քաղաքային և գյուղական աղքատության, Երևանի և մարզերի միջև առկա խզուները:

Ձարգացման ռեսուրսների ցածր մատչելիությունը խոչընդոտում է նաև նոր ՓՄՁ սուբյեկտների բացման գործընթացին և հետևաբար նոր աշխատատեղերի ստեղծմանը, ինչը ևս հակասում է աղքատության հաղթահարման որդեգրած քաղաքականությանը:

ՓՄՁ ոլորտի զարգացման խոչընդոտները հաղթահարելու և փոքր և միջին բիզնեսին աջակցելու նպատակով 2002թ. ստեղծվել է ՓՄՁ ՋԱԿ պետական մասնակցության հիմնադրամը: Սակայն 2004թ. պետությունից ՓՄՁ ՋԱԿ-ին ուղղված ֆինանսական հատկացումները կազմել են ընդամենը 245 մլն. դրամ, կամ պետբյուջեի 0.06%: ՓՄՁ պետական աջակցության համակարգի կենսունակության բարձրացման, ինչպես նաև ՓՄՁ սուբյեկտների ֆինանսական և ներդրումային հնարավորությունների ընդլայնման, նոր ստեղծվող կազմակերպությունների խրախուսման նպատակով 2004թ. ընթացքում իրականացվել է ՓՄՁ սուբյեկտների վարկային երաշխավորությունների տրամադրման փորձնական ծրագիր, որի ֆինանսավորման համար պետությունը տրամադրվել է 25 միլիոն դրամ, կամ ՀՆԱ-ի 0,001%: ՓՄՁ ՋԱԿ-ի ֆինանսավորման ծավալները Կառավարության կողմից խնդրի փաստաթղթային կարևորման և համարժեք լուծումների անհամապատասխանության առավել ցայտուն օրինակներից է:

Հայտարարվող և իրականացվող քաղաքականությունների անհամապատասխանության մյուս օրինակը հավասար մրցակցային դաշտի ձևավորման խնդիրն է: Հավասար մրցակցային պայմանների պահովման կարևորությունը բավականին լավ հիմնավորված է ԱՅԻԾ իրականացման առաջընթացի հաշվետվությունում: Ըստ Կառավարության տեսակետի՝ «անհավասար գործունեության վիճակում հայտնված նորաստեղծ ընկերություններն ի սկզբանե փակման են դատապարտված, ինչն էլ արդյունքում կարող է հանգեցնել խիստ մեծաշնորհային շուկաների ձևավորման, որտեղ գերշահույթների ստացումը զուգակցվելու է արտադրանքների ու ծառայությունների որակական ցածր ցուցանիշներով»<sup>2</sup>:

ԱՅԻԾ իրականացման առաջընթացի 2004-2005 առաջին կիսամյակի հաշվետվությունում նաև ներկա-

յացված են ոլորտում Կառավարության կողմից ձեռնարկված քայլերը՝

- 2004թ. սեպտեմբերին ընդունվել է ՀՀ մասնավոր հատվածում մրցակցության ուժեղացման և գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագիրը,
- ընդունվել է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքը:

Սակայն ԱՅԻԾ շրջանակներում իրականացված հանրային քննարկումները վկայում են, որ ի տարբերություն սկսնակ ՓՄՁ սուբյեկտների, կայացած բիզնեսի համար առավել կարևոր հիմնախնդիր շարունակում է մնալ անհավասար մրցակցային պայմանները, ինչը խոսում է Կառավարության կողմից տվյալ ուղղությամբ ձեռնարկված քայլերի ցածր արդյունավետության մասին:

Անհավասար մրցակցային պայմաններում Հայաստանում հիմնականում գտնվում են ներքին և արտաքին շուկաներում գործող խոշոր և փոքր ու միջին ձեռնարկությունները:

Խոշոր և ՓՄՁ սուբյեկտների միջև անհավասար պայմանները հիմնականում դրսևորվում են հարկային բեռի ոչ հավասար բաշխման մեջ և պայմանավորված են կոռուպցիոն երևույթների լայն տարածվածությամբ: Միևնույն ժամանակ գործարարների շրջանակներում իրականացված մի շարք հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ հայկական գործարարների կողմից կոռուպցիան չի դիտվում որպես բիզնեսի զարգացման հիմնական խոչընդոտ:

Ավելին, գործարար շրջանակներում տարածված է կարծիք, որ հարկային և մաքսային մարմիններին բնորոշ կոռուպցիան թույլ է տալիս նվազեցնել պետության կողմից սահմանված ծանր հարկային բեռը:

Սակայն 2003թ. USAID և AED կողմից իրականացված բիզնես-խմբերի և անկախ ձեռնարկությունների տրանսակցիոն ծախսերի հետազոտության արդյունքների վերլուծությունը<sup>3</sup> վկայում է, որ բիզնես-խմբերը (խոշոր կապիտալը) ապահովում են իրենց պատկանող ձեռնարկությունների համար համեմատաբար ցածր տրանսակցիոն ծախսերի մակարդակը: Այդպիսով կոռուպցիան և հարկային բեռի անհավասար բաշխումն ուղղակի ձևով ազդում են գնագոյացման գործընթացի և հետևաբար ՓՄՁ սուբյեկտների մրցունակության մակարդակի վրա:

Մրցակցային անհավասար պայմանների մյուս կտրվածքը ներմուծման և ներմուծում փոխարինող ձեռնարկությունների փոխհարաբերություններն են:

2004-2006 թթ. դրամի արժեքավորման արդյունքում կտրուկ աճել է ներմուծող ձեռնարկությունների շահութաբերության նորման: Այդպես, դոլարի մոտ 36%

<sup>2</sup> ԱՅԻԾ իրականացման առաջընթացի հաշվետվություն, 2004-2005 առաջին կիսամյակ, կետ 57:

<sup>3</sup> Ն. Ջրբաշյան, Տ. Ջրբաշյան, «Պետության ինստիտուցիոնալ ներուժն ու ոչ ֆորմալ ինստիտուտները, բիզնես-խմբերի տրանսակցիոն ծախսերը Հայաստանում», «Տնտեսական քաղաքականություն և աղքատություն» ամսագիր, հունիս 2006:

արժեզրկման արդյունքում ներմուծողները դիտվող ժամանակշրջանում ստացել են մոտ 1 մլրդ դոլար լրացուցիչ եկամուտներ, ինչը կտրուկ բարձրացնում է ներմուծող ձեռնարկությունների ներդրումային և մարկետինգային քաղաքականության իրականացման հնարավորությունները:

ՓՄՁ վրա դրամի արժեքավորման ազդեցության մյուս ասպեկտն է արտահանման կառուցվածքում փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների տեսակարար կշռի նվազումը, որը պայմանավորված է հետևյալ գործոններով՝

1. Արտադրության փոքր ծավալներ և տրանսպորտային բարձր ծախսեր ունեցող, 36%-ից ցածր շահութաբերության նորմայով և տեղական հումքի վրա աշխատող ՓՄՁ սուբյեկտների համար արտահանման գործարքները դառնում են ոչ շահութաբեր:
2. Ի տարբերություն խոշոր ձեռնարկությունների ՓՄՁ սուբյեկտներն ի վիճակի չեն կազմակերպել սեփական արտադրության մեջ օգտագործվող հումքի ինքնուրույն ներմուծումը և հետևաբար չեն կարող օգտվել դրամի արժեքավորումով պայմանավորված ներմուծման գործարքների շահութաբերության նորմայի կտրուկ բարձրացումից:
3. Սեփական ֆինանսական միջոցների սահմանափակության և վարկերի ցածր մատչելիության պայմաններում ՓՄՁ սուբյեկտները չեն կարող երկար դիմակայել արտահանման ոլորտում ստեղծված իրավիճակին:

Արտահանման ոլորտում ՓՄՁ սուբյեկտների մասնակցության աստիճանի նվազումը անխուսափելիորեն հանգեցնելու է մենաշնորհի խորացմանը, որի վտանգի մասին խոսվում է նաև Կառավարության հաշվետվությունում:

**Եզրակացություններ**

Ամփոփելով հանրային քննարկումների ժամանակ ՓՄՁ սուբյեկտների կողմից բարձրացված ոլորտի զարգացման հիմնախնդիրները, կարելի է փաստել, որ հիմնական խոչընդոտները՝ վարկային միջոցների անմատչելիությունը և մրցակցային անհավասար պայմանները Հայաստանում պայմանավորված են պետության կողմից վարվող դրամավարկային և հակակոռուպցիոն քաղաքականություններով:

Ուշագրավ է, որ ԱՅԴՓ փաստաթղթում նշված քաղաքականություններին նվիրված բաժինները կամ բացակայում են (դրամավարկային քաղաքականության բաժինը, որն առկա էր ԱՅԴՓ նախնական փաստաթղթում, սակայն հանվել է վերջնական տարբերակից), կամ թույլ հիմնավորված են (հակակոռուպցիոն քաղաքականությունը, որի թերի ընդգրկումը ԱՅԴՓ-ում հիմնավորվում է Հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի առկայությամբ), կամ էլ հիմնավորված չեն առհասարակ (դրամի կուրսի արժեզրկումը տարեկան 3%-ով):

Եվ դրամավարկային, և հակակոռուպցիոն քաղաքականություններն առնչվում են զարգացման ռեսուրսների (վարկային միջոցներ) և հնարավորությունների (ներքին և արտաքին շուկաներ) վերաբաշխման հարցերին:

Ակնհայտ է, որ Հայաստանում աղքատության հաղթահարման համար անհրաժեշտ է ապահովել ոչ միայն տնտեսական աճի բարձր տեմպերը, այլ նաև այդ աճին մասնակցելու հավասար հնարավորությունները: Ակնհայտ է նաև, որ ներկա ԱՅԴՓ փաստաթղթի զարգացման գործընթացում հավասար մասնակցության խնդիրը անտեսված է:

***Գերման Մուսայելյան, անկախ փորձագետ  
Թամարա Աբրահամյան, ԱՅԴՓ աշխատանքային խմբի ՓՄՁ ոլորտի ներկայացուցիչ***

**ԱՅԴՓ վերանայման մասնակցային գործընթացի կազմակերպման շրջանակներում իրականացված բնապահպանության ոլորտի մասնագիտական քննարկումներ**

2006 թվականի հոկտեմբերի 24-ին, 25-ին և 27-ին Երևան քաղաքում ԱՅԴՓ վերանայման մասնակցային գործընթացի կազմակերպման շրջանակներում տեղի ունեցան բնապահպանության ոլորտի մասնագիտական քննարկումներ՝ վեր հանելու ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման, ապօրինի անտառահատման, բնապահպանական վճարների հասցեական օգտագործման և Հայաստանի մեծ քաղաքների էկոլոգիական վիճակի բարելավման հիմնախնդիրները: Քննարկումներին մասնակցում էին ՀՀ կառավարության, հասարակական հատվածի, դոնոր հանրության, ինչպես նաև ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի

ներկայացուցիչները: Նշվեց, որ ԱՅԴՓ-ն արդեն դադարել է զուտ տեսական փաստաթուղթ լինելուց և սկսել է կիրառական ակնհայտ դրսևորումներ ցուցաբերել: Կարևորվեց բնապահպանության դերը տնտեսության զարգացման գործում՝ որպես «էկոլոգիա-էներգետիկա-տնտեսություն» եռանկյան մեջ մարդու կենսագործունեության դիտարկման կարևոր բաղկացուցիչ, որը նաև երկրի կայուն զարգացման գրավականն է: Այդ առումով առանձնացվեց վերար-



տադրվող կենսառեսուրսների դերը: Խնդիրը վերջիններիս կայուն, առանց համակարգը կազմալուծելու օգտագործումն է, որի հետևանքով չպետք է խաթարվի վերարտադրության պարբերաշրջանի անընդհատությունը, ինչի թերացումների բացասական դրսևորումներին որոշ առումով ականատես ենք եղել թե՛ Սևանա լճի, թե՛ նման այլ օրինակների դեպքում:

Քննարկումների արդյունքում շեշտվեցին Սևանա լճի, նրա էկոլոգիական վիճակի, Սևան ազգային պարկի պահպանության, ջրի որակի բարձրացմանն ու կեղտաջրերի մաքրմանն ուղղված միջոցառումների իրականացման, ձկնապաշարի ապահովման, սանիտարահիգիենիկ պայմանների բարելավման, ապօրինի անտառահատման, բնապահպանական, ինչպես նաև Երևան քաղաքի էկոլոգիական խնդիրները: Նշվեց Սևանա լիճ թափվող գետերի հունը մաքրելու և ձևավորելու կարևորությունը, ինչի բացակայությունը պատճառ է հանդիսանում գետերի ջրի և հողերի կորստի, ծահճուտների գոյացման: Առաջարկվեց հաշվի առնել ջրի որակի խնդիրը, մաքրման կայանների կառուցման և Սևանի ավազանի կոյուղացման անհրաժեշտությունը:

Ըստ ներկայացված կարծիքների՝ Սևանի խնդիրը հնարավոր չէ լուծել առանց հասարակության մասնակցության և իրազեկության: Այն պետք է դիտարկել համալիր ձևով, այլ ոչ թե միայն որպես լիճը պահպանելու, ձկնապաշար ունենալու կամ էլ ջրի որակի խնդիր:

Ինչ վերաբերում է անտառներին, ապա դրանց զարգացումը պետք է դիտվի ամբողջ էկոհամակարգի համապատկերում, իսկ օպտիմալացմանը հարկավոր է անդրադառնալ՝ ունենալով 18-20 տոկոս անտառապատ տարածք, քանի որ միայն այդ դեպքում են լուծվում ոչ միայն էկոլոգիական պաշտպանության և անվտանգության հարցերը, այլ նաև հիմք է ստեղծվում արդյունաբերական անտառներ ունենալու համար: Չպետք է մոռանալ նաև մեր ռազմավարական նպատակը, այն է՝ գոնե մինչև 2010 թվականը վերականգնել հատված անտառները:

Չետաքրքիր է, որ բնապահպանման վճարի հավաքված գումարի միայն 40-50 տոկոսն է օգտագործվում բնապահպանական միջոցառումների իրականացման համար, հետևաբար անհրաժեշտություն է առաջանում առողջական խնդիրներ ծնող բնապահպանական երևույթները կանխելու լուծումներ գտնել:

Անտառներին առնչվող հիմնական խնդիրներից առանձնացվեցին անտառածածկ տարածքների մեծացումը, ապօրինի հատմանը նպաստող հիմնական գործիքների բացահայտումը, անձնական նպատակով անտառահատման նվազեցումը և անտառահատման օրինական վճարների հավաքումը:

Կարևորվեց նաև ճանապարհային ցանցը, որը լուրջ դեր է կատարում բնապահպանական խնդիրների լուծման գործում: Այսպես, քաղաքում իրականացվող կառուցապատումը խախտում է քաղաքաշինական և էկոլոգիական նորմերը: Խիտ կառուցապատման հետևանքով տրանսպորտային հոսքն ավելանում է: Բացի այդ,



կարելի՞ է արդյոք ակնկալել, որ 2015 թվականին հաշմանդամները կունենան առանց խոչընդոտների միջավայր:

Անդրադառնալով կառուցապատման խնդրին՝ մասնակիցները նշում էին, որ պետք է հնարավորինս հստակ սահմանվեն քաղաքաշինական նորմերը, իսկ քաղաքի գլխավոր հատակագիծը պետք է ունենա օրենքի ուժ: Բոլոր շինարարական կազմակերպությունները պարտավոր կլինեն ենթարկվել սահմանված նորմերին ու օրենքներին:

Մայրաքաղաքի գլխավոր հատակագծով ծրագրվում է բեռնաթափել ծանրաբեռնված փողոցները, սակայն խիտ կառուցապատման պատճառով դժվար է դա ակնկալել: Շեշտակի մեծացել է նաև Երևան քաղաքի սեյսմիկ ռիսկը. այսօր չկա քաղաքի ինժեներաերկրաբանական քարտեզը, սակայն մետրոյի շինարարությունից հետո իրավիճակը խիստ փոխվել է, թունելները խախտել են ջրային հորիզոնները:

Խոսվեց նաև օդի աղտոտվածության մասին, ինչն անմիջականորեն կապված է կանաչապատման խնդիրների հետ, որոնք էլ իրենց հերթին կառուցապատման աշխատանքների հետևանք են:

Քաղաքի էկոլոգիական խնդիրների թվում առանձնացվեց սանիտարահիգիենիկ և համաճարակային իրավիճակը:

Էկոլոգիական խնդիրները մեղմելու նպատակով, առաջարկ ներկայացվեց որպես էներգիայի աղբյուր օգտագործել բիոգազի հնարավորությունները՝ աղբի վերամշակման ճանապարհով:

Նշվեց նաև, որ անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել հանրակրթական դպրոցներում էկոլոգիական կրթության հարցին:

Անդրադառնալով Երևանի էկոլոգիական վիճակի գնահատմանը, քննարկումների մասնակիցները կարևորեցին միջգերատեսչական հանձնաժողովի ձևավորումը, կայուն զարգացման խորհրդի ստեղծումը, միջազգային համաձայնագրերի և օրենքների կատարման վերահսկողությունը:

Քննարկումների արդյունքում վեր հանված խնդիրներն արդեն փոխանցվել են ԱՅԲՎ վերանայման փորձագիտական խմբին:





Հրատարակվում է  
Միավորված Ազգերի Կազմակերպության  
Ջարգացման Ծրագրի աջակցությամբ

ԱՅՈԾ աշխատանքային խումբ  
Տնտեսական բարեփոխումների  
վերլուծական-տեղեկատվական կենտրոն

Ձևավորումը և համակարգչային  
էջադրումը՝ Մ. Միրիջանյանի

Տպագրված է «ՏՈՆԵՐ» ՄՊԸ տպարանում:  
Տպաքանակը՝ 500: